և յետ սակաւուց պայազատեն Հռոմայեցիք
զմեծ մասն աշխարհի նորա։ Վ՚ախձաներ ( )-
գոստոս փառօք մեծաւ գթագաւորութիւն
իւր։

14 Վոհանակէ զաս առանց ուրուք հակառա-
կելոյ Տիբերիոս որդեգիր նորա, որով ծանու-
ցաւ ինքն կայսերութեանն ժառանգութեամբ
'ի տան Աեսարու։ Ընդունի քաղաքավարու-
թեամբ իւրով բազումս տառապեցոյց Տիբե-
րիոս զ՚նովքն, բայց խաղաղութիւն էր մեծա-
պէս յայլ քաղաքս Թագաւորութեան նորա։
Վերմանիկոս եղբօրորդի Տիբերիոսի ցածոյց
զամբոխ վտարանջելոց, մերժեաց զկայսերու-
թիւնն զոր մատուցանէին նմա, եհար զվայ-
16 րագն Ընդհինիոս, արշաւեաց մինչև Ալբիս։
Ընդ որշափ սիրելի եղև ժողովրդեան, նոյն-
չափ խանդաղաց ընդ նա հօրեղբայր իւր. կարձեաց
17 զնա 'ի կենաց բռնաւորն՝ մաշելով զաւուրս
նորա 'ի տխրութեան, կամ որպէս այլք ասեն,
19 արբուցեալ նմա դեղ մահու։
28 Ի հնգետասաներորդի ամի Տիբերեայ ե-
ղևեր Ակրտիչն Յովհաննէս։ Վայ Վրիստոս
30 մկրտիլ յաստուածարեալ կարապետէն. անդ
ինքն յաւետեանական վկայէ 'ի բարձանց որ-
դւոյն սիրեցելոյ. սլանայ հոգին 'ի տիպ հե-
զիկ աղաւնւոյ 'ի վերայ փրկչին. և խորհուրդ
ամենասուրբ Երրորդութեան յայտնի 'ի տե-
ղւոջն։ Ընտի ահա սկսանէր եօթանասներորդ
եօթներորդն դանիէլեան. սկսանէր և Վրիս-
տոս քարոզել։ Ահա այս եօթներորդ վերջին՝
պանծալի և նշանաւոր ցուցաւ յեօթներորդս
անդ՝ զոր որիշ յայլոցն զատուցանէր Դանիէլ.

զի ՚ի նմին հաւատալ ուխտին, և անգործ մնալ պատարագաց հնոյ օրինացն[1]։ Ասէր զեօթներորդս զայս եօթներորդ գաղտնեաց անուանել, յորում հաստատեաց Աբրահամ բազմադիմի սքանչելեօք և մահուն իսկ իւրով զատաբելութիւն իւր և զվարդապետութիւն։ Ասեաւ նա ՚ի չորրորդում ամի 33
քարոզութեան իւրոյ, և սա այս ամ չորրորդ վերջին էր գանխելեան եօթներորդացն. և ահա արդարացեալ է ընդ միջ հատանել մահուամբ նորա հրաշափառ եօթներորդիս։

Ասդ դիւրին է այսուհետև զհամար եօթներորդացն կարգել. նա ապաքէն կարգեցաք եդաք իսկ, և ոչ պիտի այլ ինչ՝ բայց կցել միայն ՚ի չորեքհարիւր յիսուն և երիս ամանն՝ որ չորեքհարիւրորդ ամ շինութեան Հռոմայ, և ՚ի քսաներորդ ամ թագաւորութեան Ադրաշխի մինչև ՚ի թուականն հասարակաց՝ զերեսուն ամս հասարակաց թուականին, որ գլխաւորի յամն հնգետասաներորդ Տիբեբեայ՝ ամ մկրտութեան տեառն մերոյ. որ ՚ի մի ժողովեալ գումարին թիւք ամաց չորեքհարիւր յիսուն և երից. իսկ յեօթանց ամաց անտի՝ որով լնուն ամքն չորեքհարիւր և հինգ սուն, չորրորդն՝ որ բաժանէ ընդ միջ զեօթներորդացն, այն ամ է՝ յորում մեռանի Ադրիատոս.

1 Դան. Թ. 27։

և ահա կանխատեսելքն ի Հռանիկէ բա-
վանդակին յայտնապէս ի չար ամացն զոր
սահմանէ, Հն ինչ պէտք էին արդեօք զայս ա-
րհնաւոր մանրախոյզ լինել, և չէք ինչ որ բուռն
առնէին մեզ Հշդել զայս վայր զկէտն ցուցեալ
ի Հռանիկէ. քանզի և որ կարի անհաւանք
էն, շատացին արդեօք՝ տեսեալ զայն որոյ օ-
րհնաւէտ և է ի միջավայրս երկուց ծայրից։
Կայց աստղք զայս, զի մի որք երանելոյն Թադեոսի
կանխն զակիզեն Թագաւորութեան Հյուսիսոյ
և զնաՀ տեսան մերոյ տուչ ինչ յառաջ կամ
զկնի կարգել, տագնապեացին ի Թիւս ամացն,
և կամ զի որք ժամանակագրական արուես-
տակութեամբ զայսոսիկ ամփոփել ախոր-
ժեն զգաստութեան յուսմնէտս նրբաբանելոյ։

Այս աւասիկ արժան է զիտել առ ի
չեռուելոյ ինչ յարտաքնոցն աւանդից, և առ
ի խելամուտ լինելոյ քան բաւականին նախ-
նի պատմութեանցն Հրէից։ Նակ որ այլ ինչ
վէմք կային ի ժամանակագրութեան մասին՝
չէն ինչ ի կարևորաց։ Հռանիկ յանուանէ
Թէեն Հաշուի ամաց աշխարհի և ծննդեանն
Հրիստոսի պատՀառս կալան ունելք և
ունելք անագան գնել փոքր մի զծննդեանն տես-
չին, և ապա քան նմին երկայնել կամ կար-
ձել զամն կենաց նորա։ Վասկայն մասամբ ըն
Թերցողն խելամտեալ, նակ և արդեօք՝ եԹէ
այս խոհիք ոչ ինչ առնանեն անբնդՀատ Հաս-

տատուիեան կամ կատարելոյ խորհրդոյն Աստուծոյ։ Հարկ է նոյա տալ՝ ի վերնատակաց ժամանակագրութեան՝ որ վեր՝ի վայր տապալէն զեղելոյն կարգս, այլ և թոյլ տալ նմանատոյ գայլմէն վիճաբան լինել ըստ կամս։

Ասլուամ տեղւոջ գործ լինի ցուցանել զանկատաուիեան պահանջանաց ումանց՝ ի մարդկանէ՝ որ պիտին գտանել հաւատեաւ յարտաքնոյն պատմութիւնս զբաժանելիս վարուցն Աստուծոյ և զատաբելոց նորա. որոց ոչ միայն հնազատայր աշխարհ, այլ և զամենայն ինչն՝ ի մէջ առեալ մարդկեղ ընդ նոսին իբրև ընդ առելս անձին իւրոյ։ Սակայն և զայն ևս տեսցուք, զի անկարծելի տուգութիւնք զբաժանին յարտաքնոցն վէպս՝ քրիստոսական կրօնից հանճարոյն. օրինակի աղագաւ յուշ առնել տարին առաջին զեսաւարել լուսաւորչին՝ ի խաչելութեան տեառն մերոյ։

Նաւարն որ ծածկեաց զերկիր զմիջօրէի՝ ի խաչելութեան փրկչին[1], բնաւորական աբեւ թուեցաւ արտաքնոց, որք և գրոշմեցին զպատահումն զայն անմոռաց յիշատակաց արժանի[2]։ Նայց նախնի հաւատացեալքն Քրիստոսի ընդմայեցուց յաղագս պատճէնէնացն վկայելոյ՝ ի մատենագրաց նոցա և՝ ի դիւանս

1 Մատթ. ԻԷ. 45։
2 Փղեգ. ժէ. Ողբոց։ Յաւել. պաք. է։

հաստատակաց՝, յայտնի արարին թէ արտաքոյ էր օրինաց բնութեան խաւարումն այն. քանզի և ոչ ունէր կալ բնաւորական խաւարումն՝ ի լրանալ լուսնի՝ յորում մեռաւ Պրիաոս, նա և՝ ի բովանդակ յաճն այն: Դրաշխաւորէ մեզ Պղեգոն Ձերբազատն Պզրիանոսի, զորոյ զքանան յիշատակեն՝ ի ժամանակին՝ յորում յամենեցուն ձեռս յածէր մատեան նորա, ՚ի միասին ընդ Պսորեաց վիպագրութիւնս վնասէ, որ նորին Պղեգոնի աշակերտ է բանիցն. և ահա ջորոդ ածն երկերիւրորդի երկրորդի ոլիմպիադին զոր նշանակեաց Պղեգոն ՚ի յիշատակագիրս իւր՝ է հաւաստեաւ ածն յորում մեռաւ տէրն մեր:

Յառնէ տէրն ՚ի գերեզմանէ յաւուր երրորդի ՚ի կատարումն ամենայն խորհրդոց. երիւ աշակերտացն. համբառնայ յերկինս յանդիման նոցա. առաքէ զՀոգին սուրբ. կանգնի եկեղեցին, սկիզբն առնու հալածումն, քարկոծի սուրբն Պտեփանոս, ՚ի հաւատս գայ սուրբն Պաւղոս:

37 Յետ սակաւուց մեռանիցն Տիբերիոս: Կաղիգուղա Թոռն եղբօր իւրոյ լեալ նմա յորդեգիս և ՚ի յաջորդ՝ ահացուցանէ զտիեզերս վայրագ և շամբուշ անմտութեամբ իւրով. ՚ի

1 Տերտուղ: Պատմ. ՃԻ. ԻԱ: Որոգ. ընդէմ կելսոս. գիրք Բ. և Ճառ ԼԸ. ՚ի Մոպե: Եւսեբ. և Հերոն. ՚ի Քրոն: Յուլ. Աֆրիկանոս. անդ:

պաշտօն տայ առնուլ զինքն, և հրամայէ 40
կանգնել իւր անդրի՝ ի տաճարին Նրուսաղէ-
մի։ Ի ձեռաց այնպիսւոյ պանդխտի առն զեր-
ծուցանէր զաշխարհն Վներիտա։

Վնազաւորէ Կղոդիոս, Թէպէտ և ապուշ 41
ոք էր։ Վնարգանս դնէ նմա Վնեսալինա կին
նորա, զոր՝ ի մահ դատեալ՝ խնդրէ զնա յետ 48
մահուն։ Վմուանաւորի նմա Վգրիպպինա
դուստր Վներմանիկոսի։

Վոտլով գումարեն առաքեալքն յԵրուսա- 49
ղէմ՝. և նախ առաջին խօսի՝ ի նմա սուրբն
Պետրոս, որպէս և այլ ամենայն ուրեք։ Վնդ 50
՝ի նմին ժողովի ազատս գրեն զհաւատացեալ
հեթանոսս՝ ի խստական օրինաց. տան զվճիռն
յանուն Ժողովոյն սրբոյ և եկեղեցւոյն, զոր
առեալ Պաւղոսի և Բառնաբայ տանին առ
եկեղեցիս, և ուսուցանեն հաւատացելոց հնա-
զանդել այնմ[2]։ Ոչ այս օրինակ վճարեր ժո-
ղովն առաջին։

Հետսամիան Կղոդիոս մերժէ՝ ի ժառան- 54
գութենէ զորդի իւր զՎրիտանիկոս, և որ-
դեգրէ զՆերոն զորդի Վգրիպպինայ, որ ընդ
ընծրկին զեղ մահու խառնէ դիւրահաւան
առն իւրում. այլ դառնացաւ նմա և բոլորի
պետութեան Թագաւորութիւն որդւոյ՝ իւրոյ։ 58, 60, 62,
Հայնժամ Կորքուղոն միայն պանծացոյց զպե- 65, 68

1 Գործ. ԺԵ։ 2 Գործոց. ԺԶ. 4։

տուԹիւնն , պարտեալ զՊարԹեւս և զՆայս ;
66 Ակամբեր Ներոն մարտնչել ընդ Հրեայս ,
և Հալածել զքրիստոնեայս : Ա՛ս առաջին ե-
67 կաց ՚ի կայսերս Հալածիչ եկեղեցւոյն : Նա
սպանանել ՚ի Հռոմ զառաքեալն զՊետրոս
և զՊաւղոս . այլ քանզի խաւն ընդ քրիստո-
նեայս զբնաւ ազգ մարդկան Հալածէր նա , յա-
րեան ՚ի վերայ նորա ամենեքին . իբրև գիտաց
Թէ պարտաւորեցաւ ՚ի ծերակուտէն , չոքաւ
68 զիւրովքին : Յայնժամ բանակ իւրաքանչիւր
կարդայ իւր Թագաւոր . այլ ահագին մարտ
69 պատերազմին մղեալ մերձ ՚ի Հռոմ և ՚ի մէջ
Հռոմայ՝ դադարումն առնէ երկպառակու-
Թեանցն : Նկանին ՚ի մարտի Պաղեա , Ասիա
և Ա՛ֆրիկէոս :
70 Ա՛ռ Եպաֆրանոսիւ ոչ առ պետուԹիւնն
վՀատացեալ . այլ յետին տագնապ կալաւ զՆ-
79 Հրեայս . առաւ քաղաք նոցա Երուսաղէմ և
հրոյ Հարակ մատնեցաւ :
Կարի սուղ խնդաց աշխարհ ընդ Թագաւո-
րուԹի Տիտոսի որդւոյ Ա՛ֆրաեայ : Նոցին
սահեցան արագապէս աւուրք նորա , զորս ա-
ւաղէր նա ինքն յորժամ ոչ փայլէին գործովք
բարեաց : Ետ ՚ի վեր երեւէր զկնի նորա միւս
ոմն Ներոն Պոմետիանոս :
Ա՛ռաջ սա զՀուր Հալածանսն . սուրբն
95 ՅովՀաննէս ապրեալ յեռացեալ ձիթոյ՝ ար-
տաստհմանի ՚ի Պատմոս , ուր գրէ զգիրս

Յայտնութեան : Յետ սակաւուց՝ի հասակի
ամաց լինանիցգայ գրել զաւետարանն՝ յայտ- 95
նեալ միանգամայն աւետարանիչ, առաքեալ
և մարգարէ :

Յայսմ հետէ և անդր հանապազ՝ի հալա-
ծանս եղեն հաւատացեալքն և առ բարեմոյն
կայսերօք և առ վատթարովքն : Հալածէր և-
կեղեցին Վրիստոսի մերթ՝ի հրամանաց կայ-
սերաց և յոխալոյ ընդ նա դատաւորաց, մերթ
՝ի պատճառս աղմկելոյ ժողովրդեան, և մերթ
վճռով կարգելով՝ի ծերակուտէն հաւանու-
թեամբ կայսերաց, կամ ըստ հրովարտակի նո-
ցա, որով յայնժամ ևս քան զևս սաստկանայր
հալածումն և հրդեհէր զամենայն աշխարհ :
Մերթ ևս անհաւատից ժողով՝ որ առ թշնա-
մութեան ընդ եկեղեցին Վրիստոսի խնդրէր
հանապազ զբնաբարձ եղծումն նորա, մոլեգնէր
ևս ընդ ժամանակս ժամանակս յարձակէր՝ի
վերայ նորա : Այսր աղագաւ եկեղեցապա-
տումն մատենագիրք տան կարգեցին զթիւ հա-
լածանացն առ տանեքումբք կայսերօք : Ա-
կայն՝ի բազմամեայ անդ վիշտս չարչարանաց
և ոչ գոյգն ինչ խռովութիւնս յարուցին քրիս-
տոնեայք : Ի վեր քան զամենայն հաւատա-
ցեալս զփորձ առնուին զտանջանաց եպիսկո-
պոսունք. իսկ՝ի մէջ եկեղեցեաց՝ի վեր քան զա-
մենայն եկեղեցիս հալածանս կրեր աստուածապէս
եկեղեցին Հռոմայ, և յոլովք՝ի քահանայա-

պետաց կնքեցին արեամբ իւրեանց զաւետա-
րանն՝ զոր աւետարանէին ընդ հանուր տիե-
զերս ։

96 Սատակէ Վռոմեոխանոս , և հանդարտե
պետութիւնն առ Թագաւորութեամբ Նե-
րուասայ ։ Ընանրացեալ էր առ հասակաւ , և
անբաւական՝ ի տնտեսել զաշխարհն . բայց
կամեցաւ խորագոյնս հաստատել զիշխողու-
97 թիւն՝ ընտրեալ իւր յաջորդ զՏրայեանոս ։
98 Ուրախ լինէր պետութիւնն ընդ քաջգնն պը-
սակաւորն , որ համակ՝ ի խաղաղութեան պա-
հէր զտէրութիւնն , և յաղթանակէր արտաքոյ ։
Ընկնա իւր կալեալ , պարտ է ինձ՝ ասէր նա՝
այնպէս գնալ ընդ հնազանդեալս իմ , զոր օրէ
նակ ցանկայի արդեօք թէ վարիցին ընդ իս
իմ Թագաւորք յորժամ լինէի ես այր սոսկա-
102 կան ։ Ուստեաց զՎռակիացիս հանդերձ Թա-
գաւորաւ նոցա Վռեկեբաղաւ . ընդարձակեաց
106 զտէրութիւն իւր յարեւելս . Թագաւոր եա
113, 116 Պարթեւաց , և արկ զնոքօք զահ և զերկիւղ
հռովմէական զինուց . բայց աւուրս , զի այս-
պիսի Թագաւոր հոյակապ՝ զակատեալ՝ ի չա-
բաչար ախտս զինուց և տուփանաց՝ կամակո-
րեր զարդարութիւն ։

Ո՛վ կիենցաղօրեայ աւուրս սորա փոխանակե-
117 ցին աւուրք Վէրիանոսի խնդակամքն ընդ
120 արտմանեանաց ։ Ո՛վ զուշացաւ նա հրահանգաց
կրթութեան զօրականին . եկաց և ինքն ըստ

կարգի զինուորաց՝ պարկեշտացեալ և՛ ի կե-
րակուրս։ Ոչխարեաց գառատաց, բարգաւա-
ձեցոյց զարուեստս և զՅունաստան՝ որ գայ-
եանին կացեալ էր արուեստից։ Զարհուրե-
ցան՝ ի նմանէ և՛ ի զինուց նորա ազգք խու-
ժադուժք։ Ընդ ինեաց վերատին զնդրուսապէմ,
և կոչեաց զնա Յիւր անուն, որով կոչեցաւ
Նրուսաղէմ և Երեւսաղէմ՝ և՛ քաց վտարեաց
անտի զնբրայեցիս զմիշտ ապստամբեան՝ ի կայ-
սերաց, և վերիժառու անողոքելի յայտնեցաւ
ապառումն ազգին։ Սակայն խրճնացոյց ըզ-
գեղափայլ թագաւորութիւն իւր անգթու-
թեամբ իւրով և շամբուշ սիրոյն, և նշաւա-
կեաց զամենայն աւուրս նորա անառակն Ան-
տինոս սիրեցեալ՝ ի նմանէ, զոր և աստուա-
ծացոյցն իսկ։ Նայց և քաւեաց իմն զյանցանս
իւր, և բարձրացոյց զանկեալ փառն՝ ընտրեալ
իւր յորդի զՅուստինոս Պիոս. որ և սա առ
յորդեպիս զՄարկոս Ներեղիոս զհանճարե-
ղըն և զիմաստասէրն։

Վայրեցան յերկոսին և՛ ի տոա կրկին չըք-
նաղ բարոյք. հայրն հետամուտ էր խաղաղու-
թեան, բայց կազմ և հանապազ՝ ի պատերազմ.
իսկ որդին՝ ի պատերազմունս եկաց հանա-
պազ, բայց յօժարամիտ նոյնպէս՝ ի ընդհել
զխաղաղութիւն թշնամեաց և աշխարհի. զի
խրատեալ՝ ի հօրէն, առաւել մեծ վարկանէր
ապրեցուցանել զմի ոք՝ ի քաղաքացեաց, քան

123
123
126
130
135
138
139 161

բնութս ՚ի ծննդենէ ստանանել : Պարթեւք և
162 Մարկոմանք առնին զչափ քաջութեան Մար
169 կաստ Ներեղիոսէ : Մարկոմանք սերկեին ՚ի Կոերը
180 մանացւոց , զորս նուաճեաց Ներեղիոս բոլո-
րովիմբ մինչև մեռեալ էր : Ն՚ր լաւութեան
երկուց Ներոնենեանց՝ և ՚ի լուր անուան նո-
ցա զրպային Հռոմայեցիք :

Ո՚չխաս պանծալի անուանն ոչ զօրեաց
ջնջել վատութիւն Կոմոդոսի Մարկոսի Ներեղիոսի , որ աճապարակից էր նման.
և ոչ դարձեալ անառակութիւն Կոմոդոսի
որդւոյ նորա և յաջորդի : Ա՚ա անարժան որդի
հօրն առաքինւոյ՝ մոռացաւ զխրատս նորա և
զօրինակ . ոսոխ եղեն նման ժողովրդիք և
ծերակոյտն , և դաւեցին զնա տարփածու նո-
րա և որ միանգամ առաւել մեծութիւնք էին նո-
192 րա և պաշտէին զնա : Ո՚ չ յաջորդ սորա զՊեր-
193 տինաքս զհզօր պահպանիչն կարգաց և հրա-
հանգաց զինուորութեան՝ սպան ապերասան
զօրականն , այն որ սակաւ մի յառաջ ՚ի գա-
հոյն արքունի ամբարձ զնա :

Ն՚ վաչառ հանին զկայսերութիւնն զօրա-
կանք , և յանդգնեցաւ զնել զայն Սուլպիոս Յու-
լիանոս իրաւագէտ . այլ հատոյց եւս ընդ այնո-
194, 195, ւիկ զկեանսն : Սպան զնա ամբիծեցին Մեսե-
198, 2՚ն լոս , խնդրեաց զվրէժ Պերտինաքսայ . խաղաց
յարևելից յարևմուտս , յաղթանակեաց Յ՚
207, 209 սրիս , ՚ի Պաղեստս , և ՚ի մեծն Նրիտանիս :

Յաղթութեամբք իւրով՛ք տիրել փութա-
պէս աշխարհաց՝ զուգապանծ երևեցաւ մե-
ծին Աեսարու. այլ ոչ եղև նմանող գթոյ նո-
րա։ Ընդաւսկան եղև արկանել խաղաղու-
թիւն՝ ի մէջ որդւոց իւրոց։ Նասխանոս, որ
և Կարակալլա, երէց որդի նորա՝ անմիտ նա- 208
խանձաւոր Ալեքսանդրի, վաղվաղակի յետ մա- 211,212
հու հօրն սպան զեղբայր իւր զԱետա՝ որ և նա
կայար էր, ՚ի գիրկս անդ մօր իւրեանց Յուլի-
այ։ Խժաբար վարեաց զկեանսն, և գործեաց
բազում արեան Հռոպաղիս, որով և ինքն զՀա-
ւատսն ընկալաւ սատակումն գառնասմահ։
Ա՛յրապատ Աեւերոս հայր նորա՝ Ընտանինոս
անուն կարդաց նմա, յանկուցանելով ՚ի նա
զիւրս զօրականսն և ժողովրդեան. ոչ գիտաց
հնգաձեսն փառաց անուանն լինել նախան-
ձաւոր։ Ընտ նմին և սատկին Հելիոգաբաղ, 218
կամ ուղղագոյն ևս՝ Ընդգաբաղ որդի նորա,
կամ որպէս կարծէրն, յինքն գողացաւ զա-
ռաջինն զիւրս զօրականաց Ընտոնիոս յոր-
ջորջմամբ, և պարտեաց զԱակրինոս. այլ վաղ
վաղակի սոսկացան ընդ նա ամենեքեան վասն
գարշ անառակութեանց նորա, և սատակա-
մահ եղև։ Ապաւք եղեն աւուրք Ընդգաբա- 222
դի Աեւերոսի որդւոյ Ասամիի յազգականու-
թենէ Հելիոգաբաղայ ՚ի խնդութիւն աշ-
խարհի։ Ցրտասնջ ունէր հանապազ, զի մեծ
ևս վիշտք էին նմա չկարել զզօրս իւր սանձա-

հարել, քան զԵշնաւիան վաղթարեալ։ Այլ
նորա որ առաջնորդ էր նմին, պատճառք եղև
մահու նորա, որպէս եղեալ էր պատճառ փա-
235 ռաց նորա։ Ի սուրբ Աթոռոյն պարսիկ ընտ-
պանեալքն զԱթոռանն զտէր իւր զԵղերջինն ի
235 թագաւորս Պարթեւաց, և կանգներ զԹա-
գաւորութիւնն Պարսից յարևելս։

Ի նմին ժամանակի ծաւալեր յընդհա-
նուր տիեզերս նորածնեալ եկեղեցի՝. և ընդ
ոչ միայն զարևելս ուր ծնաւ, զՊաղեստին
ասեմ, զԱսորիս, զԱրաբիս, զԱրաբքն Ասիա,
և զԱլեքսանդրիա, այլ և զարևմուտս ողջոյն, զԻ-
տալիա, զգանազան ազգս Գաղղիոյ, զամենայն
գաւառս Սպանիոյ, զԱֆրիկէ, զԼեռնանիա,
զմեծն Բրիտանիա մինչև ցտեղիս՝ յորս ոչ հըն
էեցին և ձայնք զինուց Հռովմայեցւոց. նոյն և
զաշխարհս արտաքոյ պետութեան, զՀայաս-
տան, զՊարս, զՀնդիկս, և զազգս խուժա-
դուժս, զԱրմատացիս, զԱռկեացիս, զԱկո-
թացիս, զԱբրիտանացիս, զԳետուլացիս,
և զանմատոյց կղզիս անգամ։ Նոքա արիւն վը-
կայից յուսեալ և զոյծեր զեկեղեցի։ Ի
407 Տրայեանոսէ մատնէր ժանեաց գազանաց
սուրբն Ինդնատիոս եպիսկոպոս Աստիոքայ։
Պատրեալ թշուառաբար Արիոսի Ալեք-
սան՛ի չարախօսից անտի քրիստոնէից, ի մահ

1 Տէրտուղ. ընդդէմ Հրէից. գլ. Ի. Պապաս. Լ։

մանեկը զսուրբն Յուստինոս զիմաստասէրն 165
և զՋաւտագոս քրիստոսական հաւատոյ : Ի ա-
րա աւուրս՝ ի հուր դատէր՝ ի հասակի ամաց 167
ութանից և սուրբն Պօղիկարպոս եպիսկոպոս
Զմիւռնիայ աշակերտ սրբոյն Յովհաննու :
Տարան խնամ չարչարանաց և սուրբ վկայքն՝
որ կատարեցան՝ ի քաղաքն Ռուդոն և՝ ի Վէն 177
նա, գնացեալք զՀետ սրբոյն Յուստինոսի Հայ-
րապետի իւրեանց, որ յայնժամ ամաց էր ին-
նընից : Ի նոյն ժամիս փառօք իւրովք եկե-
ղեցի Վաղենտիայոս : Սուրբն Ներանոս աշա- 202
կերտ սրբոյն Պօղիկարպոսի և յաջորդ սրբոյն
Յուստինոսի՝ ի նախանձ վառեալ նախատրփին իւ-
րոյ, վկայեր առ Աեւերոսիւ հանդերձ բազմու-
Թեամբ հաւատացելոց յեկեղեցւոյ իւրմէ :

Ընդ ժամանակս ժամանակս զինքեր առ
սակաւ մի հրդեհ հալածանաց : Ի տագնա-
պել Անտիոսի Ներեղիոսի յերաշտութենէ 174
ջուրց՝ ի Վերմանիա՝ եւտուն երկինք անձրև
հանդերձ փայլատակամբք յարբուցումն զօրա
կանին յաղօթից լեգէոնի զօրացն քրիստոնէից,
որով երկեան թշնամիքն երկիւղ մեծ. և՝ ի յի-
շատակ սքանչելեացն կոչեցին զանուն լեգէօ-
նին Ե՝ անթաձիպ, կամ Թէ ասել հաւատաւո-
ցին զկոչումն նորա : Պակուցեալ ընդ այս և
կայսերն՝ զոլութենսն գրեաց առ ծերակոյտն
վասն քրիստոնէից. այլ հմայքն հաւանեցուցին
զկնի զկայսրն՝ դիցն օգնականութեան և հայ-

ցուածոց իւրեանց զրել զաքանչելին, ուր և
ոչ՝ի միտս անգամ անկեալ էր նոցա աղաչել
վանն այսր զաստուածս։

Այր երբեմն զի վանն այլ ինչ պատճառաց
քաղցրանային հեթանոսք ընդ քրիստոնեայս,
և առ ժամանակ մի դադարէր հալածումն։
Նայց առ մնապաշտութեան՝ յորմէ ոչ գիտաց
հեռի կալ Մարկոս Աւրելիոս, և առ հասա-
րակաց թշնամութեան ընդ քրիստոնեայս և
ծանր ծանր զրպարտանաց, բոլորքն էր անդրէն
՛ի վերայ նոցա կատաղի ցասումն հեթանոսաց,
և վտակս ուղխից գործէր ընդ բոլոր երկիր պե-
տութեան արիւն վկայից։ Ընդ արի շահատա-
կութեան քաջ նահատակաց աձէր և վարդա-
պետութեան հաւատոց։

245 Ի Մեւերոսէ և զկնի պայծառացոյց զե-
կեղեցի գրովք իւրովք Տերտուղիանոս երէց
կարթեգինացի, և յաղթող առաքեաց զնա
հրաշալի պատասխանատուութեամբն. բայց
ելիք զկնի՝ կուրացեալ յամբարհաւաճ խառամ
բեր կենաց, և պատրեալ՛ի ցնորից սուտ մար-
գարէին Մոնտանոսի։ Իբր առնուին ժամա-
նակօք յայտներ զՆութիւնս հեթանոսաց
կշտամբեալ զնոսա սուրբ քահանայն Կղեմէս
աղեքսանդրացի։ Ո՞չ համբաւի հարաւ ընդ հա-
նուր եկեղեցիս անդատին՛ի մանուկ տիոց և
Աստիճանէս ոտի սրբոյ վկային Լեւանիդեայ՝
ուսուցեալ մեծամեծ վարդապետութիւնս,

յոյս եմոյծ և ակնածանաց մոլորութիւնս։ Ի ծառայութիւն նուաստ հաւատոյ խնամատարն Աքմանիոս զպղատոնական փիլիսոփայութիւն, և ակն ածէին ի նմանել և հետեւանսք։

Աչս վասն պատճենահանիչք, պնդատիկեանք և այլ խումբք խումբք ամբարիշտ պաղանդաւորաց՝ ի գիմի հարկանելն աւետարանին ստոյգ աւանդութեամբք իւրեանց։ Յայնժամ՝ ի ձայն կատ հան ընդդէմ նոցա տուրբն Աբրահամ զառանդութիւնս և զվկայութիւնս առաքելական եկեղեցեաց, և՝ ի վեր քան զամենայն զեկեղեցւոյն Հռոմայ զնախաթոռն ամենեցուն՝ հինեալ յառաքելոց սրբոց՝ ի պետրոսէ և՝ ի պաւղոսէ։ Ի նոյն արիացաւ և Տերտուղիանոս[1]։ Ոչ զդրդեցաւ եկեղեցի Աւստուծոյ յաղանդոց և՝ ի հերձուածոց և՝ ի զլորմանէ երևելի երևելի վարդապետաց իւրոց։ Աչինակս տուրբ և պայծառ են կրօնք նորա, մինչ զի և Թշնամիքն գովութիւնս խօսին ընդ նմանէ։

Ահաւիկ շուինդն խառվութեանց ծագէր յայնժամ՝ ի պետութեան Հռոմայ։ Աաքսիմիանոս Թէպէտ և գոթացի յազգէ՝ սպանեալ զԱդեբանդր, բռնակալէ զաշխարհն։ 238
Ընդդէմ հանէ նմա Ծերակոյտն կայսերս չորս,

1 Երան. ընդդէմ հերձ. գլուխ ի. գլ. ա. ը. ի։
2 Երան. ընդդէմ հերձ. գլ. լի։

236, 237 որոց ոչ յերկարեալ ամն երկուս՝ մեռանէին ա-
238 մենեքին . ընդ որս և երկոքին Պորփիանեանքն
հայր և որդի՝ սիրելիք ժողովրդեան Հռով-
մայ : Նոքա կրտսերն Պորփիանոս որդի սոցա՝
թէպէտ և՝ ի մատաղ հասակի՝ զբազմաժամա
նակեայ աչեաց եցոյց զիմաստութիւն . հազիւ
242 եղ յակաստանի յերեսաց Պարսից գլատեթա-
բեալ պետութիւնն՝ ի բազում երկպառակու-
թեանց . էառ՝ ի նոցանէ և բազում ամուր
քաղաքս : Նա Փիլիպպոս արաբացին սպան
զնաղաղասեր պսակաւորն զայն , և վատու-
248 թեամբ հաշտութիւն խօսեցաւ ընդ Շապ-
հոյ Պարսից արքայի , զի մի նկուն լինի յերե-
249 սաց երկուց կայսերաց՝ զորս ընտրեաց ծերա-
կոյն գինի միաբանց : Նա առաջին՝ ի կայսերս
հրաժարեաց դաշամբք՝ ի վիճակաց ինչ երկ-
րի պետութեան : Պատմի ինձ թէ ընկալեալ
էցէ սորա զաւետարանն՝ ի ժամանակին յո-
րում յանկարծակի՝ ի լաւագոյնն շրջեցաւ .
բայց հաւաստի է , զի թևարկէր նա զքրիս-
տոնէութիւն : Պատանեալ զսա Պեկոսի , զոգես
՝ի քէն վրիժուց գժնդակ ևս քան զառաջինան
սաստկացոյց զհալածումն՝ ի վերայ քրիստո-
նէից [1] :

Նոյց եկեղեցին ձգէր տարածանէր ընդ ա-
մենայն կողմանս , և առաւել՝ ի Պաղեստինա [2] :

1 Եւսեբ . պատմ . եկեղ . գլուխ է . և . լթ : 2 Գրիգ . Տուրոնէն . պատմ . Գաղղ . գլուխ ա . և . կը :

Ւսակ Պետրոս զրաւեցաւ վաղվաղակի՛ ի կենաց, որ քաջութեամբ՛ ի թիկունս կայր պետութեան։ Ալ աղաւեւիկ լինելն և Պաղղոս և Ալ ուսմանոս. իսկ Նմեղնանոս այն լինչ երեւեալ և պակասեաց։ Նտուն զկայսերական իշխանութիւն Ալ աղերիոսի, զոր արկ զանձամբ արդոյ ծերունիս ըստ արժանի վաստակոց իւրոց. խստութեամբ գնաց սա ընդ քրիստոնեայս միայն։ Ի՛ւր սուրբն Ստեփանոս հայրապետ Հռոմայ, և սուրբն Ալխպրիանոս եպիսկոպոս Կարթեդոնի՝ յետ բազում հակառակութեանց որ ոչ հերձին զհաղորդութիւն, ընկալան զմարտիրոսականն պսակ։ Ալ ընդակ սրբոյն Ալխպրիանոսի՝ որ հերքեր զիշխութիւն հերեսիոսացն, լինչ ոչ ստնանեաց նմա կամ եղեալ։ Պետեցւոյն։ Պետեկիկ կարծեցեալ փաստիցն, և իմաստութեան կամ աւագութեան հոյակապ առն՝ որում ձայնակից էին և այլ ոչ սակաւ արք երեւելիք, զդէմ կալաւ միայնակ աւանդութիւն սրբոյ գահին։ Ակայն մեծաւ պոյն չարիս գործեաց հակառակութիւն Աբելի՝ որ չիտեր՛ ի մի զերիս աստուածային անձինս, և գնէր Ի՛նստուած անձն մի եռանուն։ ( )տարոտի այս վարդապետութիւն զարհուրեցոյց զեկեղեցի. և սուրբն Պետրոս պատրիարգ Ալեքսանդրու՛ ի վեր եհան առքահանայապետն սուրբ Ալեքսիոս երկրորդ ըզ

մելոտութիւն հերեսիովտասեան՝։ Այլ ասւ
տուածարեալն քահանայապետ հետևեր՝ ի
մօտոյ հատմամբ գլխոյ նահատակին սրբոյն
Ստեփանոսի նախտրպի իւրոյ, ուծ և առաքէ
նուիրեան Թողեալ հանդէս սարկաւագի իւ-
րում սրբոյն Լաւրենտիոսի։

Ընդ այնու ժամանակօք է տեսանել զյայտ-
238—260 ձակումն սպգաց խուժադուժից։ Ընտրգան-
տեանք միաբան ընդ այլ ժողովուրդս Գերմա-
նիոյ, և ընդ Գոթացիան որ երբեմն Գետք
անուանէին, և ընդ սպգս բնակեալս զկողմամբք
Աքսինեանն Պոնտոսի և յայնկոյս Գանուբ
գետոյ, հեղեալ զեղուին յԱյրոպա. զրոհ ե-
տուն և Գկնուացիք ասիականք և Պարսիկք
յարևելս, և հարին զԼաղենտիանոս. զոր և
կալան յետոյնենդութեամբ, և Թողացուցեալ
զնա յօրհաս վախճանին՝ի դառն գերութեան
մոլեգնեզերծ արարին զկնի յիշատակ քաջու-
թեան կանգնել պատառոտեալ մորթով նո-
261 րա։ Նակ որդի սորա և գահակից Գաղենտոս՝
վատութեամբ իւրով կորոյս զպետութիւնն
ողջոյն, զոր բաժանեցան երեսուն բռնաւորք։

Գերազանցեաց՝ի սոսա զամենեքումբք
264 Ուդենատոս արքայ Պալմիրայ որ էր քաղաք
հին՝ի Ասղամոնէ շինեալ. Թափեաց նա՝ի ձե-
ռաց բարբարոսաց զկողմանս արևելից, և Թա-

1 Եւսեբ. պ-փմ. Եկեղ. գիրք է. գլ. ը։

պատրեաց անդէն։ Ի գաղջուդէր զօրուն ՚ի միասին ընդ նմա և Օ՚ենոբիա կին նորա, որ և զինի մահու առն իւրոյ զօրավարէր միայնակ. և անուանի եղև ընդ ամենայն աշխարհ, զի ծնորդեաց զզգաստութիւն պարկեշտութեան ընդ գեղոյ, և զիմաստութիւն ընդ կորովոյ։ Ազգիս երկրորդ, և յետ նորա Ի՚րեղիանոս 268
բարեվարդեցին զիւրս թագաւորութեանն. և 270
մինչդեռ սոքա մեծամեծ յաղթութեամբք խոր-
տակէին զՊոլմա և զԳերմանացիս, տքնէր
Օ՚ենոբիա վասն որդւոց իւրոց ՚ի վերայ քա-
ղաքացն զորս առեալ էր հայր նոցա։ Պշխոյս
այս միտեալ լինի էր ՚ի հրէութիւն անդր, զոր
կամեցեալ յինքն որսալ սամոստացին Պաւղոս՝
եպիսկոպոս Անտիոքայ, այր փառամոլ և խոր-
վայոյզ, զառաջեցոյց զնա ՚ի հրէամիտ մոլորու-
թիւն իւր ՚ի վերայ Ի՚րիստոսի, զոր մարդ լոկ
դաւանէր ՝։ Յետ պատրուակելոյ բազում
ժամանակս զայլաձայն վարդապետութիւնն իւր,
ըմբերանեալ դատապարտեցաւ ՚ի ժողովին Ան-
տիոքայ։ Օ՚ենոբիա զդէմ կալաւ Ի՚րեղիա- 273
նոսի մարտիւ պատերազմի, և նա ոչ ամօթ
համարեցաւ ձաղել ՚ի հանդէս յաղթանակի 274
զկին մարդ՝ որ այնչափ արիացաւ։ Յանդուգն
պատերազմունս գիտաց Ի՚րեղիանոս զգուշա-

՝ Եւսեբ. Պապ. Եվէղ. գլուխ է. գլ. իէ, եայլն։ Ամիան. յղ. ժդ։ Թէոդորէտ. յղ. Հեյ. Աոոպ. գլուխ ը. գլ. ը։ Նիկեփ. գլուխ ջ. գլ. իէ։

նալ հրահանգաց զօրականին. և յայտնի առյարմ՝ զի յորժամ զհետ կրնթեցի Թագաւոր որ նախնեի կարգաց և սակաւապետութեան առաջ նոցն, մեծամեծ բանակս զօրաց կազմեցուցեալ քոյ և արտաքոյ առանց ինչ ծանրանալոյ պատուհասն։

Ոչինչ՝ ի նմին ժամանակի սկսանելոյ անհաւատ լինել ազգին Պրանկաց՝ Հնոյն սովս ժողովուրդք Պելեմնեից, և բնակիչն զամուրքն Հռենոսի. և յուզանէ անուն նոցա՝ զի առ սէր ազատութեան՝ ի մի միաբանեալ էին։ Պրեզիանոս չև և ամբարձեալ՝ ի կայսերութիւն՝ եհար զնոսա, և՝ ի կայսերութեանն ահ եղիւզին նոցա կայր՝ ի վերայ նոցա։ Պայլ ինչն առելի եղև վասն արիւնհեղութեանցն։ Պրոմուսեցիքն նոքա խիստ դարմանակալ եղև նմա։ Որք միանգամայն խնդալոյն վասն կենաց իւրեանց, ապաշխարելոյն դառնանալ գնա, և առաջնոյդ դարմանակալացն եղև առնեղպիր նոցա, ուրումն սպառնալեալ երդնա զնմա։ Տեսեալ զոխանոց զի անհնոյն իշխանք զօրուն միաբանեցին՝ ի մահ նորա, ոչ կամեցաւ անուանել զոք կայսր, զի մի ամբարձցի՝ ի գահ անդր որ՝ ի սպանողաց անտի Պրեզիանոսի. և յառաջին իշխանութեանն հաստատեալ ծերակուտին՝ ընտրեաց կայսր զՏակիտոս զայրն պատկառե-

275

1 պոփմ. Աֆ. Աբիպ. դ. ն. Փղտ. դ. թ. Պոտ. դ. ժա. ժբ. Փկտմ. և այլն, դ. ժդ.

լի հաւատիւ և առաքինութեամբ։ Որպէս ա-
ռեալն և զաս վարդապետին վասն կերպարանա-
պղծականին իւրոյ, որում հաւատացեալ էր
զհրամանատարութիւն զօրուն։ Յաղագս որոյ
՚ի խռովութեան լինիք յուզելոյ սպանին և զէր 276
կռանան ՚ի միասին, թագաւորեալ նորա ամիս
մի։ Ո՞յր միայն շահեցաւ նա ամբառնալովն
՚ի կայսերութիւն, զի երազեաց և ևս զմահ իւր
Ո՞յ կայսերութիւնն ըստ յաջորդութեան օրի-
նի պահանջեաց էջբայր նորա Վլադիանոս, զի
ինքն էր մերձաւոր ժառանգ։ այլ այսմ նրա-
ւանց չեղև ոք ոչ ի սակս առնոյր։ սպանաւ Վլա-
դիանոս, և բռնադատեաց զօրականսն զՎլա-
դոս առնուլ զկայսերութիւնն, թէպէտ և ա-
պատնայր առնձաւորել զնոսա։

Ի առաձեաց զամենեսեան ընդ ձեռամբ զօրա-
գլուխն քաջ։ ՚ի բաց վանեաց զազգս Վեր-
մանեացոց և Վրանկաց՝ որ խորհէին հօրդան 277
տալ ՚ի Վռաղիա, և զարհուրեցոյց ՚ի ձայնէ
զինուց Յռոմայեցւոց զօրս միանգամ խռո- 278
ժադուժ ժողովուրդք էին յարևելս և յարև- 280
մուտս։ Ո՞չ թէ զօրս պատերազմող էր այլն,
բայց ցանկայր խաղաղութեան. և յուսացոյց
նոցա զգեստութիւնն Թէ այնուհետև ոչ էնդունա
պիտոյ բանակէ զօրականաց. ընդ որ զառնա-
յեալ զօրացն, որ ասէին և ընդ խիստ օրէնսն,
լուծին զնա ՚ի կենաց. այլ սուգ լինէ զկնի ա- 282
պաշտեալ ընդ անօրինել խրեանց ՚ի վերայն

արքայն , մեծարեցին զնշխատակ նորա , ընտրեալ նմա յաջորդ զՎարոս՝ զնախանձաւորն
կարգաց զննութեան իբրև զնա ։

283 Այս ինքն մեծազօր կայսր խնդրեաց զքէն վրէժուն նախորդին իւրոյ . նկուն արար և զազգս բարբարոսաց , որ խրախուսեալ էին ՚ի մահ Պրոբոսի ։ Ետուն ընդ արևելս հանդերձ որդւով իւրով՝ Նումերիանոսիւ հարկանել ընդ Պարսիկս . իսկ զերկոցա որդի իւր զՎարինոս՝ զոր կեսար անուանեաց, երկրորդ իշխանութեանն այնու կարգեալ զնա և անընդմիջ ժառանգ կայսերութեանն , արձանացոյց ընդդէմ Թըշնամեաց զկոզմամբք հիւսիսոյ ։ Ոտքացոյց Կապոս զարևելս առ Տասարակ . Հնազանդեցան նմա Ալէքսանդրեցիք . ոչ կարացին կալ առաջի երեսաց նորա և Պարսք անմիաբանք ։ Այլ մինչդեռ առնէր խռնարհէին նմա, շանթահար կասեցուցին զնա երկինք ։ Ետուսուեաց զնա դառնապէս՝ Նումերիանոս, մինչ տակաւին մի և կորուսանէր զլոյս աչացն ։ Նաբէ, յոր ոչինչ ոչ մտաբերէ զահասիրութիւն . Ապէր ոչ միայն չողոմեալ յաղէտս փեսային իւրոյ,
284 այլ և սպան զնա ։ Նայց Դիոկղետիանոս քէն նախնդիր եղև մահու նորա, և եհաս յետոյ ուրեմն յինքնակալութիւն, որում հետամուտ էր տարիմամբ ։ Ի միտս եղև զգաստացեալ
285 Թուլամիան Կարինոս, և եհար զԴիոկղետիա նոս . բայց մինչդեռ հալածական տանէր զփա

խոտեայս, սպանաւ յումեմնէ հիւրոցն՝ զորոյ պղծեալ էր զկին։ Ո՞ւստի օրինակ բարձաւ՝ի պետութենէ այրն անագորոյն և շամբուշ քան զամենեսեան։

Ի՝նաջութեամբ կալաւ Կոստղետիանոս զպետութիւնն, բայց անընդհատելի էր ամբարտաւանութիւն նորա։ Կամեցեալ զդէմ ունել բազմութեան թշնամեաց՝ որք յառնէին շուրջանակի ներքոյ և արտաքոյ, կացոյց ընդ իւր հինգհազարեակ զՈ՝աքսիմիանոս՝ զգահ- 286
երիցութենն անձին կալեալ։ Ո՝նքնակալք երկաքանչիւր անուանեցին և կեսարս. և սոքա 291
էին Կոստանդ Կ՝ոստաս, և Կ՝ոստղերիոս։ Հազիւ ուրեմն մարթացան չորեքին սոքա բաւել ընդդէմ անհնարին պատերազմացն։ Նմանք Կոստղետիանոս զՀ՝ռոմի, զի ետես զքաղաքն ար- 297
ձակերասան յոյժ, և երթեալ բնակեցաւ՝ի Նիկոմիդիա, և հրաման տայր անդ՝ի պաշտօն առնուլ զնա որպէս սովորութիւն էր արևելեայց։ Ո՝այց Պարսից՝ի պարտութիւն մատնեալ յերեսաց Կոստղերիոսի, թողին՝ի Հռոմ մայեցիան զաւառս մեծամեծս և թագաւորութիւնս ողջոյն։ Ո՝ւ այսպէս յաջողեալ Կոստղերեայ, փոքր վարկանէր զկեսարն անուն, ոչ և կամեցեալ հնազանդել այլում. սկսաւ նախ առ արկանել Ո՝աքսիմիանոսի. և քանզի բազմամեայ հիւանդութեամբ տկարացեալ անկաւ Կոստղետիանոս՝ի զօրութենէ, բուռն

արար նմա Վաղերիոս՝ թէպէտ և փեսայ նո-
րա էր՝ թողուլ զկայսերութիւնն [1], որում բըր-
նադատեալ նմանող լինէր և Ա՛աքսիմիանոս:
304 Ընդհաւ կայսերութիւնն ի ձեռս Կոստան-
դեայ Քլորոսի, և Վաղերիոսի, և ի սոցա
տեղի Դիոկղետիանոս և Ա՛աքսիմիանոս մա-
տուցանէին կեսարս զԱեւերոս և զԱ՛աքսիմի-
նոս: Սուղ ինչ ժամանակ երջանկացան Վաղ-
գիա, Ասանիա, և մեծն Բրիտանիա, վիճա-
կեալք Կոստանդեայ Քլորոսի: Ընտեսը սա
զհարկահանութիւն, և ամբաստանեալ որպէս
թէ սպառեալ զգանձս արքունի՝ եցոյց զի բա-
զում էին նորա գանձք՝ի յօժար կամս և՝ի միա-
մտութեան հնազանդելոցն նմա: Նոյնպէս այլ
կողմանք պետութեանն տագնապէին յոյժ ընդ
ձեռամբ յոլովից ինքնակալաց և կեսարաց.
յաձախէր թիւ ոստիկանաց ընդ բազմանալ
սոցա. իսկ ծախուց և զրկանաց ոչ գոյր չափ և
սահման:

Դրեթէ լինէր փոքրն Կոստանդիանոս որդի
Կոստանդեայ Քլորոսի [2], այլ ընդ իշխանու-
թեամբ էր Վաղերիոսի, որ նախանձ բերեալ
ընդ փառան՝ ի սկսեալս վտանգս մատնէր զնա:
Ձարկ ի վերայ կայր նմա գազանամարտ լինել
էգերև ի հանդէս խաղուց. այլ Վաղերիոս

1 Ընտեր. պոպմ. էիէղ. գիրք ը. գլ. ժէ: Բան կոսպանդ. տո-
սոբէ ծոդ. իբ: Ագաթանա. յղ. Մահ. Հալածք. գլ. ժէ. ժը:
2 Ագաթանա. յղ. Մահ. Հալածք. գլ. իդ:

ահագնագոյն քան զպատանն էր։ Ծառեալ Պօտանդիանոսի զանձն իւր ի ձեռաց նորա, գտանէ զհայր իւր ի մահիճս մահու։

Ընդ այն աւուրս Նաբսենտիոս որդի Նաբ- 306
սիմիանոսի փեսայացեալն Գաղերիոսի՝ թա-
գաւորէ ի Հռոմ հակառակ կամաց աներոյ
իւրոյ. և ի վերայ այլ աղէտից պետութեան
յաւելան և երկպառակութիւնք։ Պատկեր
Պօտանդիանոսի՝ որ յաջորդեաց զհայր իւր,
առաքեալ ըստ սովորութեան ի Հռոմ, մեր-
ժեցաւ ի հրամանաց Նաբսենտիոսի. զի նշա-
նակ էր ընդունելոյ զնորատակ կայսերն՝ ընդ-
ունելութիւն պատկերաց նոցա։ Յամենայն
կուսէ ի մարտ պատրաստէին։ Նաբսենց
Գաղերիոս՝ի վերայ Նաբսենտիոսի զՆեւերոս 307
կեսար, որ գողացոյց զնա ի Հռոմ[1]։ Ի մե-
ծի անդ երկիւղին կամեցեալ Նաբսենտիոսի
թիկունս առնել իւր, կարդաց յօգնութիւն
զհայրն զՆաբսիմիանոս։ Յայնժամ ալեօրն
փառամոլ եւթիք զմիայնութիւնն՝ յոր ակամայ
կայր, և շատ ջանացաւ միաբանել ընդ իւր և
զաթոռակիցն զԻսկղետիանոս, որ նոյնպէս
մեռանէր՝ մշակութեան բուրաստանաց պա-
րապետ ի Աղրնա։ Ի լսել զանուն Նաբսիմի-
անոսի՝ որ այս երկրորդ անգամ ամբարձաւ ի
կայսերութիւն, Թողին լքին զՆեւերոս զօրա-

1 Լակտ. յղ. Մահ. Հալած. զԼ. ԼԷ. ԼԸ։

կանք նորա: Հրամայեաց ալևորն սպանանել զնա, և կամեցեալ զօրանալ՝ի վերայ Դաղեբրիոսի՝ եւ կնութեան Կոստանդիանոսի զփաստա զդուստր իւր: Հարկ՝ի վերայ կայր և Դաղերիոսի՝ յետ մեռանելոյ Աեւերոսի խընդրել զայլ ոք իւր օգնական: Նմին երի անուա նէր կայսր զՅկիանոս[1]: Ի խոր խոցեցաւ ընդ այն Աաքսիմինոս. քանզի ինքն էր կեսար, և ինքեան պարտ վարկանէր ունել զկայսերու թիւնն. վասն որոյ և ոչ յանձին կալեալ հնազանդել Յկիանոսի, միապետեաց զարևելս, և Յուրիկէ միայն բաժին ճնաց Դաղերիոսի. ուր և մեկուսացաւ՝ի տարագրեն Յոտալիոյ:

Նակ զայլ կողմանս արևմտից ունէր Աաքսիմիանոս հանդերձ որդւով իւրով Աաքսենտեաւ և փեսայիւն Կոստանդիանոսիւ: Բայց չկամէր նա զոք աթոռակից յորդւոց իւրոց կամ յօտարաց. ջանահնար եղև վտարել՝ի Հռովմայ զորդի իւր զԱաքսենտիոս, այլ ինքն՝ի նմանէ վտարեցաւ. ժողովեաց զնա Կոստանդիանոս՝ի Դաղղիա, և ոչինչ առաւել եգիտ՝ի նմա հաւատարմութեան հաւաստիս: Յետ բազմօրինակ դաւաճանութեանցն լարեաց Աաքսիմիանոս միւս ևս որոգայթ, յուսացեալ

340 թէ դուստր իւր Փաւստա յանձն առցէ դաւել զայր իւր: Բայց նա ծանուկ կացոյց զհայրն.

1 Կամ. անդ. դև. իբ. իթ. ը. լա. լբ:

և մինչ Ա՛աքսիմիանոս զԿոստանդիանոս կար-
ծէր սպանանել, սպան զնեերքինին՝ զոր ննջե-
ցուցեալ էր փաւստայ՚ի մահիճն. ընդ որ
յանդգնարս մտեալ Ա՛աքսիմիանոսի, չոքաւ
զԻւրովէ։ Յայնժամ բորբոքեցաւ պատերազմ
նոր. զմահ հօր իւրոյ պատճառանս լինի յո-
դեալ Ա՛աքսենտեայ, ձայն ետ մարտի առ 312
Կոստանդիանոս. որ և խաղացեալ զօրօք Իւ-
րովք՚ի վերայ Հռովմայ՝[1], կործանեաց զպատ-
կերս Ա՛աքսիմիանոսի. զնոյն անցս անցոյց և
ընդ անդրիս Ղէոկղետիանոսի՝ որ կային՚ի
միասին ընդ նորայն։ Ա՛յդովեցաւ Ղէոկղե-
տիանոս՚ի նախատանացն յորժամ՚ի խաղա-
ղութեան էր. և յետ սակաւուց առ սրտին
դառնութեան և առ ծանրացեալ հասակին
վախճաներ զաւուրան։

Յաման ժամանակացս այսոցիկ զլետին Հիպն
դներ Հռովմ քանդել ջնջել՚ի սպառ զքրիս-
տոսական հաւատս, որում՚ի սկզբանէ անտի
անհաշտ թշնամի արձանացեալ կայր։ Ղաղերէ-
ոս՝ որ ըստ մատենագրացն աւանդելոյ զլետին
հալածուածս բորբոքեաց[2] երկու ամօք յառաջ
քան զմերժել յաթոռոյն զՂէոկղետիանոս՝
բռնադատեաց զնա դրել զհրովարտակն մա- 302
հարեաւեր՝ սաստկագոյն ևս քան զառաջինն

1 Լ՚ակտ. յղ. Մահ. Հալած. գլ. խբ. խգ։
2 Եւսեբ. պապմ. եկէղ. գլուխ. ըե. գլ. ժզ։ Վ՚ըէ կոսպ.
գլուխ ա. գլ. ծէ։ Լ՚ակտ. յղ. Մահ. Հալ. գլ. ճ. և այլն։

հալածել զքրիստոնեայս։ Վասնզի և առեալը
զնոսա Ներսիսեան, և ոչ զադատերը ՚ի
հալածանաց. այլ այսու յաւել սնոքել և ևս
զղառաւորան և զդահիճս։ Ոսկայն Թէպէտ
և մեծապէս ընդհարաւ սա, այլ խժդժագոյն
և ցուցան Ներսիսեան և Վռամշապուհ։ Զոր
հանապազ հնարէին տանջանարանս. և յաս-
պարէզ անդր մղեցանաց ոչ ինչ նուազքան ընդ
հաւատոյն մարտ եղեալ կռուէին նոքա և ընդ
ամօթխածութեան հաւատացեալ կուսանաց։
Ջեռազօտէին փուլթոյ պնդութեամբ զաս-
տուածաշունչ մատեանս՝ ընկել յերեսացերկրէ
և զինշատակս նոցա, և ոչ ևս իշխէին հաւա-
տացեալք ընթեռնուլ զկրոնն, կամ առ ի-
րեանս ունել զնոսա։ Ոչ յայտէս յետ երեքհա-
րիւր ամաց հալածանաց զազանացեալ ևս տե-
սանել էր զցասումն հալածչաց։ Վասնորոյն ա-
րար զնոսա համբերութիւն քրիստոնէից. և
հնացեալ հեթանոսաց ընդ անարատ քաղա-
քավարութիւն նոցա, զունդազունդ զայն
՚ի հաւատս, և անկանէր ՚ի յուսոյն Վռամշապուհ
պարտել զհաստատութիւն հաւատոց նոցա։
311 Ոչ արեալ չարաչար ախտիւ՝ նահանջեաց զհրա-
մանաւ, և մեռաւ զհամ Ոչնխոքոսի, կեղծեօք
իբրև զնա ապաշաւեալ։ Ոչ Թուլացոյց Ներ-
սիսեան զհալածումն. այլ մեծն Վռամանդխա-
նաս՝ ինքնակալն իմաստուն և յաղթող՝ զերկս
312 արկ համարձակ քրիստոնեական հաւատոց։

ԴՐԱ ՄԵՏԱՄԱՆՐՈՐԴ

ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ

ԿԱՄ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏԻԵԶԵՐԱՓԱՐՈԶ խոստովանութիւն Կոստանդիանոսի հանդիպիլ լինել յամի տեառն երեքհարիւր և երկոտասան։ Ոմն ինչ փակեալ պաշարէր ի Հռոմ զԱթաբենտիոս, երևեցաւ նմա ընդ օդս ակներև ամենեցուն խաչ լուսաւոր պարունակեալ գրով, խոստանալով նմա գիաղթութիւն։ Արկնեցաւ տեսիլն և յանուր ջըս, և ի վաղիւ անդր տարեալ գյաղթութիւնն մեծ ի հռչակաւոր մարտին՝ Թաւիեաց զՀռոմ՝ի բռնակալէն, և զեկեղեցի՝ի հալածչէն։ Նարձրացոյց այնուհետև զնշան խաչին՝ ասպա էն ժողովրդեան Հռոմայ և պետութեան ողջ ջոյն։ Յետ սակաւուց ի Լիկիանոս որ բարեկամութեամբ էր ընդ Կոստանդիանոսի՝ պարտեաց զԱթաբիոս, որ և մեռաւ խակ մահուամբ Վաղերիոսի։ Յայնմ հետէ պարզեւեր խաղաղութիւն եկեղեցւոյ, և փառօք և պատուով Հոխացուցանէր զնա Կոստանդիա- 313

նոա։ Ա՛մենայն ուրեք յաղթութիւն էր ընդ
նմա, և հարեալ վանեցան՝ ինանանէ և յորդւոց
նորա ազգք բարբարոսաց։ Նայց ոխացաւ ընդ
345 նա Լիկիանոս, և վառեաց վերատին զհուր
հալածանացն. և խորտակեալ ընդ ծով և ընդ
ցամաք, ելից զթագաւորութիւնն, ապա և՛ ի
324 կենացն ևս անկաւ։

325 Ո՛յսու ժամանակաւ գումարեաց Կոս-
տանդիանոս՝ ի՛ Լիկիա Նիւթանացւոց զառա-
ջին տիեզերական ժողովն երեքհարիւր ուԹ
և տասն եպիսկոպոսաց, որ զպատկեր համօրէն
եկեղեցւոյ կերպարանէին. որք և դատապար-
տեցին զԱ՛րիոս՝ զոտն աստուածծու-
Թեան որդւոյն Ա՛ստուծոյ, և յարդարեցին
զհանգանակն՝ դաւանեալ զհամագոյութիւն
հօր և որդւոյ։ Յառաջադէմքն՝ ի նոսա էին
երէցք եկեղեցւոյն Հռոմայ առաքեալք՝ ի
սրբոյն Սեղբեստրոսէ քահանայապետէ. և
վաղեմի ոմն մատենագիր յոյն՝ ընդ հրեշտակս
սրբոյ աԹոռոյն կարգէ և զանանաւորն Սի-
սիոս եպիսկոպոս Սորդոբայ, որ և զահա-
դլուխ բազմեցաւ ժողովոյն։ Ա՛յդ և Կոստան-
դիանոս ընդ ժողովականան բազմեալ, իբրև
զպատգամն երկնից ընկալաւ զսահմանս ժողո-
վոյն. այլ առաջաստեալ Ա՛րիոսեանց զմոլո-
րութիւն խրթեանց, չնորհս գտին առաջի նո-
ցա բարեպաշտելոյն։

1 Գելաս. Կիզիկ. Պոփմ. Թոդ. Նէն. գիրք ը. գլ. ջ. ի՛ն։

Ինչ դեռ արութեամբ քաջութեան իւրոյ 326
՚ի խորին խաղաղութե ունէր զպետութիւնն,
ազգեցաւ տուն նորա ՚ի խորամանկ հնարից
հինջ իւրոյ Փաւստոյ։ Ընդ[1] այնոսիկ եղև նա
զվրէժսպեայ որդւոյ Կոստանդիանոսի յայլմէ
հինջէ, որպէս թէ բռնադատեալ էր ՚ի նմա-
նէ. և անհնար եղև որդւոյն ցածուցանել զը-
ցասումն հօր իւրոյ։ Ընդ վաղվաղակի ՚ի նշա-
նակել զպարտութեան՝ քինախնդիր էղև մա-
հու որդւոյն, հեղձուցեալ՚ի բաղանիս զՓաւս-
տոս։ Ընդ[2] թէպէտ և նախատինս եդ Կոս-
տանդիանոսի հինն իւր չարութեամբն, այլ՚ի
պարծանս եղև նմա մեծապէս բարեպաշտու-
թիւն մօրն։ Ընդ[3] սա յաւերակս հնոյն Բ-
րուսաղէմի զձեռնարկեալն Ընդ[4]դրիանոսի, և զայ-
րըն ուր ծնաւ փրկիչն, և զսուրբ տեղիս։ Յետ
չորից ամաց նոր կառոյց Կոստանդիանոս 330
զԿ՚ուզանդիոն, անուանեալ զնա Կոստան-
դինուպօլիս, և անդ եդ զերկրորդ գահ ինքնա-
կալութեանն։

Նաղաղութիւն էր եկեղեցւոյ ընդ իշխա-
նութեամբ Կոստանդիանոսի. այլ վշտանայր
յանհնարինս՚ի Պարսս, ուր և բազմութիւն
անթիւ վկայից յաղթանակ կանգնեցին զհա-

ատոց։ Ալ այրապար ջանաց կայսրն ամոքել
զՇապուհ, և՛ի քրիստոնէութիւն ածել զնա.
այլչափ ինչ միայն ձեռնհաս եղև պաշտպա-
նութեամբ, զի յանդորը ելանէին յաշխարհ
337 նորա հալածեալքն։ Ալ ախձանեաց զաւուրս
իւր լի յուսով և խնդութեամբ, օրհնեալ յամե-
նայն եկեղեցւոյն։ Նաժանեաց զպետութիւնն
յերիս որդիս իւր՝՝ի Աոստանդին, ՛ի Աոստաս,
և ՛ի Աոստանդ։ Վնայեցաւ վաղվաղակի
դաշնաւորութիւն նոցա. անկաւ Աոստանդին
340 ՛ի մարտին զոր մղեաց ընդ Աոստանդայ եղբօր
իւրոյ վասն բաժնի թագաւորութեան իւ-
րեանց։ Ալէկացին հաշտ Աոստաս և Աոստանդ.
զի կալաւ սա զնիկիական հաւատս, ընդ ո-
րում հակառակէր Աոստաս։ Յայնժամ աքան-
չացաւ եկեղեցի ընդ բազում համբերատար
Ձգունս մեծին Աթանասի պատրիարգին Ա-
ղեքսանդրիոյ, որ եկաց ախոյեան հզօր նիկէ-
ական ժողովոյն։ Ընդէց զնա Աոստաս յաթո-
ռոյն յոր օրինօք դարձոյց զնա քահանայապե-
344 տըն սուրբ Յուլիոս առաջնին, զորոյ զվճիռ
հրամանացն հաստատէր Աոստանդ[1]։ Ալ յեր-
կարակեաց եղև գերապանծ ինքնակալն. ըս-
350 պան զնա նենգաւ բռնացեալն Մաքսենտիո-
ոս, որ և փութանակի եղծ զվերիժն անձնա-

1 Սոկրատ. պապմ. էկեղ. գիրք ե. գլ. ժէ։ Սոզոմ. գիրք է. գլ. ը։

ապանութիւ՝ ի պարտէզ իւրում՝ ի Կոստաս։
Լմնացեալ Կ աղեներսոսի արիոսեան եպիս-
կոպոսի՝ ի բարեկամաց իւրոց զձախողակ եւս
գումարութեանց բռնաւորին, եցոյց Կոս-
տաս զնրան, և հաւատացոյց զծանծաղա-
միտ ազքային եթէ ինքն յայտնութեամբ գիտէ
զայն։ յաղագս որոյ և Կոստաս անձնատուր լի-
նէր բոլորովին ի կամս Արիոսեանց։ Յայն-
ժամ հալածէին յաթոռոց զուղղափառ եպիս-
կոպոսունս. ալիք և խռովութիւնք հարկանէ-
ին շուրջ զեկեղեցի. պարտէր արուեստին և-
պիսկոպոսապետին Կ իբերիոսի՝ ի գառն աքսո-
րանն. նկուն լինէր ի վիշտս չարչարանաց 387
ծերունին Աւղիոս՝ որ յառաջ ախոյեանն էր և-
կեղեցւոյ. խոնարհէր ի կամս նոցա ձգեալ ի
պատրանաց և ի բռնութենէ ժողովն Արմի-
նոյ, որ բնաւ անյողդողդն կայր զառաջինն.
շփոթեալ խանդարէին սահմանք և կանունք, 389
և զառելի փոխանակէր օրինաց հրաման թա-
գաւորին։ Նայց Արիոսեանք որ արքայական
իշխանութեամբ գործէին զամենայն զոր կա-
մէին, չէին միաբան ընդ միմեանս, և փոխէին
հանապազ զհանգանակն։ Ասկայն անյեղլի
եկաց որ ի Նիկիա գաւանեցաւ հաւատք. և
զհամբաւի հարան ընդ բնաւ տիեզերս մեծն
Աթանաս և տուրբն Հիլարիոս եպիսկոպոս
Պիկտաւայ՝ ամուրք հզօրք նիկիական հա-
ւատոց։

Ա՛ինչդեռ կայսրն Կոստաս պատուհասել զի-
րօք Ա՛րիոսեանց՝ ի գործոց պետութեան կա-
սեր , մեծապանծ յաղթութենա՛ն զլուխ տա-
նէին Պարսիկք : Վորձ փորձէին և Ա՛լամանք
միաբան ընդ Վրանկաց միջամուխ լինել՛ ի
337—339 Պաղեստա . զդէմ կալաւ նոցա Յուլիանոս ազ-
գակից կայսեր , և եհար զնոսա : Զօրացաւ
360 և կայսրն խորտակել զԱրմատացիս , և խա-
364 զալ՛ ի վերայ Պարսից : Ա՛նդ վտարանջէր Յու-
լիանոս՛ ի կայսերէ , ուրանայր՛ ի հաւատոց ,
առնոյր զթագաւորութիւն՛ ի մեռանել Կոս-
տասայ՝ իմաստութեամբ վարեալ զայն : Ո՛ր
օրինակ յարուցանէր հալածուածն՛ ի վերայ ե-
կեղեցւոյ . զուն գործեաց Ձարուկ տալ հեր-
ձուածոցն որ՛ ի նմա . արգել կարձեաց քրիս-
տոնէից հասանել բարձի և աւագութեան .
արգել նոցա զդպրութիւն , և կարծեաց
դարձուցանել ընդդէմ սրբոյ եկեղեցւոյ զբը-
նիկ զինս նորա , կրթեալ՛ ի նմանութիւն
կարգաց նորին : Ո՛նարիւք և նենգութեամբ
՛ի տանջանս մատնէր զնոսա , այլ պատճառանս
յուզեալ՛ ի վերայ նոցա , և ոչ զքրիստոնէու-
թիւն : Զայսմ ամենայնի հաւատարիմ կա-
ցին քրիստոնեայք առ Թագաւոր իւրեանց .
բայց անչափ փառամոլութիւն նորա մահ նմա
365 մեքենայեաց : Կատակեցաւ նա՛ ի Պարսս յան-
դուգն խիզախեալ՛ ի մարտ : Զաջորդէր զնա
Յովիանոս նախանձաւորն քրիստոնէութեան

կրօնից, որոյ տեսեալ զի ոչ գոյր յոյս յաջո-
ղութեան իրացն՝ ինքեաց անարգաբար ընդ
պարս զդաշն հաշտութեան, և մեռանէր:

Նայց Ալաղենտիանոս յաջորդ նորա գումա- 364
բեաց պատերազմ որպէս զօրագլուխ առա-
քինի. ած՛ի բանակն և զՆրատիանոս զորդի 366—371
իւր միանչ տակաւին մանուկ էր: Զգուշացաւ
հրահանգաց զինուորութեան, եհար զբարբա-
րոս, ամրացոյց զսահմանս պետութեանն, և
յարևմուտս պաշտպանեաց նիկիական դաւա-
նութեան: Նայց հալածէր զայն յարևել
եղբայր նորա Ալաղէս, զոր արարեալ էր աթո-
ռակից իւր. սա իբրև ետես թէ չկարաց յան-
կուցանել յինքն զսուրբն Նաթանէլիս և զսուր-
բըն Պրիգոր Նազիանզու, կամ քակել զա-
մուրս մտաց նոցա, լքանէր՛ի գործոյն: Ալ
ամանք Արիոսեանց նոր մոլորութիւնս կցե-
ցին յառաջին աղանդ իւրեանց: Ի մէջ բերեն
յիշատակագիրք Հարց զԱերիոս ոմն երէց ա-
րիոսեան իբրև նոր աղանդապետ[1], այնու զի
ոչ ինչ խոխր գնէր նա ընդ քահանայութիւն
և ընդ եպիսկոպոսութիւն. և գարձեալ անօ-
գուտ համարէր զաղօթս և զպատարագս, զոր
ընդհանուր եկեղեցի վասն մեռելոց մատու-
ցանէր: Ի սորա և այլ մոլորութիւն երևոյթ,
զի սարկութիւն օրինաց գրէր զպահս կար-

1 Եպիփ. յղ. հէր. հե: Օգոստ. յղ. հէր. ծէ:

գեալս, և՝ ի կամն իւրաքանչիւր կամիլ զայն առնել ապաւառն : Ինչգեռ նա կենդանի էր, մեծացաւ անուն արքայն Նախիրանու վասն գրոցն որ յաղագս հերձուածոց, յորում վիճեան ընդ առնեակին հերքեաց և զՆեստոս : 375 Արդեգին յեպիսկոպոսութիւն Տուրայիկ գաւառին Վարդենոս, և հաստատ արքունեաւն նորա և սքանչելեացն եղից գաղիեզերս՝ ի կենդանութեան և զկնի մահուն : Վեռաւ Վաղենտինոս ուժգինս խօսեցեալ առ Թէնոս վիճաբանութեան : Նոյնպէս գԺնդակ ցաւումն նորա՝ որով ահաբեկեալ զայլս, մահաւիճ գործաւ ինքեան գլխովին : Վրդովեցաւ յաջորդ նորա ոչ նախանձեցաւ ընդ առնեակին Վաղենտինոսի երկրորդի՝ կռաբ եղեալ նմա, զոր հարցացին կայսր՝ ի հասակի առաջ ընկենց : Նոյ՝ ի տգիտութեան նորա վարեաց գաղեստութիւնն Յուստինոս, մայր նորա, որ ձեռնտու էր Նեստորեանց :

Վնդա մեծամեծս տեսանելիք առաջնոյ՝ ի սակաւ ժամանակի պատահելոց առաջնոյ 377 Վնութ՝ ի Վաղենտինոսէ գրեցաւ զՎարսա՝ ի պատճառս նուաճելոյ զաղտուամբն, և փոխեալ ընդ առաջ յօդնականութիւն նմա 378 Վրդովեցաւ յետ երեւելի յաղթութեանն՝ ի վերայ Նամանաց. աճապարէ Վաղէս հասանել՝ մինչև հասանել երեւելոյ՝ զոր պատրաստեն զնա մերձ Վնգիւռուսոլիս Հռոմ

դատեալ զնա Կոմիտացւոցն յաղթականք ի
գեղջն՝ ուր ապաւինեալ էր։ Նանրացեալ
ի հոգւոց Կրատխանոսի գահակից իւր ըն- 379
տրեաց զմեծն Անէոգոս, նմա յանձն արա-
րեալ զարևելս։ Նհար նա վաղվաղակի զԿո-
միտաս, ահացոյց զամենայն ազգս բարբարո-
սաց, և զոր ոչ դոյզն պարծանս համարէր ին
քեան Անէոգոս՝ խմբեաց ժողով ի Կոս- 384
տանդնեանէ՝ ուրացողք աստուածուքեան
Հոգւոյն։ Ի ժողով այսր գումարեցան միայն
հայրապետք յԱրևելեցւոյն Նունաց. այլ ձեռն
առեալ հաւանութեան արևմտից ոչ ջան
հանդերձ սուրբ քահանայապետաւն Կոստա-
նոսիւ, անուանեցաւ տիեզերական ժողով
երկրորդ։

Ինչպէս անպատմելի քաշուքեամբ վա-
րեր Անէոգոս զպետութիւնն, և յաջողէր նմա
մեծապէս, զԿրատխանոս որ ոչ խոնարհագոյն
էր քան զնա արուքեամբ և բարեպաշտու-
թեամբ՝ լքին զօրքն առ հասարակ օտարազ- 383
գիք, և սպան զնա բռնակալն Նաքսիմոս։
Նլաց եկեղեցի զպատահարն քաջ, ելաց և
պետութիւնն. խակ բռնաւորն Թագաւորեաց
ի Կոստղիա, և Թուէր էին Թէ հերիւք համարե- 386, 387
ցաւ զայն։ Կշխոյն Նուտխանէ հրովարտա-
կիւ արար յանուն որդւոյ իւրոյ յօժանդակու-
թիւն Կրիոսեանց. խակ աստուածայինն Կմ

բրոսխոս՝ եպիսկոպոս Մեդիոլանու՝ ի դիմի հարաւ նմա զինու լուծով անխարդախ վարդապետութեանն և աղօթից և համբերութեան. և արիացաւ սովիմբք պահել՝ի ձեռս ուղղափառաց ոչ միայն զմեծամեծ տաճարս զորս յափշտակել ձգնէին հերետիկոսք, այլ և զկայսրն մանկահասակ ձգեաց՝ի հաւատս։ Նայց զնա շարժէր վերստին Մաքսիմոս. և ոչ ոք հաւատարիմ գտաւ Յուստինեայ իբրև զհայրապետն սուրբ՝ զոր ապստամբն կոչէր։ Այս ինքն առաքեր առ բռնաւորն, որ ոչ յանձին կալաւ լսել բանից սրբոյն. և բռնադատեցաւ Աղեքսանդրոս՝ի փախուստ անկանել յերեսաց նորա հանդերձ մարդն։ Ետրեաց Մաքսիմոս Յուլիանոս, և հաձել կամեցեալ զսինկղիտոսն որ ցայնժամ՝ի հեթանոսական դեն զառածանէր՝ հաստատեաց վերստին զդէպն պաշտամունս։ Ի ժամանակի յորում՝ զբռամբ ածեալ զսուրբ արևմուտս խաղաղութիւն համարէր ինքեան յամենուստ, եհար զնա Թէոդոս՝ի Պաննոնիա, և փակեաց պաշարեաց զնա Յուլիանէ, ուր և սպանին զնա զօրքն իւր։

Ի հանդէծան պայազատեալ Թէոդոսի զերկոսին Թագաւորութեանն, ետ զարևմուտս Աղեքսանդրոսի՝ որ ոչ յերկարեաց՝ի նմա։ Ընդնակալն մանուկ պատուեաց աւագու-

*Եւ ապա զԱղեքսիանոս՝ որ ոչ ևս հաւաներ
ընդ հրամանաւ լինել խրոխտ զօրավարին։
Զգետալն մահ ինքնակալիս՝ ի Դաղղիա դի-
պաւ մերձ՝ ի ելանել, և արտասուեաց զնա
աստուածային՝ զոր հրաւիրեալ
եր ինքնակալն գալ և մկրտել զնա, և ոչ ինչ
յերկուացաւ զփրկութենէ հոգւոյ նորա։ Ել
ինաց առանց վրիժուց մահ նորին. այլ՝ ի ձեռն
յայտնի պատճառէ յաղթութեան ետուն եր-
կինք Թէոդոսի՝ և վերայ Նւգինէոսի, և՝ ի
վերայ աստուածոյն ստոյ՝ զորոց նորոգեալ եր
զպաշտօն ամպարիշտն։ Զերբեակալ եղև նա,
և հարկ եղև մատնել զնա՝ ի ցասումն ժողովրդ. 394
դեան, և մահու նորա խաղաղել զապստամ-
բութիւնն։ Յայնժամ լաւ համարեցաւ Ա.ր
բոզաստ գնալ զԻւրոպէ քան՝ ի գԹուրքն
յաղթականին դիմել, զորոյ սակաւ մի յառաջ
զչափ առեալ էին ապստամբեցն ջոկք։*

*Ա՛իապետեալ Թէոդոսի զտէրութենէն ոչ
ջան, ՚ի ցնծութիւն և՝ ի հիացումն եղև աշ-
խարհի։ Ա՛նեցուկ եկաց հաւատոյ, լուեցոյց
զհերեսիարքսն, եբարձ զգարշելեացն պաշ-*

տօն, զգրգանս սանձակոծեաց, և խափանեաց
զծախս տարապարտս։ ՀեղուԹեամբ ցածու-
Թեանն զյանցանս իւր խոստովան եղև, և ջնջ-
ջեաց ապաշխարուԹեամբն. ունկն մատոյց բա-
նից հրաշալւոյն Գրիգորիսի վարդապետին և
կեղեցւոյ, որ կշտամբեաց զարտմտուԹիւն նո-
րա, զոր միայն ախտանայր մեծազօր արբայն։
Ապա յաղԹողն ի մարտ՝ ոչ խնդակեաց եր-
բեք ի նոյն միտս եր հարկաւորեալ։ Նրա-
նաւեռեաց զազգս, և հանդեաւ ի խաղաղու-
Թեան, պանծագոյն ևս լեալ հաւատոյն սըր-
բուԹեամբ քան յաղԹուԹեանցն բազմա-
Թեամբ։

586, 587 Ի սորա աւուրս աստուածարեալ երկին
Հերանիոս մենացեալ ի տուրբ այրն ի Ներ-
զեհէմ, բուռն եհար բազմաչիրան երկամբք
բացատրել զաստուածաշունչ գիրս. յայն
արկ զամենայն մեկնիչս, խուզեաց անց ընդ
բնաւ եկեղեցապատում մատեանս, և ընդ
վէպս արտաքնոցն՝ որ դիւրահաս զնոսա գոր-
ծէին, և կարգեաց եղ յեբրայական բնագրոց
զԹարգմանուԹիւն աստուածաշունչ մատե-
նից, զոր ընկալաւ եկեղեցի ողջոյն կոչեցեալ
զայն Վուլկատա։

Ոմանք էին անպարտեալք զոլ պետուԹիւնն
առ Ոմէոդոսիս, որ առ երկոքեամբք որդւովք
նորա յայլ վաղվաղակի շրջեցաւ կերպարան։
Ոչ արեալ կալաւ Արկադիոս, և Ոնորիոս

զարևմուտս. որոց երկոցունց առաջնորդէին
գործակալք նոցա, և տքա յօգուտ անձանց
միայն վարէին զարքայականն իշխանութիւն:
Նարձան ՚ի միջոյ արագ արագ Յուսինոս և
Նատրոպոս, որոց չնորհս գտեալ առաջի 395
Աբկարեայ՝ յաջորդեցին զհիմեանս, ու քան 399
զի վատթարագոյն երևեալք. բայց կորըս-
տեամբ նոցա ոչ ուղղեցաւ թագաւորութիւն
ընդ Թուլամոլի ինքնակալաւ: Զգեալ
Անդոքիայ յիւրմէ կնոջէն, հալածեաց 403, 404
զառըն Յովհան Ասիեբերան՝ զպատրիարգ
Կոստանդնուպօլսոյ՝ զլուսաւոն արևելից:
Զրևմուտք ոչջոյն հանդերձ քահանայապե-
տաւն սրբով Ինոսկենտիոսիւ ձեռն էառուն
մեծի հայրապետին ընդդէմ Ծնորիոսեայ պա-
տրիարգին Զեքսանդրիոյ՝ որ էր պաշտօնեայ
աղբարչաութեանց դշխոյին:

Զգիկէն արևմուտք յարշաւանաց բարբա- 406 եմ
բոսաց: Զոր հարկանէր զՀռոմէս կռապա-
շիշն Յռոդագաստոս գոթացի յազգէ: Ոչ ան-
գալք՝ գումք ազգաւ, և աղանդով արիո-
սեանք, զոսամբ արկանէին լստ մտանէ զաշ-
խարհն Ռոդղնացւոց, և գիմէին անտի և ՚ի
Սպանիա: Զարիկոս Թագաւոր արիոսական
ազգի Ոչ խնդութեաց բուռն առնէր Ոնորիոսի
Թոդոս ՚ի նա զընդարձակ գաւառսն որոց տի-
րեալ էին յառաջագոյն Ոչանդալք: Յանդնարս
մեծաւ Սպանիսն ՚ի բաղմութենէ խառնա-

կոյտ խուժանի մարդկանն, հարկանէ զնոսա, բանտագնաց լինի ընդ նոսա, գաշինս կուէ, և անդրէն 'ի կուիս արշաւէ, յաչս եդեալ զամենեսեան առ 'ի շահ օգտի անձին· սակայն զգուշանայ Թագաւորութեանն, զոր խորհելոյնքն գրաւել։

408 Յաման ժամանակացս այսոցիկ վախճան հասանէր Աքիաքեայ· և այնպէս չքաւոր համարեցաւ զաշխարհն 'ի լաւ արանց, որպէս զի և զնահատակութիւն որդւոյ իւրոյ Յովհաննէսի, որ ութից ամաց էր, յանձն արար Յազկերտի Պարսից արքայի։ Սակայն Պուզքերխա քոյր Թագաժառանգ մանկանն՝ արհայտաւ գործել մեծամեծս, և խոհականութեամբ իւրով և բարեպաշտութեամբ անուանաձելի կալաւ զգահ պետութիւն եղբօր իւրոյ Յովհաննէսի։

Այլ մերձ 'ի կործանումն Թուէր Թագաւորութիւն Կնոլիոսի· ապանդա զԱտիլիկոն, և ոչ զոք կարաց մատուցանել 'ի տեղի աջոյ իշ-
409 խանին։ Ի տարանջեաց Կոստանդին· կորոյս Կնոլիոս զԿաղիա ողջոյն և զԱպանիա· առաւ Հռոմ, և մատնեցաւ 'ի կողոպուտ զօրացն Ալարիկոսի և Ի խիզոթաց· և այս ամենայն գործեցաւ, զի Ատիլիկոն ոչ էր 'ի միջի։
410 Նայց Ատտիս խժդժագոյն ևս քան զԱլարիկոս՝ երկրորդ անգամ աւերեաց զՀռոմ· և զմեսաւածէր այնուհետև, թէ արդեօք ջնջեսցէ և զհռոմայեցին անուն։ Սակայն գէպք բա-

բեաց Հանդիպէին ձերբակալ լինել Պաւիդիայ 415
քեռ կայսեր, որ և եղեալ նմա հնուԹեան 414, 415
ամօքեր գնա։ Պայմանս ուխտէ եղեալ Կո-
Թայ ընդ Հռովմայեցիս, Հաստատեցին զա-
Թոռ տէրուԹեան իւրեանց՝ի Պպանիա, կա-
լեալ՝ի Կադղիա զպատառս որ գկողմամբք
Պիւրենեան լերանց։ Պ՚ալիա Թագաւոր նո-
ցա իմաստուԹեամբ տարաւ՝ի գլուխ գործա-
ածս գայսոսիկ. Հանդէս արար Պպանիա քա-
ջուԹեանն իւրոյ, և ամբծուԹիւն Հաւատոյ
նորա ոչ եղծաւ ընդ տէրուԹեամբ Կ՚ուիս-
տեանց։

Օ՚այսու ժամանակօք Կուրդոնեանք յազ-
գացն Պերմանացւոց տիրեցին շրջակայ վայրաց
Հռենոսի, ուստի առ սակաւ սակաւ գրաւե-
ցին և զաշխարհն որ յանուն նոցա կոչի գարդ։
Պ՚՚՚ի քուն կայքն Վրանկք. Հաստատեալ նո-
ցա՝ի միտս գուն գործել մտանել միաբանգամ
յաշխարհն Կադղիոյ, ամբարձին՝ի Թագա-
ւորուԹիւն զՎարամունդ զորդի Պարկոմիրայ, 420
յորմէ և սկսաւն միահեծան պետուԹիւն
Կադղիոյ առաջինն և պանծագոյն ամենայն
պետուԹեանց որ են արդ յաշխարհի։

Պ՚եռանէր անտրդի տարաբախտ Կնորիս 423
չէ ևս հրամանն տուեալ վասն Թագաւորու-
Թեան իւրոյ։ Վարգեաց ընդ նորա Վ՚ենոդոս
զՊաղենտիանոս երկրորդ զորդի Հօրաքեր իւ- 424
րոյ Պ՚ալկիդեայ երկրորդ առնէն՝ի Կոստա-

ոց, կացուցեալ զնա ՚ի տպարանի ըստ
Հռոմի ձեր նորա՝ զոր և զչեզ կամ կոչ-
ուն ինուանակոց ։

44, 45 Ոչոյս ժամանակս Կեղեմոս և Պե-
զաղոս ուրանալ ժպրհեցան զհիգեմոնին
մեզ, և զնոցա առաքանին՝ զոր ՚ի բերան
հետևելոն ճառիցն ։ Ա՛ւ առաջեալ զոս ՚ի
զոս բանիկ նոցա, հեղեցին զնոսա որ ՚ի
46 փրկիչ զանդիցեան ժողովք ։ Նաև զգաստ-
կնեք նոցա բահանայապետն առաջ Հնոյ
47 կեղեմոս և Ոչոսիոս, և ասա առաջն Կե-
զեմոս, և յայտնեցին զոյն սահմանն ա-
ղաչին ։ Յամօ ասաց առաքեալն ( )-
զոսին զիշատակաց հեղեմիկոն, որդեա-
ուացուցեալ զեկեղեցի հրաշագործ բանիւ
վարդապետութեան իւրոյ ։ Ա՛ւ ինքն առ
վարդապետս առաքեալսն արդոյն Կրա-
կեզոսի աշակերտի իւրոյ գրասիձեցոյց և ըզ
Կեղեմոսագրեան, որ սկիզբն արդարադո-
ցութեան և Հաւատոյ՝ զոր զօրութեամբ անձն-
ինչոյն կամացս վարկանիցի ։

Յայսմհետէ գառնութեան ժամանակի
սկսան քրիստոնեայքն, և յորում անդադար էին ա-
ղաչանացն Ջոկք, ոչ ինչ Հշանս գոսա եկե-
զեցի ։ Ա՛ւ զօրեցին գղոսին զիշատակք ըս-
ղոսանքեան, և ոչ Հեղձամուծք ինչ ասա-
կանել գնա, այլ միշտ բարգաւաճեալ տիրա-
նասա արանիք՝ խոյանանակաց գաղանացն ան

լսելն ։ Յառնեցաւ Պետրոս ի մէջ հա-
լածանացն սիրեաւ ծառայել զիրաս վկայել
իւրոց ։ Ի ցան Հասաք պատմութեանց, զկեան
մնառանդ արանչելոցն՝ զոր գործէին ընդ
ամենայն երկիր, ուր և կարգայիր զանուն նոցա
և պատուէին զՀերմիանոսդ ։ Նշխել իշխանաց
Ի իշխանատոս բանս տալ ընդդէմ յայտնել 406
Հնարատութեան, այլ հերքել ի սրբոյն Յե-
րանիմաէ, ոչ զոր եգիտ իւր հեառոյ ։ Պա-
տիս արհամս արձակէր քրիստոնէութեան և
տարածանէր աւուրց յաւուրս ։

Պաշ վասնորոյ գնէր կայսերութեան
բնութիւն ։ շուրջանակի հարկանէին զիւր Թշ-
նամիք, և՛ ի վերայ այսր վասնզէին զիւր և իշ
խանք զօրուն՝ նախանձ ընդ միմեանս բերեալ ։ 427
Ի հնարից Պետրոսի ի միտս կառնացոյց
եղև Պատիճխոս վասն Ի ընդհակառակ կռնիցն
Պերսիկեայ ։ ընդ որ զի խառն վարկցաւ զըշ-
խոյն՝ խոստացոյց ի Պատիճխոյ զՊետրիկիոս
հանդերձ Ի անդամօք, զոր վանէին անտի
Պոմայեցիք ։ Պատրաստեաց կռնիցն ընդ գործն,
այլ կարի անդամն ։ և բարձաւ Պերսիկ յիշ-
խանութենէ կայսերէ ։

Պետանեալ չարչարանաց տանէր եկեղեցի
ի հարատահարելոյ Պերսից, և գունդք
գունդք մնարելոցաց զկայսերանն առնուին

՝ Հերան · ընդդէմ Պիտիւ · գնննաց · յշ · Մարքոզբ · էին ։

զպատակ ։ Ի վեր երևելին անդամոյ այլեա կըր-
կին ժանտ մոլորութիւնք ։ Նեստոր պատրի-
429 արդ Կոստանդնուպօլսոյ բաժանէր ի Կրիս-
տոս զանձնաւորութինն . և վանականն Նես-
տոր քէս քան ամօք զկնի՝ շփոթէր ի նմա զերկու
սին բնութիւնան ։ Ասոյեան եկաց ընդդէմ
զի յայտ արասցէ թէ ոչ ՚ի հարկէ եկն յայտնել, կամ բռնութեամբ ձգեալ և վարեալ, որպէս շաղփաղփեցեին ասել ումանք ՚ի փիլիսոփայից։ Այնհաղոյն ծագէ արեգակն զլոյս իւր, և արգելուլ ոչ ունի զման ինչ ՚ի Հառագայթից։ այլ Այսուածծ որ առնէ բանիւ և տիեզական իշխանութեամբ, Հուպ մատուցանէ զգօրութիւն իւր ուր կամի և որքան ախորժէ. և որպէս ստեղծանելոյն զաշխարհ բանիւ լուսով յայտ առնէ թէ և ոչ մի աշխատութիւն է նմա անտի, նոյնպէս և տակաւ արարչագործ ծելոյն յայտ առնէ թէ ինքն է տէր նիւթոյ և առնելոյն կամ չառնելոյ, և բովանդակ առաջարկութեան գործոյն. և թէ յամենայնի յայտնիկ անտեսիւր կամք իւր միայն են կանան և օրէնք։

Այսու դարձեալ յայտ առնէ թէ նուաճ լինի ամենայն առանց իրիք միջնորդի. նմին իւրի ծանուցս սխալեցին հեթանոսք և փիլիսոփայք, որք համարեցան թէ երկիր ընդ ջրոյ զանգեալ, սատարութիւք շողոց արեգական՝ եթէ կամք իցեն ասել՝ բուսոյց իւրական արգասաւոր զօրութեամբն զտունկս, և զկենդանիս։

Յուցանեն մեզ աստուածատուր գիրք թէ ամուլ անպտուղ էին տարերք յառաջ քան զարդասաւորել զնոսա բանին տեառն։ Տունկք և կենդանիք չլինէին ՚ի հող, ՚ի ջուր և ընդ օդս, եթէ Այսուածծ որ արար զնոսա և պա-

տրաստեաց զնխուԹա՝ չկերպարանքը զնասին ամենազօր կամօք իւրովք, և կամ Թէ ոչ ընդ հէր սերմն իւրաքանչիւր ըստ տեսակի նոցա՝ առնել և բազմանալ զամենայն ժամանակս։

Այլ Թերևս կարծել որոց հայեցեալ տեսա նեն ծնանել և առնել բուսոց՝ ի տապոյ արե ւոյ՝ զնա ինքն զարեգակն արարիչ նոցա. բայց ուսուցանեն առաւածեղէն գիրք Թէ չև տեղ ծեալ արևու՝ զարդարեալ էին երեք երկրի անկովք և բանջարովք, զի գիտասցուք Թէ առ Յ՝ստուծոյ է ամենայն։

Կամք եղեն ամենարուեստ Հարտարապե տին առնել զոյս նախ քան զհաւաքելն զնա յարև և յատեղս. քանզի և խեղամուռ առ նել կամէր Թէ ոչ բնուԹեամբ ինչ ունին լուսաւորիդ մեծք և ահաւորք զորս առաւա ծացուցին մարդիկ՝ զգեղապանծ և զլուսա փայլ էուԹիւնն կամ զյօրինուածն հրաշալի։

Պարզաբար ասել, արարչուԹեանն Հա պատմագրեալ՝ի Մովսիսէ՝ յայտնէ մեզ զմեծ խորհուրդ Հմարիտ իմաստուԹեան. այս ինքն Թէ Յ՝ստուած միայն կայ տիրապէտն արգա սաւորուԹիւն և կարողուԹիւն. նա միայն է երանելին և իմաստուն, հզօրն և ինքնարար, որ առնէ և ոչ՝ի Հարկէ կամ առ կարօտու ԹեանՀ, ոչ վարեալ կամ ձգեալ՝ի նիւԹոյ՝ կերտէ անտի զոր ախորժէ. քանզի կամեցաւն եղ նմա զգոյուԹիւն։ Ցերակատն իշխանու-

թէն կարգէ և կերպարանէ և շարժէ զնիւթն անաշխատ . ամենայնի ինքն է պատճառ . և եթէ ըստ անխախուտ տիեզերացս կարգի գտանիցի ինչ պատճառ այլում, որպէս արեգական ջերմութիւն՝ բուսանելոյ և աճեցման անկոց, սակայն և զայն նա ինքն տէր կամեցաւ արարչին ամենայնի շաղկապեալ ընդ իրեարս զմասունս տիեզերաց, նովին իսկ հանդէս առնել հրաշալի իմաստութեան իւրոյ :

Սակայն զոր միանգամ ասէն աստուածբեղէն գիրք վասն լինելութեան արարածոց , ոչինչ են առ հաւատարմութիւն Ճառից արարչութեան մարդոյն :

Յայս վայր հրամանաւ լոկով արար Աստուած զամենայն . “ Լղինի լոյս . եղիցի հաստատութիւն ’ի մէջ ջրոցդ . ժողովեսցին ջուրքդ . երևեսցի ցամաքն . բղխեսցէ երկիր բանջար խոտոյ . եղիցին լուսաւորք մեկնել’ի մէջ տուընջեան և գիշերոյ , հանցեն ջուրք զեռուն շնչոյ կենդանութեան , և թռչուն թևաւոր . հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի ” [1] : Այլ երբև եկն ’ի ստեղծագործութիւն մարդոյն , այլ կերպան ասայ բանիցն Մովսէս . “ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան ” [2] ,

1 Ծննդ . Ա .

2 Ծննդ . Ա .

Ոչ ևս ձայն իշխանական և տիրական, այլ ձայն մեղմական, Թէպէտ և հզօր իբրև զառաջինն : Ընդհանուր զանձն ՚ի խորհուրդ կոչէ Աստուած . խրախոյս տայ ինքեան , կամելով նմին յայտ առնել եթէ գերագոյն ինչ գործելոց է : “Արասցուք մարդ ,, : Ասասկ Աստուած յանձին իւրում, ասասկ առ այլոք որ գործէ հանգոյն նմին, առ այլ ոք որոյ արարած է մարդն և պատկեր : Ասասկ առ միւս ինքն , ընդ նմա ասասկ որով եղև ամենայն . ընդ նմա որ առ յաւետարանի իւրում. “Ո՞ր Հայր առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ ,, [1] : Յորժամ Որդի իւր և ընդ Որդւոյ իւրում ասասկ ցէ , ասասկ համայն և ընդ ամենակարող Հոգեացն , որ համապատ է և մշտնջենաւորակից Հօր և Որդւոյ :

Ետաւ է ՚ի գրոց սրբոց ՚ի բազմաւորականն խօսել այլուր ոմեք քան յԱստուծոյ . “Արասցուք ,, : Ահա և Աստուած երկիցս կամ եբիցս խօսի զայս օրինակ . և նոր այս ձև բանից նախ առաջին ՚ի ստեղծագործութեան մարդոյն ՚ի վեր երևի :

Ոչ զի փոփոխի Աստուած յինքեան , և վասն այնորիկ զձև բանիցն փոխիցէ , կամ Թէ երբեք և զկեղանակ գործոյն . այլ զի յայտ արասցէ Թէ հանդերձեալ է գործել գործ նորա աքանչ սահմանեալ ՚ի յաւիտենից :

[1] Յով . Բ . 19 :

Աովհն չքնաղ օրինակաւ հաստի մարդն պերապոյն քան զամենայն արարածս՝ զորոյ արկ Աստուած զկնեքլուխեան չառ։ Ընդ նախ յայտնի Աստուածութիւնն յարարչութեան քան նական արարածոյն, որոյ իմացական ներդործութիւնք պատկեր լինն են թերակատար յաւիտենական ներգործութեանց որովք բեղ նաւոր է յինքեան Աստուած։

Խորհելով լինն գործել Աստուծոյ զմարդն, յայտ առնէ թէ նա միայն յարարածս խորհըրդով և բանիւ վարիցի։

Աբանչելի են նոյնպէս և այլ ամենայն հանգամանք ստեղծագործութեան մարդոյն։ Ինչպէս յայս վայր ընթերցող գրոյն՝ ոչ ուրեք մերձեցոյց Աստուած մասն ինչ իւր եղծանելի. այլ իբրև կամեցաւ հաստել զմարմին մարդոյն, առնու իւրովի հող յերկրէ՝, և աստուածական ձեռօքն յարդարէ զայն ի գեղապատշաճն կերպարան ընաշխարհիկ։ Ուղղաբերձ է մարդ, բարձրագլուխ, երկնահայեաց. և սոյն այս յօրինուածն՝ նմին միայնոյ սեպհական՝ քաղոզէ նմա ուստի ստեղծաւն և յո՛ ձգտել ունելի։

Զանձին խնամք Աստուծոյ յարարչութեան մարդոյն յայտ առնեն զառաւելագոյն հոգանս վան նորա, թէպէտ և տիեզերք ողջոյն ի մասնութեամբ նորա հաստեցան։

1 Ծնն. Բ. 7։

Ա՛ւր աքանչելագոյն ևս է օրինակ արարչութեան հոգւոյն։ Ել՛ ի նիւթոյ առնու զայն. ՚ի բարձանց ընչէ. և է սա փչումն կենդանի առ ՚ի նմանէ։

Ստեղծանել զանասունս, ասէր. “Հանգեն ջուրք զեռունս ընչոց կենդանեաց”[1]. և հաստէր զվիշապս ծովու, և զամենայն կենդանիս և զզեռունս, որ լցուցանելոց էին ջուրըս։ Հրաման տայր դարձեալ հանել երկրի շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և սողունս և գազանս երկրի ըստ ազգի։

Յերրորդ իսկ երկնոցա այսպէս ծնանել՝ անբանից և երկրաքարշ կենդանեաց, զորոց բուն վանդակ զկենդանութիւն՚ի խաղացական շարժումն եդ Ա՛ստուած։ Ապա զնոսա ՚ի ծոցոյ ջուրց և հողոյ։ Սակայն ոչ ունէր ՚ի նիւթոյ հանել զհոգին, որոյ կենդանութիւն հասանէր լինել նման նմա, և իբրև զնա Հոխանալ բանիւ և խոհականութեամբ, և ՚ի նա միանալ խորհելովն և սիրելով զնա. քանզի և վանն այսորիկ ՚ի պատիւ իւր արար զնա։ Ինար և Ա՛ստուծոյ կազմել՚ի նիւթոյ մարմին գեղեցիկ, այլ որպէս զիարդ և յարդարեսցէ զնա և կեր պարանեսցէ, ոչ գտանի՚ի նմա պատիւ նորա և նմանութիւն։ Պարտ էր հոգւոյն որ ՚ի պատիւ նորա հաստեցաւ, և ՚ի ձեռս իւր էր

1 Ծննդ. Ա. 20. 24։

երանելի լինել ժառանգելով զնա, նորահրաշ արարչութեամբ առնուլ զոյութիւն. պարտ էր նմին՝ ի վերուստ լինել. և այս է ասելն՝ շունչ կենդանի փչեալ՝ ի բերանոյ Աստուծոյ:

Յուշ լիցի մեզ, զի զյատակ և զիմանալի ճշմարտութիւնն զգալի պատկերօք նկարէ Աւով ահա մարմնեղէնն մարդկան: Ի կարծիք լինչ լինէցին թէ փչեցէ Աստուած որպէս զկենդանին. մի հաշուեցցուք թէ անօթ օդ էր հո զի մեր, կամ շոգի լուծեալ. շունչ փչեալ Աստուծոյ և պատկեր նմանութեան նորա ոչ օդ է կամ ազիւք: Նա մի համարեցցուք զնա մանն աստուածեղէնն բնութեանն, զոր օրինակ բանդագուշեցին ումանք հիմաստասիրաց: Յօդուածոյ ոչ է Աստուած զի բաժանեցի. և թէ էր նմա ունել մասունս, պարտ էր անարար լինել և մասանցն, այնու զի արարածական մասունք ոչ ունին շարադրել զարարիչն և զանստեղծն էակ: Արարած է հոգի, արարած յորում ոչ գոյ բնաւ մանկայաստուածական բնութենէ. արարած է ըստ պատկերի և ըստ նմանութեան աստուածեղէն բնութեան, արարած որում պարտ է կեալ հանապազ միացեալ՝ ի հաստիչն իւր. զայս գուշակէ մեզ փչումն աստուածական, և զայս ցուցանէ հոգին կենդանի:

Արդ աւանիկ մարդն հրաշակերտեալ: Աստուած՝ ի նմանէ և օգնական նմա:

Ամիրջէ անկողնոյ ծնանիլն առեւտրի մարդկանէ կացեն ազգատոհմ մի մինչև՝ ի սպառ, թէ պէտ և սփռեալ ընդ երեսս երկրի և բազմացեալ։

Ա. յապէս նախածնողքն մեր ստեղծեալ՝ և դան՝ ի դեղազուարճ փափկութեան վայրին, որ Դրախտն կոչի. քանզի արժանի էակ էր փառացն Աստուծոյ երանելի առնել զպատակեր նմանութեան իւրոյ։

Պատուիրան տայ մարդոյն խելամուտ առնել զնա թէ ընդ տերամբ է, և պատուիրանն՝ ի զգալեաց առի, քանզի զգայութեամբք կազմեալ պատրաստեցաւ մարդն. պատուիրան թէթև, քանզի դիւրին գործել կամէր զկենցաղս ցորչափ կացցէ մարդ յանմեղութեան տահմանին։

Պատուիրանեաց մարդ հեշտընկալ պատուիրանին։ Անկն մատոյց այսոյն փորձողն, ինքեան ունկն մատոյց և ոչ Աստուծոյ. անհրաժեշտ էր այնուհետև մահ։ Դայց աղէ տեսցուք առ վայր մի զսկիզբն նորա, և որ ինչ՝ ի նմանէն իրագործեցան։

Դրար Աստուած՝ ի սկզբանէ զհրեշտակս զանխուէթ և զանապական ոգիս։ Ար զամենայն բարւոք գործէ, հաստեաց զնոսա՝ ի սէր բուէթեան. և անշուշտ էր երանութիւն նոցա՝ եթէ կամակարութեամբ ընծայէին զանձինս արարչին իւրեանց։ Ապա որ յոչընչէ չինչ

պայ, թէրի է. կէսք ՚ի հրեշտակայ մոլորեցան ամբարտաւանութեամբ։ Այլ արարածոյ որ յանձն պանծացեալ է և ոչ յԱստուածութեան մերկանայ յամենայն պարգեւացն։ Վնդգիակ արգասիք մեղայ. ՚ի խաւարին ոգիս փոխեցան հոգիքն լուսեղինք. ՚ի չարարուեստ խորամանկութիւն ընկեցաւ ամենայն հանճար նոցա։ Ախտանձ չար զտեղի փոխանակեաց սիրոյ, և քնիկ մեծութիւն նոցա դարձաւ յանսաստուածութիւն։ Օ՜ երանութիւն փոխանակեցին ընդ անմիտ սիրախանայց կցորդս ժողովելոյ իւրեանցն աղետից. և փոխանակ պատուական սպասաւորութեանն չաշխուք ներգործութեամբ փորձիչ եղեն մարդկան։ Վերապանցեալքն քան զընաւս, նոյնք և քան զընաւս հպարտք, եղեռնաւորապոյնք զբանն և խշուառապոյնք։ "Վոքր ինչ խոնարհ ,, արար Աստուած զմարդ քան զհրեշտակս,՝, կապեալ զնա ընդ մարմին. ընդ սա նախանձեցաւ զերապոյնն. խորհեցաւ միաբանել և զնա ՚ի խորհուրդ ապստամբութեան իւրոյ, զի և կորստեանն բաժանորդ արասցէ։ Այսուհետեւ զի մարդ խօսի չարն ընդ մարդոյն, և ՚ի միտ առցուք զխորս նենգութեան նորա։ Այս զբանն ձգէ, առ տիարն ՚ի զօրութենէ, բայց նուաւս խօսի և ընդ առն նորա. "Օ՞ի

1 Սաղմ. Ը. 6։

„ է զի ասաց Պետուած, թէ յաւուրն ծառոց
„ որ լոցեն ի ներքս ի դրախտի այդը՝ մի ու-
„ տիցէք „ [1]. եթէ բանականս հաստեաց ըզ-
ձեզ, գիտել պարտ է զպատճառս աւուրնայնի.
մինթէ թոյն լոցէ ի պտուղդ, զի մահու մեռա-
նիցիք: Ես ուստի սկանի ոգին ապստամբ:
Ի քնին անկանի պատուէրդանն, և լինի հնա-
զանդութիւնն կեղակարծ: „ Ի լոնիցիք երբեւ
զաստուածս „ ազատք և լինքնիշխանք, երա-
նելիք և իմաստունք, անճամբ „ Պ՛անաչել
զբարի և զչար „. և ոչ լինչ թաքիցէ ի ճէնջ:
Պ՛յտպէս մարդ հակառակ ամբառնայ հրա-
մանաց արարչին և ուղիղ կարգաց:

Նա հաւանեալ լիմն չարին, հայէր ի պը-
տուղն՝ որոյ տեսիլն գեղեցիկ գրաւական լի-
նէր քաղցրութեան համոյն: Նա զմտաւ ա-
ծեալ՝ զի արար Պետուած զմարդն ի հոգւոյ
և ի մարմնոյ, համարէր զի թերևս ի չնորհս
մարդոյն առատաբաշխեալ էցէ և տնկոց ըզ-
պալեաց զօրութիւն գերագոյն, և պարգևս
իմացականս: Պ՛աշակեաց լինքն ի գեղեցիկ
պտղոյն, և յաւել ետ և առն իւրում: Տագ-
նապ անհնարին. օրինաւին և սէր ահաւոր ևս
դործեն զմարտն. ի միտ առնու զհնարս փոր-
ձառին՝ որում յայտնէր. սակայն հետաքննու-
թիւնն դաւաճան, և պատիր խորհուրդք ամ-

[1] Ծննն. գ. ե. 6:

քարտաւանութեան, և ծածուկ ցանկութիւն անձամբ և ըստ միտս գործելոյ, հրապուրեն զնա և շլացուցանեն։ Յոտի փորձ փորձել ա-ղետալի զազատութեանն. Ձաշակէ ընդ արգե-լեալ պտղոյն և զչնաստակարն քաղցրութիւն զմիտան հաձելոյ, և զգայութեանցն ի ներքս անկանին հրապոյրք յայս նորահնար թովչու-թիւն. խոնարհի հնազանդի նոցա, և ապաս հարկանէ որոց իշխէրն։

Ընդ կերպարանափոխ եղեն նմա ամենայն արարածք. ոչ ևս ծիծաղին նմա երեսք երկրի. հարկ է ընդ քերտն և ընդ ապաժոյժ ժողովել անտի զպէտսն։ Երկինք ոչ ևս շնչեն զօդ քաղցրասիք. ժանտ ակամբ հայեին ի նա և անասնոցն ջոկք, որոց և կարի ատելիք և վայ-րագք՝ ի սփոփանս էին նմա։ Ընդ Ընդ-ոստուած զամենայն ի տանջանս նմին, որ ի հըր-Ձուանս նորա արար զամենայն. և որ խանդա-զատէրն յինքն՝ անձամբ անձին յանկարծ լինի դժպհի։ Ընդոստմբութիւն զգայութեանցն-րոց պարզէ իմն նմա յանձին տեսիլ ամօթալի. ոչ ևս է սա գործած արարչին, յորում ամե-նայնն բարի էր. մեղքն նոր արուեստակեր-տեցին գործած, զոր հարկ է թագուցանել։ Ոչ ևս հանդարտէ մարդն ծանականաց իւրոց, և հնարի պատրուակել զնա և յաչաց անձին իւրոյ։ Վակայն անըմբեռնելի ևս էր նմա Ընդ-ոստուած։ Ան որ ի պատիւեր իւր արար զնա,

և Եառնամ զզգայութիւնս ի սպասահարկութիւն մարմնոյն, ոչ ծանր դրեր ընդ զգալի կերպարանօք ցուցանել նմա զինքն . բայց մարդն ոչ ևս ժուժկալէ առաջի նորա ՝ի խորս անտառաց դիմ գոլանալ զինքն յայնց այնոցիկ՝ որ փոքր ի յառաջ միակ բերկրութիւն էր նորա : Ա՛մբաստան լինի խիղճ մտացն մինչ չև հարցեալ զնա Ա՛ստուծոյ, և խօլական պատճառանքն անպատասխանի առնեն զնա ՝ի սպառ : Չարկ է մահու մեռանել . բարձաւ ՝ի նմանէ անմահութեանն դեղ : Ա՛յլ ՝ի մահ մարմնոյն յոր գատապարտեցաւ, օրինակի նմա այլ գժնդակագոյն մահ, մահ հոգւոյն :

Ա՛նդ վէիս մահու նորա աճաւ և զմեօք գատակնիռք : Կամք էին Ա՛ստուծոյ զտրիտուր հնազանդութեանն հատուցանել որդւոց նոցա . և երբև հեատեաց հրամանին, գատապարտ զնա, և ոչ զնա միայն, այլ և զծնունդս նորա զսերմեալսն, և զանձկալի հատոյս հոգւոյն ընդ նովին պատուհասիւ արկանէ . անկաք մեք ամենեքին ընդ անիծիւք նախահօրն մերոյ, եղծաւ ապականեցաւ անդուստ ՝ի սկզբանէ ազգ մեր և ծնունդ :

Ա՛ի խուզարկու լինել քեզ աստէն ահաւոր օրինաց արդար գատաստանին Ա՛ստուծոյ, որ զծագումն ազգի մարդկան ընդ անիծիւք փա-

կեաց։ Արդեօք ի գառաստանեայց նորա, որ զամենեսեան մի մարմին համարի ի նախատարը դեն՝ յորմէ հրամայեաց սերել ամենեցուն։ Ո՞չ ընդհակառակ համարեսցուք զանձինս ի նահապետն մեր ապստամբ, խոտեալ զառաքինութիւնս՝ որով գառապարտեցաւ նա, վատբեալս ընդ նմա, և մերժեալս ի դրախտէն ուր ծնանելոց էաք։

Այնու արդարութեան մարդոյն՝ որ ստուեր է աստուածականին, պիտէ օժանդակել խաղալ ի խորս արդարութեան նորա. այլ ոչ թէ յայտնել յայտնեսցէ զիակին նորա զանաստուածութիւնն Յաւատացուք թէ արդարութիւն Աստուծոյ և ողորմութիւն ոչ ըստ արդարութեան և ողորմութեան մարդկան չափին, այլ կարի ընդարձակ տարածանին, և յոյժ անանձնական են ի միմեանց։

Այլ մինչ ահա տագնապեն զմեզ ահաւոր գառաստանք Աստուծոյ, պարտաւորեալ զիարդ առնեմք յուրախականն հայեցուցանել ի վեր զմիտս, և անդատին յօրէ կորստեան մերոյ յայտ յանդիման ցուցանել զհանդերձեալն մեր ազատութիւն։ Ո՞չ ոք զարհուրագոյնս նկարեր զիշատակարհրապոյրս և զսարսափական հնարս այսոյն չարի, յայտ առնէ Աստուած նախամօրն Եւայի և զնոցիկալն նկարագիրս և զարժանին պատուհաս ասելն նորա պարտե-

լայ ։ Այրկ՝ի վերայ կայր օձին առեալ լինել ամենայն կենդանեաց, զոր օրինակ և սատանայ անիծապարտ էր քան զամենայն արարածս. և որպէս՝ի վերայ լանջից և որովայնին իւրոյ քարշել օձ ընդ երկիր, և սատանայ իրաւապէս Թօթափեալ յերկնից ուր առեջեալն էր՝ ոչ ևս վերականգնեացի ։ Այլ ուսել առացաւ օձին՝ի նշանակ վայրաքարշ խորհրդոց զոր սազդէ՝ի մեզ սատանայ. և իւր իսկ խորհուրդք ամենայն երկրաքարշք են, զի ոչ այլ ինչ խորհի նա բայց միայն զմեզս ։ Յանհաշտ Թշնամութեան անդ մարդկայինս սազդի ընդ սատանայի ակն յայտնի տեսանեմք զյաղթանակն որ մեզ պահեալ կայ. զի ահաւասիկ աչեառանի մեզ զաւակ օրհնեալ որով ջախեաջի գլուխ պարտուղին, սանձակոծեացի աչեմ ամբարտաւանութիւն նորա, և որ խորտակեաց զթագաւորութիւն նորա ընդ ամենայն երկիր ։

Զաւակն օրհնեալ է կուսածինն Մարիամ, յորում միայն չմեղաւ Աստ. քանզի և աստուածահրաշ օրինակաւ ծագեաց յԱստամայ, յղանալով ոչ՝ի մարդկանէ, այլ՝ի Հոգւոյն սրբոյ ։ Այս սուին չնաշխարհիկ զաւակ, կամ Թէ՝ի ձեռն կնոջն որ զնայն ծնաւ որպէս ունին աստանօր ընթերցուածք զանազանութիւն, հանդերձեալ էր նորոգել եղջեալ ազգ մարդկան, և բառնալ զօրութեան

լշխանի աշխարհիս, որ յիւրոցն ինչ ոչ եգիտ
՚ի Վրկիատոս՝։

Նայց չև պարզևեալ փրկչին մարդկու-
թեանս, պարտ էր յերկար փոքմոյ ժամանա-
կաց Հանապազ մարդկան զպէտս փրկողի։ Ն-
թող Ուստուած զմարդն՚ի կամս անձին իւ-
րոյ։ Նղծեալ ասպականեցան յօժարութիւնք
նորա. յանչափն զեղխեցաւ, և ծածկեցին ան-
օրէնութիւնք զերեսս երկրի։

Ետրհեցաւ Ուստուած առնել վրէժխնդրու-
թիւն որ յիշեցի՚ի սպառ՚ի մարդիկ։ Ուստ
համաշխարհական ջրհեղեղն, զոր յիշատակեն
ցարդ աւետեան ազինք զոյգ ընդ անօրէնու-
թիւնան որ այնմ եղեն պատճառք։

Ու համարեցաւ մարդիկ ինքեանց զօրու-
թեամբ կալ աշխարհի. կամ թէ որ ինչ ե-
զևն, կացցէ անփոփոխ իբրու անձին ինչ զօ-
րութեամբ։ Ուստուած որ արար զամենայն,
յառնէ աւանիկ ջնջել զանաստուն և զմար-
դիկ՝ զպատուականագոյնան յարարածս իւր։

Ու արար զամենայն հրամանաւ լոկով, ոչ
կարօտեր օգնականի յեղծանել զամենայն. այլ
աստուածասիրելուչ և սա վարկանի զարարածս
արբանեկել՚ի վրէժխնդրութիւն, հրաման
տուեալ ջրոյց ապականել զերեսս երկրի որ
ծածկեալ էր անօրէնութեամբք։

1 Յովհ. ԺԴ. 30։

Ա՛ւ միայն այլ արդար գտաւ յաչխարհի, զոր մինչեւ եր փրկեալ զնա Ա՛ստուծոյ՝ի ջուրցըն հեղեղէ, փրկեաց՝ի հեղեղէ մեղաց։ Պա հեաց գտաւն սորա առ՝ի բազմացուցանելոյ զաւակ՝ի վերայ երկրի, որ լինէր յանմարդի անապատ։ Ւ ձեռն արդարոյն պահէ և զանաստուն, զի ծանիցէ մարդ եթէ վասն նորա ստեղծ Ա՛ստուած զնոսա, և պաշտեացէ նոքօք՝ի փառս արարչին նոցա։

Ւ՛ոչ այսչափ միայն, այլ և իբրու ստիպեալ ինն ընդ հանդէս անաչառ արդարութեան իւրոյ՝ի վերայ ազգի մարդկան, քանտայ յայտնապէս՝ ոչ և առնել ջրհեղեղ ջուրց ապականել զամենայն երկիր, և յանձն էառնա հաստատել զդաշն ուխտիս այսորիկ ոչ միայն ընդ մարդկան, այլ և ընդ ամենայն անասունս որ՝ի վերայ երկրի և յերեսս երկնից՝, յայտ արարեալ եթէ չիք ինչ՝ի կենդանեաց որ ոչ խնամեացի տեսչութեամբ նորա։ Յայնժամ երևեցաւ ծիածանն. և Ա՛ստուած ընտրեալ կալաւ զակնապարար և զերկնագեղ երանգն ցուցանել մանաւանդ յամպ մի լի ցօղով քաղցրութեան քան տաղտուկ անձրևով, որպէս զի նշան կացցէ այն վկայութեան յաւիտենից եթէ ոչ և առաքեացէ Ա՛ստուած ջրհեղեղ համաշխարհական։ Յայնմ հետէ և

1 Ծննդ. Թ. 9, 10 և այլն։

այսր երևի ծիածան յերևոյթս երկնից լբրև զմի ՚ի շքեղ զարդուց աթոռոյն Ա՛ստուծոյ՝, տպաւորեալ ունելով ինքեան զողորմութիւնս նորա։

Ա՛ղօթքն տիեզերք, և երկրորդ անգամ վերբերի աշխարհ՚ի ջուրց. այլ՚ի կրկին նորոգութեանս ոչ ջնջին ՚ի նմանէ աստուածական վրէժխնդրութեան հետք։ Յաւաջ քան զջրհեղեղն բարգաւաճ և այն և զօրաւոր բնութիւնք արարածոց. այլ հեղեղք անհնարինք զոր ած Ա՛ստուած յերկիր, և ողողմամբն ընդ հարուստ ժամանակ խանգարեցան հիւթք որ ՚ի նմա։ Ա՛յնպէս ծանրացեալ և օդոյն սաստիկ խոնաւութեամբ, ազդողագոյնս արար զապականիչ մասունսն. և տկարացեալ առ հաստատ կազմութեան տիեզերաց, համառօտեաց առ սակաւ սակաւ զաւուրս մարդկան, որ ձգէին յաւաջ մինչև ցհազար ամ։ Ա՛ղուաղեաց և զօրութիւն բանջարոց և տնկոց, որպէս զի հարկ լինել զմիս անասնոց կարգել մարդկան ՚ի կերակուր[2]։

Ա՛յժան իսկ էր առ փոքր փոքր խաթարել և այլոց հանդամանաց առաջնոյ կազմածոյն. և փոփոխութիւնք արարածոց գոյժէին մարդկան, թէ ոչ ևս ակնարկէ ընդ նոսա Ա՛ստուած որպէս յաւաջն, յորմէ հետէ բարկացուցին

1 Եզեկ. Ա. 28։ Յայտն. Դ. 3։ 2 Ծննդ. Թ. 3։

զնա մեծելեան յանցանօք իւրեանց ։

Ել անծանօթ ինչ է երկայնութիւն ամաց առաջնոց՝ նշանագրեալ՚ի պատմութիւնս ժո ղովրդեանն Ա՛ստուծոյ՝ և առ այլս ազգաց, որոց և վաղնջուց աւանդութիւնք զոյցս տան զայսցանէ[1] ։ Արագել մահուն եցոյց մարդկան զայսանի ևս վրէժխնդրութիւն մեղաց . և զի գամ քան զգամ յաւելուին մարդիկ՚ի մեղս, պարտ էր և պատուհասին աճել օր քան զօր ։

Ինքնին իսկ փոփոխումն կերակրոց յայտ առնէր նոցա զիւրդ օր ըստ օրէ խանգարել վիճակ կենացն . քանզի ըստ չափու վաթսուն ըեղոց նոցա յուժէ, և քան զևս որկորաժէտք և արիւնախանձք հանդիպակէին լինել ։

Յառաջ քան զաւուրս ջրհեղեղին յանբաւ նաւոր մնունդն իսկ մարդկան պաղումք թօ թափելովք և վաղանցուկ բանջարովք զեռևս երևէին նախկին անմեղութեանն նշմարանք և համբոյր բարուցն՝ յոր հաստեցաք ։ Ա՛յրդիս առ կազդուրելոյ զմարմին հարկ է հեղուլ զարիւն, թէպէտ և սոսկայ ընդ այն բնու թիւնս, և հազիւ խահամոքք քաջարուեստք գեղերեսեն զշաղիղն որ պատրաստին մեզ կե րակուր՚ի յագուրդ ։

Վ՚այլ փոքր գրեսցի այս յաղէտս մեր ։ Ա կաւօրեայ կեանք մարդկան համառօտեցաւ

1 Մանեթ . Բերոս . Եաոխոս . Նիկ . Դամասկ . և այլք առ Ցովսեպ . Հնախօս . գիրք ա . գլ . ե ։ Հեսիոդ . Գործ և Տիւ։

և ևս ՚ի բռնութեանց ՚ի վերայ հասելոց։ Մարդն՝ որ յառաջ ժամանակաւ զուտ ունէր և ընդ կեանս անաւանոյ, սովորեցաւ չինայել և ՚ի նմանիս լուր։ Ո՛ այրապար արդեօք արդել կարձեաց Ա՛ստուած անդէն յետ ջրհեղեղին հեղուլ զարիւն մարդոյ։ Ո՛ զուր դարձեալ՝ յորժամ հրաման տայր զմիս անասնոց ուտել, զգուշացոյց յարենէ ՚ի նշանակ հետոց նախնոյ ընտելասէրբնութեանս[1]։ Յաձախելով յաձախէին սպանութիւնք. և յառաջ իսկ քան զջրհեղեղն սպան Լամէն առ նախանձու զեղբայր իւր[2]. ո՛ չ՝ ամէք զարձեալ ՚ի ծննդոց նորա երկրորդ եկաց մարդասպան[3]. և հաւանիմ ասել թէ զուցէ և այլք ՚ի նոյն մտաբերեցին՝ օրինակ ամբարշտութեանն զնոսա ունելով։ Նայց ոչ ուրուք տակաւին ձեռն արկեալ էր զումա բել պատերազմ։ Յետ ջրհեղեղին ՚ի վեր ելբնեցան աւարառուք աշխարհայ՝ զորս երկրակալս անուանեցին մարդիկ, որ ձգեալք ՚ի գահասիրութենէ՝ ՚ի մահ մատնեցին զժողովս անմեղ մարդկան։ Ո՛ ,եբրովբն այն՝ շառաւիղ գառնութեան Ո՛նայ զոր անէծ հայր լուր, նախ առաջին պատերազմ խմբեաց կանգնել իւր թագաւորութիւն[4]։ Ո՛ յնուհետեւ փառասիրութեանն ախտ զկեանս մարդկան արհամարհէր, և առանց ոխութեան զերեարս

1 Ծնն. թ. 4։
2 Ա՛ղ. Գ. 8։
3 Ա՛ղ. 23։
4 Ա՛ղ. ժ. 9։

հարկանէին մարդիկ, փառս մեծ և գերապոյն յարուեստս համարեալ զսպանութիւն իրերացն։ Ընդէն ամք հարիւր՝ տուղ ինչ աւելի կամ պակաս՝ յետ ջուրցն հեղեղի, և եհար Նոյ տուաճ զազգ մարդկան միւս ևս հարուածով բաժանման լեզուաց։ Ի սիրել անդ սերնդոցն Նոյի ընդ ամենայն երկիր, ուր և հնար էր հաստել բնակութիւն, զօդ ինն մեծ էր միաբանութեանն հաստարակայն այն բարբառորով խօսէին նախաստեղծքն, զոր և Նոյ ուսուցեալ էր որդւոցն իւրոց։ Նոյա նշխար միաբանութեանն առաջնոյ եղծաւ առ աշտարակաւն Նաբելոնի. քանզի որդիք Նոյի յայր թերահաւատութեամբ բերեալք՝ ոչ ինչ արդեօք հաւատս ընծայեցին խոստմանն Նոյեանն՝ չաճել այլև ի վերայ նոցա զհեղեղ ջուրց. որոյ վասն հնարեցան հանդերձել կազմել իւրեանց տեղի ապաւինի յերեսաց այնպիսի աղէտից՝ յուսացեալք յամրութիւն և ի բարձրութիւն հոյակապ ամբարտակին. կամ թէ կամեցան եթէ անմահ թողուլ անձանց յիշատակ՝ ի գործն մեծ՝ մինչև մեկնեալ յերեսաց, ըստ որում է տեսանել ի գիրս Ծննդոց[1]։ Նոյ Նոյեան ոչ եթող նոցա որպէս կարծէին՝ հաստուցանել զչինուածն մինչև յամպս երկնից, կամ թէ ձայն տալ խո-

1 Ծննդ. ԺԱ. 4. 7։

պահել ընդդէմ երկնից՝ զի այսպէս ասացից՝ բարձրութեամբ յանդուգն ամբարտակին . արկ ՚ի մէջ նոցա շփոթութիւն, և եբարձ ՚ի յուշտ նոցին զնաւանի իւրեանց բարբառ : Ընդ ապա բաժանեցան նոքա յազգս և ՚ի լեզուս : Ընդունի Նաբեղոնի, որ խառնակութիւն է յայտարար, եկաց մնաց ՚ի վերայ աշտարակին վկայ գործոյն անկարգութեան, և յիշատակ յաւիտենից մարդկայինս ազգի՝ եթէ ամբարտաւանութիւն ազդիւր է հերձուածոց և խռովութեանց ՚ի մէջ մարդկան :

Ընդանիկ սկիզբն աշխարհի որպէս ստորագրէն մեզ Ասողեստ . սկիզբն երանաւէտ, լի աղէտիւք զկնի . առ Ընտուծոյ որ առնէ զամենայն՝ միշտ սքանչելի . և սկիզբն՝ յոր ուշիւ հայեցեալ՝ ուսանիմք համարել զտիեզերս և զազգ մարդկան ՚ի ներքոյ իշխանութեան առաքելապետին . հաստեալ յոչնչէ քանիւ նորա, պահեալ ՚ի խնամոցն, վարեալ յիմաստութենէ նոր նորա, պատուհասեալ արդարութեամբ, ապրեալ ողորմութեամբ նորա, և ՚ի ներքոյ ձեռին նորա հանապազ :

Որպէս իմաստասէրքն ուսուցին յօրինեալ զտիեզերս ՚ի խառնիխուռն վարելոյ նախեզակ գոյից, կամ որպէս իմաստնագոյնքն ՚ի նոցանէ ասացին՝ աշխարհս զնիւթ մատակարարեալ իւրումն հաստչի, որոյ ոչ ևս կայ ՚ի կամն ակնարկութեան նորա ՚ի գոն, և կամ յառա

ջին սահմանի էութեանն, և կապէ զնա ընդ օրէնս՝ զոր ոչ մարթի եղծանել և լինքն։

Ա.յլ ազգ տան մեզ զիրացդ հաւաստիս Ա՛ովսէս, և նախահարքն զորոց արձանագրեաց Ա՛ովսէս զաւանդութիւն։ Ա.յլ իշխանութիւն է Ա.ստուծոյ, զորմէ գրէն Ա՛ովսէս. նա կարող է առնել և լուծանել անդրէն զգործն՝ որպէս զիարդ հաճոյ է նմա. օրէնս հաստէ քնութեան, և բառնայ յորժամ կամք ենանա։ Ար և ՚ի գործել զինչանան մեծամեծս ՚ի ժամանակի յորում գրեթէ ամենայն մարդիկ մոռացեալ էին զնա, և ՚ի հարկել զքնութիւն արարածոց թոզուլ զհաստատուն և զանխախուտ օրէնս իւրեանց, յայտնի արար թէ լինքն է իշխան ամենայնի, և ՚ի կամաց նորա միայնոյ հաստատուն կան անշարժքն։

Ա՛նգլի արդարև մոռացեալ էր մարդկան զայսոսիկ. որոց հայեցեալ յանվթար գեղեցիկ կարգս տիեզերաց՝ կարծեցին թէ ՚ի սկզբանէ անտի այս լինքնագիր կարգ պահեալ էցե։ Ա՛ման որոյ և ՚ի պաշտօն առին՝ ոմն զտիեզերս, կէսք զաստեղս, այլք զտարերս և կամ որ այլ ևս մեծամեծ մարմինք յաշխարհի։ Ո՛չ հաւատարն ապա լինքեան եցոյց Ա.ստուծ զբարութիւն՚ի վերայ ազգի մարդկան՝ լուծանելով՚ի մեծամեծ դէպս զօրէնս քնութեան. յոր սովորեալ մարդկան՝ ոչ միայն ոչ ևս ընդոստնուին նոքօք, այլ և պատճառս յայն-

ցանէ առեալ՝ արտաքոյ Աստուծոյ իմանային զմշանջենաւորութիւն, և զինքնիշխան այլ ազատութիւն. այսքան էր կուրութիւն մարդկան։

Օ՜այսոցիկ սքանչելեաց գիւշատակս իբր յանստուտ արձանագրի դրոշմեալ առաջի առնեն Ձառք պատմութեանց ժողովրդեանն Աստուծոյ. որոյ հարազատութեանն ինքնին կարգ իրացն վկայէ, և բարեպաշտութիւն գրելեաց, և որոց խնամով հասուցին մեզ զնոսա. որք և ցուցանեն որպիսի ինչ է ամենակալ իշխանութիւն մեծին Աստուծոյ տեառն ամենայն արարածոց. հնազանդելով զնոսա կարգեալ օրէնսդրացն, և այլ դարձեալ օրէնս տալով յորժամ կարևւոր դատեցի սեթափել նորահրաշ սքանչելեօք զմտքերեալ սիրտ մարդկան։

Առանիկ Աստուածն զոր քարոզէ Մովսէս՝ ի գիրսն իւր, որում միայնոյ պարտ է երկիր պագանել. Աստուածն զոր պաշտեցին նահապետք յառաջ քան զՄովսէս, Աստուածն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ. Աստուածն որում հայր մեր Աբրահամ զմիամօրն պատարագեաց, որում քահանայապետ եկաց Մելքիսեդեկ օրինակն Քրիստոսի, որում ողջակէզս մատուցանէր հայր մեր՝ նոյ ելեալ ի տապանէ. զոր դաւանեաց Աբելարդարն՝ զընտիր ընտրութեան հանեալ նմա պատարագ. զոր քարոզեաց Մելքիսեդեկ որ ծնաւ Ադամայ փոխանակ Աբելի՝ որդւոյ

իւրոց, որք և կոչեցան որդիք Աստուծոյ. զոր Աքաամ ինքնին եցոյց զաւակաց իւրոց զնորաստեղծին իւր, և որ միայն կարող էր վախճան ածել չարեաց Թշուառական ծննդոցն։

Պետեղէմ իմաստասիրութիւն, որով խրատ տիմք այսպիսի խորհուրդս սուրբս բերել զարարչէն բնութեանս. գեղեցիկ աւանդ, որ գիշատակ մեծամեծաց նորա հասուցանէ առ մեզ։ Արդարև սուրբ է ժողովուրդն Աստուծոյ, որ անխափան՝ ի սկզբանէ հասոյց մեզ զլուսաւոր աւանդս զայս և զիմաստասիրութիւն։

ԴԻՄՈՒՄ ԱՐԿԱՐՈՒԹ

Աբրահամ և Նահապետք.

Յետ քանզի առ նահապետաւն Աբրահամ կարգաւորագոյն էառ կերպարան ժողովուրդն Աստուծոյ, կարեւոր համարիմ, վերհաձն տեր, աստանօր փոքր մի զկայ առնուլ յայլն մեծ։

Ոննաւ Աբրահամ յամին երեքհարիւրորդ ևնեերորդ յետ ջրհեղեղին, ի ժամանակի յորում Թէպէտ և համաւօտեալ էին աւուրք կենաց մարդկան, սակայն դեռ երկայնակեաց էին յոյժ։ Ամն ինչ վախճանեալ էր Նոյ, և Մեմանդրանիկ որդի նորա կենդանի էր տակաւին, ընդ որում եկեաց Աբրահամ գրեթէ զամենայն աւուրս կենաց իւրոց։

Արդ տես դու ինձ զաշխարհ նորագործ, և այն ինչ ողողեալ ի ջուրցն հեղեղաց. յորում ժամանակի ոչ իմիք կարօտանային մարդիկ հուսկ յարարչագործութիւն ի ծանօթութիւն միութեան Աստուծոյ և պատշաճ պաշտամանցն, զի բաւական էր որ ինչ Ամատայ և ի Նոյէ աւանդեցաւն նոցա։ Այր և այնպէս

համաձայն էր մտաց և բանի, զի անհնար Թուէր Թէ ուրեք երբէք աղօտասցի կամ մոռասցի ՚ի մարդկանէ լուսաւոր և անհրաժեշտ Ճշմարտութիւնս։

Վասնիկ նախնի ժամանակք աստուածպաշտութեան մինչև ցԱբրահամ, յորս շատ էր մարդկան առ՚ի խեղաթիւրն սեծամեծացն Աստուծոյ բան նոցա և անցեալոցն յիշատակութիւն։

Վասն անգոր էին միտք մարդոյ և ապակառնեալ։ Երբև օր քան զօր հնանայր աչխարհս, պղտորէր և ուսուցն մարդկան ՚ի վերայ գործութեանցն զոր ՚ինձանեաց ընկալեալ էին։ Ոմրեք ստահակք և անխրատք ոչ ևս լսել ախորժէին ձայնի ծերունի հասուց իւրեանց, զոր գոգցեա Ճանաչէին իսկ ոչ՝ բազմայեղխրտրոցաւ սերնդոց օտարացեալ՚ի նոցանէ։ Վասնոր նուհեան երկրաքարշ միտք մարդկան ծանրանայր յիմանալին յառել, և երևելեաց միայն ծունր ածելով նոցա՝ խաւար կռապաշտութեան ձգէր ընդ տիեզերս։

Յայնժամ այն որ զնախաստեղծն պարտեաց՝ կշտամբինդ վայելէր յարգասիս նենգ գործեան իւրոյ, և տեսանէր լի զարդիւնս ասաՅելոցն, "Նղելիք որպէս զաստուածս,,։ Ո՛ւզընթաց բանից զհետ սկսեցաւ շինել՚ի միտս մարդոյ զաստուածութիւն ընդ արարածս. և բաժանել զանուանն զայն՝ որոյ ա

հաւատոյ թէ ոչ յանհաղորդականութենէն անդր կատարեալ կայ : Յաջողէին խորհուրդք կամաց չարին . մարդիկ ՚ի մարմին և յարիւն հաւատեալք՝ անջնջելի ունէին ՚ի միտս զաղօտ յիշատակ աստուածական ինքնաբաւ զօրութեանն, այլ աղխեալ յորոց զգայութենն նոցա հարկանէին՝ երկիր պագին ամենայնի յորում երեւէր ազդումն ինչ և զօրութիւն : Այնմ իրի ա րեգակնդ նախ և աստեղք՝ որք և ՚ի հեռաստանէ յայտնի էին , և հուր և տարերք՝ որոց նոյնպէս ակներև էր զօրութիւն , ընկալան զերկրպագութիւն : Այս նոցանէ ապա յաստուածութիւն վերառեալ լինէին թագաւորք հոյակապք և յաղթող տիեզերակալք, և որք զարձեալ ՚ի գիւտս կենցաղօգուտս երևելի հանդիսացան : Այնժին մարդիկ զվերխ հպատակութեան իւրեանց առ զգայութիւնս . զգայութիւնքն զաստաւոր կացին ամենայնի , և հակառակ մտաց՝ զաստուածականն ետուն տանել պաշտօն ամենայնի որ ղից անուամբ երկրպագեցան յաշխարհի :

Այնմ իրթնապաւ յայնժամ նախկի շքեղազարդութիւն մարդոյն , և ուրպէս եղծաւ ՚ի նմա պատկերն տիրական : Այս մինչ հնար էր Այստուծոյ հաստել զմարդն այսքանեօք խեղաթիւր յօժարութեամբքորտակաւ ՚ինամ ՚ի վեր երևէին : Այս և անբանապոյն ախտաժանն այն ՚ի նմա՝ ծառայել ամենայնի , և ոչ

բնիկ տեառն իւրում, յայտնապէս ցուցանէր զձեռն օտար որ աղաւաղեաց բովանդակ ըզ-պործն Աստուծոյ յոգւոջ մարդոյն, մինչ զի ուր ուրեմն եր այնուհետեւ և զհետան նշմարել՝ ի նմա։ Արեալ մարդոյ յանմիտ յօժարութենէ աստի որ բռնացաւ՝ ի նա, թաւալէր անարգել՝ ի խոհերս կուապաշտութեան։

Յանհնարինս Աստուածային շուրջանակի եղծագործ ամբարշտութիւնն այն. որ զի մի ապականեացէ զբնաւ ազգ մարդկան, և շինուած ցէ՝ ի սպառ զլոյս աստուածգիտութեան, կոչեաց Աստուած զԱբրահամ զծառայ իւր. զի համբէր՝ ի տան նորա և յազգատոհմի բարձրացուցանել զպաշտօն իւր, և պահել անբիծ զնախանձ աւանդս արարչութեան աշխարհի, և աստուածային տեսչութեան յամենայն՝ ի մարդկայինս։

Յամենայն ժամանակս անուանի եւայց Աբրահամ յարևելս։ Ոչ միայն նբրայեցիք հայր զնա վերաձայնեն, այլ և Նդովմայեցիք առ՝ ի նմանէ պանծան զծագումն ունել. այլ և Արաբացիք յոմայելէ յորդւոյ նորա համարին զազգ իւրեանց սերեալ՝. և հաւատացիք՝ զի՝ ի սկզբանէ հետէ ունին զԹլփատութիւն. և ոչ յաւուրն եօթնեերորդի Թլփատին որպէս Հրեայքն, այլ ամաց երեքտասանից,

1 Ծննդ. ԺԷ. ԺԱ։

որպէս ըստ գրոց հայր նոցա Իսմայէլ [1]։
և նովքին օրինօք վարին ցայսօր և Մահմետականք ։ Ի ձանխուլ ինչ է անուն Աբրահամու և Ռեետուբայ և յայլոց ազգաց Աբարիոյ գրոս և ծնեալս ասէ սուրբ գիրն յանկողնոյ նոցա [2] ։ Իր Աբրահամ՝ի Ռաղիացուց աշխարհէն. և Ռաղիացիք՝ ազգ անուանի յաստեղագիտութեան՝ մի զնա Ճանաչէն՝ի հոյակապ աստեղագիտաց իւրեանց [3] ։ Ի խլատանք Աբոլոց՝ Թագաւոր կոչեն զնա Ռամասկեայք. բայց ոչ համարին զնա ընիկ, այլ եկ՝ի կողմանցն Ռաբելացւոց. և յաւելուն Թէ եթող նա զԹագաւորութիւն Ռամասկոսի՝ երթալ ընակել յաշխարհին Ռանանացւոց, այն որ կոչեցաւ յետոյ Իրէաստան [4] ։ Բայց լաւ և աս տեսանել զոր ինչ միանգամ նշանագրեցին մեզ վասն մեծի առնն Ճառք պատմութեանց ժողովրդեանն Աստուծոյ ։

Իսելամուտ եղաք ապաքէն, զի զառաջնոցն զվարս բերէր յանձին Աբրահամ, զմարդկանն որ յառաջ քան զՀաստատել Թագաւորու-

1 Ծննն. ԻԵ. 25 ։ Յովսեպ. Հնախօս. գիրք ա. գլ. ԺԴ ։
2 Ծննն. ԻԵ ։ Ակէքս. Բազմավէպ. առ Յովսեպ. Հնախօս. գիրք ա. գլ. Ը ։
3 Բերոս. Հեկատ. Եւպոլ. Ակէքս. Բազմավէպ. և այլք առ Յովսեպ. Հնախօս. գիրք ա. գլ. Ը ։ Եւ Եւսեբ. Պռեպառաս. Ա-էպ. գիրք Թ. գլ. ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, և որ գինի ։
4 Նիկ. Դամասկ. գիրք Դ. Պտ. համալ. ի Հռոմ. վէնն. և առ Յովսեպ. Հնախօս. գիրք ա. գլ. Ը ։ Եւ Եւսեբ. Պռեպառաս. Ա-էպ. գիրք Թ. գլ. ԺԶ ։

թեանց՝ի վերայ երկրի։ Նախաւարքն յապաշխարութեան իւրում, և ինքն և ընտանիքն հովուական կենաց պարապէին, որ հրաշալին է պարզութեամբն և անմեղութեամբ։ Նազում էին նորա անդեայք և ծառայք և արծաթ. այլ ջունէր անդս կամ կալուածս[1]. և սակայն կայր յայլում թագաւորութեան որպէս թագաւորացն պատուեալ յամենեցունց, և ոչ ընդունելոյ հրամանաւ գրաւեալ[2]։ Յառաքինութեան և յարդարութեան վարուց առաջնորդեալ Աստուծոյ, արդոյ լինէր յաչս բոլորեցուն։ Իբրև այր թագաւոր յուխտ մտանէր ընդ որս խնդրէին զնիզակակցութիւն նորա. վասն որոյ համբաւեցաւ առնախանձ թագաւոր ոմն լինել։ Ձեռն յաղթակաց՝ խաղաղութեան զհետ կրթեալ, բայց և՝ի պատերազմ արշաւէր առ ապրեցուցանելոյ միայն զտառապեալ նիզակակիցսն[3]։ Եւ արդարև ապրեցոյց զնոսա, և մեծապանծ յաղթութեամբն խնդրեալ զվրէժ նոցա, դարձոյց՝ի նոսա զստացուածըս նոցին զորս թափեաց՝ի թշնամեաց, ոչ ինչ առեալ՝ բայց միայն զտասանորդն, զոր մատոյց Աստուծոյ, և զմանն օգնական գնդին որ էրթեալ էր ընդ նմա՝ի պատերազմ։ Այլ և զինի մեծի երախտեացն մերժեաց նորօրինակ մեծանձնութեամբ զպարգևս թագաւո-

1 Ծննդ. ԻԴ. և այլն։
2 Ծննդ. ԻԴ. ԻԱ. 22, 27։ ԻԴ. 6։ 3 Ծննդ. ԻԴ։

բացն, ոչ յանձին կալեալ զի ոք ՚ի մարդկանէ պարծեցի թէ ես մեծացուցի զԱբրահամ։ Այլ ումեք պարտապան լինել կամէր, քայց միայն Աստուծոյ իւրումն խնամակալուն, և զնա միայն պաշտէր անվթար հաւատովք և հնազանդութեամբ։

Նահատակեալ նովքին հաւատով, եթող զերկիր ծննդեան իւրոյ զալ բնակել յաշխարհն ՚ի ցուցեալ նմա յԱստուծոյ ։ Աստուած՝ որ կոչեաց զնա և հաձեցաւ յուխտ մտանել ընդ նմա, կնքեաց զպայման ուխտին օրինակ զայս ։

Ա՝կայեաց թէ Աստուած լինի նմա և զաւակի նորա, այսինքն ե ինամակալու՝, և նոքա պաշտեսցեն զնա միայն որպէս Աստուած արարիչ երկնի և երկրի ։

Խոստացաւ դարձեալ նմա տալ զերկիրն Քանանացւոց ՚ի ժառանգութիւն որդւոց նորա և՚ի տեղի պաշտաման Հնմարիտ կրօնից[2]։

Եւ մինչ ոչ դոյր Աբրահամու որդի, և Սարրա կէն նորա ամուլ էր, երդուաւ Աստուած յանձն իւր և ՚ի Հնմարտութիւն իւր յաւիտենական, տալ նմա զաւակ ՚ի կնոջէ անտի որպէս զաստեղս երկնից բազմութեամբ, և որպէս զաւազ առ եզր ծովու[3] ։

Բայց աւասիկ քեզ գերագոյն պայման դա

1 Ծնն. ԻԲ. ԺԷ ։
2 Անդ ։
3 Անդ. ԺԲ. 2 ։ ԺԵ. 4, 5 ։ ԺԷ. 19 ։

ջանց առաւածային ուխտին : Ի վին կա-
պաշտութեան գահակից ընկերուին զանձինս
ամենայն ազգք երկրի : Խոստանայ Ա.աստուած
Ա.բրահամու՝ ի նմա և՝ ի զաւակի նորա օրհ-
նել ամենայն ազանց՝ . զի ամենայն ազգ և
ազինք՝ որ կուրացեալ մոռանային զարարիչ
իւրեանց , նովաւ կոչեցին յաստուածգիտու-
թիւն՝ յորում է տիրապէտ օրհնութիւն :

Ասվաւ հայր կարգեցաւ Ա.բրահամ ամե-
նայն հաւատացելոց , և զաւակ նորա աղբիւր
օրհնութեան , որ արբուցանելոց էր զամենայն
տիեզերս :

Ա.նվիմբ ցուցաւ գալուստն Ա.եսիայի քա-
րոզեալ կանխաւ առ հարս մեր . այլ որպէս
այն՝ որ հանդերձեալ է փրկել զամենայն հե-
թանոս , և զամենայն ազգս որ են՝ ի վերայ
երկրի :

Ա.ռաքել շաւաւիղն օրհնութեան խոստա-
ցեաւ Ա.նայն , նոյն և ուղէշ և շաւաւեղ Ա.բ-
րահամու :

Ա.յսպիսի էր ուխտն հաւատատուքեան , և
այսոքիկ պայմանք դաշինն : Ի վկայութիւն
այսոցիկ տուան Ա.բրահամու օրէնք թլփա-
տութեան [2] , ցուցանել թէ Ա.ստուծոյ է այրն
և ծնունդ նորա :

Ի գոյր Ա.բրահամու որդի յորժամ օրհ-

1 Ծննդ . ԻԲ . 3 : ԻԸ . 18 : 2 Ծննդ . ԺԷ :

ներ Աբուած զգաւակ նորա. նաև զամն բա-
զումս ոչ եւս նման որդի. յետ ժամանակաց
ծնաւ զԻսահակ. որում Թէպէտ և հասանէր
նոյնպէս հայր լինել յոգնաթիւ ժողովրդեան,
այլ ոչ ժողովրդեանն ընտրելոյ՝ որ խոստա-
ցեալ էր Աբրահամու [1]: Ընդունել պարտ էր
հօր ազգին ընտրելոյ Աբրահամ և ի Սար-
բայէ կինոջէ նորա՝ որ ամուլ էր: Եւ ահա իբ-
րև ամաց էր երեքտասանից Իսմայէլ, ծնաւ
ցանկալի մանուկն, և կոչեցին զնա Իսահակ [2],
որ Թարգմանի ծաղր. Աբդարև զաւակ ցնծու-
Թեան, զաւակ աքանչելեաց և որդի աւե-
տեաց. որ և ծնանելովն յայտ արար Թէ նոքա
են որդիք հարազատք Աստուծոյ՝ որ ընդհակ
են ծնունդք:

Ի չափ և յարբունս հասեալ էր զաւակն օրհ
նուԹեան. և ի դէպ էր հօրն ակն ունել ի
նմանէ որդւոց: Ընդ յանկարծակի հրամանք
Աստուծոյ հասանէին առ նա զենուլ զոր-
դեակն [3]: Նաբէ դժուարին նահատակուԹեց
հաւատոյ: Ոչհան Աբրահամ զԻսահակ ի
լեառն ցուցեալնմա Աստուծոյ, և բուռն հար-
կանէր զենուլ զորդին՝ որով խոստացեալ էր
Աստուծոյ առնել զնա հայր ժողովրդեանն
ընտրելոյ, և մեսիային: Ասատոյց Իսահակ
զպարանոցն ընդդէմ սրոյ հօրն, և նա անդէն

1 Ծննդ. ԺԲ. ԺԵ. 2: ԺԶ. 3, 4: ԺԷ, 20: ԻԱ. 13:
2 Ծննդ. ԻԱ. 2, 3:
3 Ծննդ. ԻԲ:

կամէր կշռել զհարուածն։ Այլ հաձեալ Այ-
ուսոյ ընդ հնազանդութիւն հօրն և որ-
դւոյն, ոչ ինչ աւելի պահանջեաց ՚ի նոցանէ։
Յիրաւի արժանաւորք ոմանք գտանէին եր-
կոքին սոքա ալք հրաշակերտք նախածնող լի-
նել Աբրահամոյ, տալով աշխարհի զՅիսրա-
էլ և զքնադնկատրագիր կամաւոր պատարագի զեղ-
ման նորա, Հաշակեաւք հոգւով զլեզի Հաշա-
կաց գառնութեան խաչին։

Ներկրորդ Այսուաց առ Աբրահամ զիսոս-
սումն իւր փոխանակ հաւատոց նորա ՚. և
օրհնէ վերստին զսուն նորա, և ՚ի տան նորա
զորս ընդհանուր ազգք են յաշխարհի։

Ներ արդարև պաշտպանեաց Այսուաց և
Յակոբայ որդւոյ նորա և Յակոբու զաւա-
կի նորա, որ հօրն իւրեանց եղեն նմանողք,
զհետ կրթեալ հնի աւանդից, և հովուու-
թեան կենաց հպատակեալ ըստ առաջնոց, և
զսուն իւրեանց պայազատեալ, որպէս էր սո-
վորութիւն յառաջ ժամանակաւ հարց իւրա-
քանչիւր ազգատեալ ՚ի տան իւրում։ Այս-
պէս ըստ աձել ժամանակաց, ՚ի փոխել կար-
գաց և կանոնաց մարդկութեանս, բարձր ՚ի
զլուխ պանծալին կրօնք սուրբ և անարատ
քահանայապետութեան նախնեաց Այբրահամ
՚ի զաւակս նորա։

՚ Ծննդ. ԻԲ. 18։

Նմին երկնչեալ Աբրահամ կրկնել և երեք կնել առ Նահակ և առ Յակոբ զխոստումն նոյն իւր առ Աբրահամ[1]. և որպէս անդ ուրեմն Աբրահամ Աբրահամու անուանէր զանձն , կոչէ արդ նոյնպէս Աբրահամ Նահակայ և Աբրահամ Յակոբայ :

Ինդ հովանեաւ խնամոց նորա բնակեցեալ երբեմն ազգս ազգս ակառուածոց յերկրին Քանանա նացուց, բայց երբեք նժդեհս և պանդուխտս՝ ոչ ժառանգեալ անդ և ոչ քայլ մի ոտին[2], մինչև առնոյն ածել ձգել զՅակոբ յԱղթամա , ուր բազմացեալ որդւոց նորա , աձեցին փութանակի յազգ մեծ , ըստ որում խոստացեալ էր Աբրահամ :

Արդ Թէպէտ և սերնդեամբ բազմանալոց էր ժողովուրդն զոր յարուցանէր Աբրահամ անդադար յուխտին իւրում, և՛ի սերմն անդր սիրելոց էր օրհնութիւնն , սակայն Աբրահամ սքանչելի եղոյց և՛ ինձա զընտրութիւն շնոր հաց իւրոց : Քանզի ընտրեալ զԱբրահամ՝ և՛ի միջոյ ազգաց , ընտրէ զՆահակ յորդւոցն Աբրահամու : Եւ զարձեալ յերկուց որդւոց Նահակայ զՅակոբ առնու՝ զոր կոչէն Նահակ :

Ընտրութիւնն Յակոբայ հաստատեցաւ յայսոսիկ օրհնութեամբն Նահակայ,

1 Ծննդ . ԻԶ . 11 : ԻՉ . 4 : ԻԸ . 14 :
2 Գործոց է . 5 :

որ՝ի վերին երեսս յանկարծադէպ ինչ թուէը, այլ արդեամբք՝ տնօրինութիւն մեծ էր գործըն իմաստութեանն Աստուծոյ։ Եւ սահմանեալ էր գործս այս լի մարգարէութեամբ և խորհրդով՝ յայտնեալ պատգամաւ Աբեթկայ մօր Նաասայ և Յակոբայ անդատին՝ի ժամանակի՝ յորժամ կրէր նա զնոսին յարգանդի։ Այնպէս տագնապեալ կնոջն աստուածապաշտի՝ի կուռսդ անտի որով մարտնչել թըւէին յորովայնի նորումն որդիքն նը, եհարց պատգամ՝ի տեառնէ, և ընկալաւ պատասխանի. «Երկու ազգք են յարգանդի քում, և երկուքն կրտսերոյն ծառայեսցէ»։ Ի կատարումն այսր պատգամի ընկալաւ Յակոբ յեղբօրէն իւրմէ զիրաւունս անդրանկութեանն երդմամբ հանդերձ՝, և Նահակ օրհնեաց զնա, այս ինքն է՝ զի հաստատեաց զնա յիրաւունսն որ ընդհեցան նմա՝ի վերուստ։ Եդե գուշակ էին իրքս ընտրութեանն Իսրայէլացւոց որդւոց Յակոբայ քան զԱդովմայեցիսն զորդիս Նաասայ. և սոյն այս գուշակեր դարձեալ զհանդերձեալ ընտրութիւնն հեթանոսացն, որ նորոգ կոչեցան՝ի Հրեաստոսէ յուխտ կտակին՝ի վեր քան զնախնի ժողովուրդն։

Ընդ Յակոբայ երկոտասան որդիք. ստեղ են երկոտասան նահապետք երկոտասան

1 Ծննդ. ԻԵ. 22, 23, 32։

յեղից։ Ա՛մենեքին նոքա զաւակք ուխտին ե-
ղելոյ առ Հարս, այլ յամենեցունց զՅուդա
ընտրէ Հայր Թագաւորաց ազգին սրբոյ և
մեսիային՝ որ խոստացեալն էր Հարց իւրոց։

Ա՛նդր յետ ժամանակի դրժեալ տասանց
ցեղից՝ ՚ի բաց ոտնձգոց էին ՚ի ժողովրդենէն
Ա՛ստուծոյ, և ՚ի ցեղին Յուդայ ևեթ կալոց
էր նախնեաց օրհնութիւնն և կրօնք աստուած-
պաշտութեան, և նա միայն հանդերձեալ էր
ժառանգել զերկիրն Ա՛նանացւոց և զակն-
կալութիւն յուսոյ մեսիային, և ՚ի նմանէ
կոչելոց էր ազգն Յուդայեան, և երկիրն Յու-
դայաստան։ Եւ այսպէս անզեղջ ցուցաւ ըն-
տրութիւնն աստուածային յայս ժողովուրդ
երկրաքարշ, զի մի ջնջեսցի զաւակ նոցա։

Նոյնպես Յակոբ հոգւովն զխորհուրդ այսր
ընտրութեան[1]. քանզի երբեմն ՚ի պարզել ո-
գւոյն շուրջ պատեալ որդիքն զմահճաքն՝ հայ-
ցէին զօրհնութիւն բարւոյ հօրն, եցոյց նմա
Ա՛ստուած զհանդերձեալ վիճակ ցեղից երե-
կոտասանից յերկրին աւետեաց։ Համառօտք
էին բանքն, այլ հոծ մեծահրաշ իմաստիւք։

Վերապանծ էին ամենայն պատգամքն զո-
րս խօսեցաւ վասն եղբարց Յուդայ, և ՚ի վեր
քան զմարդոյ աստուածազգեցիկ զօրութեան.
այլ ՚ի ժամանել առ Յուդա՝ խոյանայ և ևս

1 Ծննդ. խթ։

սրաթռիչ լեզուն. ասէ. “Յուդա, զքեզ
„ օրհնեացեն եղբարք քո. ձեռն քո՝ ի վերայ
„ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն
„ քեզ որդիք հօր քո. կորիւն առիւծու Յու-
„ դա, ի շառաւիղէ ելեր որդեակ իմ, ելեր
„ բազմեցար, ննջեցեր իբրև զառիւծ, և իբրև
„ զկորիւն առիւծու, ո՞ յարուցանէ զնա: Ո՛չ
„ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի պետ յե-
„ րանաց նորա, մինչև եկեսցէ նա՝ որոյ իւրն
„ է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն
„ հեթանոսաց[1]“. կամ որպէս ունի այլ
թարգմանութիւն՝ Թերևս ոչ դոյզն հնագոյն,
և ըստ իմաստիցն նոյն, “մինչև եկեսցէ նա՝
որ գալոց է „. այլովքն հանդերձ զոր արդ ա-
սացաք:

Կարգ բանից մարգարէութեանս ակնարկէ
ըստ գրոյն՝ ի բաժինն որ հասանէր Յուդայ
յերկրին աւետեաց: Նայց յետին բառքն՝
որպէս զիարդ և կամք իցեն իմանալ, ցուցանէ
զնա ինքն որ Յ՝ստուծոյ գալոց էր, պաշտօ-
նեայ և թարգման կամաց նորա, լրումն աւե-
տեաց, և թագաւորնորոյ ժողովրդեան, այն
ինքն է Յ՝եսիայն օծեալ տեառն:

Յ՛ր Յուդա միայն խօսի Յակոբ յայտնա-
պէս՝ զՅ՝եսիայէ՝ յորմէ ծնանելոցն էր, այլ՝ի
նմա բովանդակէ զՀանգամանս համօրէն ազ

1 Ծննդ. խթ. 8:

գին . զի զկնի վարատեղւոյն գարձեալ ընդ դրօշս ունի Յուդայ գումարեցոյ էին միացորդք ժո ղովրդեանն :

Ա՛մենայն բառք մարգարէութեանս մեկին են , բայց միայն գաւազան՝ որ՝ի մեր լեզու նշանակէ թագաւորութիւն , ՚ի բարբառ աստուածաշունչ գրոց յայտ առնէ սովորաբար տէրութիւն , իշխանութիւն , ատենակալութիւն* : Ա՛ տեսանել յաճախ ուրեք՝ի սուրբ գիրս սովին նշանակութեամբ զբառս գաւազան , որ և աստ ուրեմն՝ի մարգարէութեան Յակոբայ ակն յանդիման երևի . և կամի ինն ասել նահապետն՝ թէ յաւուրս Ա՛եսիայի սպառեսցի ամենայն իշխանութիւն՝ի տանէն Յուդայ , որ է բնաբարձ քակտուճն տէրութեան :

Ա՛յդ աւանիկ ժամանակ աւուրց Ա՛եսիային՝ի կրկին նշանաց յայտ առնէ . ՚ի քանդելոյ՝ի սպառ թագաւորութեանն Յուդայ և ժողովրդեանն Իւրէից , և՝ի յառնելոյ նորոյ թագաւորութեան ոչ միոյ միայնոյ ժողովրդեան , այլ ամենայն ժողովրդոց , որոց ամենեցուն պետ և ակնկալութիւն Ա՛եսիայն լինի :

Ա՛ստուածաշունչ գիրք միաբար յորջորջեն զԻրեայս , անուանեալ զնոսա ըստ աւելագանցութեան ժողովուրդ , կամ ժողովուրդ Ա՛-

* Քանզի բնագիրն Եբրայեցւոց , ըստ որում և լատին թարգմանն , աստանօր գաւազան ասէն , ուր մերս իշխան գնէ :

առաջ՝ · իսկ յորժամ զգայնասրտութեան գնէ ժողովուրդս՝ , հնարաւոր առնէ զայլ ազգս խնամոյն , զորս դարձեալ գուշակէ Յակոբ առանձնալ մեռելոյն ։

Զառաքելոյ բանիւ զերահրաշմարգարէս Եհան բովանդակին զբնաւ անցս պատմութեան ազգին Իսրայէլ , և զՆրհատսն որ խոստացեալ էր Իսրայէլ ։ Յայտ առնէն և գլսջոր գութէ ժողովրդեանն Աստուծոյ . և արդիւնք բանիցն յանդիման կան ցոյսոյ ։

Վկայիմ ասել մեկնել քեզ զբանն , և չկա բոնիս իսկ · վասն զի իբրև գամ ի՛ լսջոր գութիւն ժողովրդեանն Աստուծոյ հայիցիս , խնդասուս լցիս քեզ ընդ բանից պատգամացն , և պատահումն իրացն քեզ Յարգման կացցէ ։

---

1 Եփես · կԵ , և որ գինի ։ Հռոմ · ժ · 21 ։
2 Եփես · ՌՀ , 2 , 3 ։ Խթ · 6 , 18 ։ Ծն · 4 , 5 , և որ գինի ։

ԳԼՈՒԽ ԼՐԻՒԱՐՈՐ

Մովսէս, Օրէնք գրաւոր, և ժառանգել ժողովրդեան զերկիրն պարգեւաց։

Ասեաց Տէր Մովսէսի, և զամս երբ երկնաբնակ ժողովուրդն Իսրայէլ անցք կատարս ինչ առաքեցաւ Մովսէս։

Եւ յետ ջրոյ Հարիւթայ և երեանից տանց ժառանգելոցդ Իսրայէլ եկեալ ժողովրդեան երկիրն զոր խոստացաւ նոցա։

Կամք էին Իսրայէլ կրճել զընտրեալսն իւր քաջայոյս լինել՝ ի խոստացեալսն, ոչ ինչ յերկուածելիք՝ զի վաղ համարձակ լցին՝ ի ժառանգելին զոր ստիմանեաց յաւետենից խնամատարեալն իւրոյ։

Վա՛յ առանձին, զոր արար առաջ Իսրայէլ զԱբրահամ՝, ոչ էր լցեալ զերեսս քաջութեան Իսահակայ՝ զորոց կամէր պարգեւել տոհմս զերկիրն և զարտաս նոցա. և՝ ի ձեռն ժողովրդեան իւրոյ ընտրելոյ կատարէ՝ ի վերայ անօրինացն ազգին զհատոյնն և զոտակալն պատուհասեան։

Եւ երկրորդ անգամ, արժան էր պարտասուլ ժողովրդեանն ածելոյ և բազմանալոյ, զի բառնայր գոյին ընդ երկինքն որ Հասանէր նոցա՝. և զօրութեամբ մնանել յոյն, և Հարկանել սատակել զթնակիչսն գոյս անէծ Ա-մուաճ։

Կամք էին Ա՛մուաճոյ գարձեալ, զի ժողովուրդ իւր առցէ Յ\գիպտոս զյափ գառն և անասնեղի ծառայութեանցն. զի՝ ի գալ յաւգաստութիւն՝ սիրեսցէ զազատիչ իւր, և մեծացուսցէ Հանապազ զողորմութիւնս նորա։

Ա՛սակ անտեսութիւն խնամոց Ա՛մուաճոյ՝ զոր ինքնին յայտնեացուզ, երկնչել՝ ի նմանէ Հաւատով և երկայնմտութեամբ։

Ասէ՝ ի Հասանել ժամանակին լսէ ազատակիր ժողովրդեան իւրոյ, որ տանջէր անողորմ՝ ի ձեռաց Յ\գիպտացւոց. և առաքէ զԱ՛մովսէս Թաթել զորդիս իւր՝ ի քննութենէ նոցա։

Ա՛նասնեղոյ առնէն մեծի պատիս ոչ ուժք՝ ի մարդկանէ՝ [1]. երեւի նմա աչեզ և սիրտքան կերպարանօք. յայտնէ նմա՝ Թէ ինքն է Ա՛ր էն. ամենայն ինչ Համեմատեալ ընդ նմա է պատիս առաւեր. “Ա՛ր եմ ասէ որ էն”[2]. էութեան և կատարելութեան յիս միայն բովանդակին։ Յանուն նոր կոչէ զինքն, յայտ առնելով Թէ գոյութեն և կեանք՝ ինձնէն են պատիս

1 Ծննդ. իե. 16։ 2 Ել. գ. 3 Ել. գ. 14։

'ի սեփական տեղւոջ, և ոչն այս է անուն ոչն մեծ Աստուծոյ . անուն ահաւոր, խորհրդաւոր, անհաղորդական, յորում և հաձելեաւ պաշտօն առնուլ աստ յապայս :

Ոչ մանրապատում առնեմ աստ գՀարուածոց նշխատացւոյ , գիտատարութիւն վարաւոնի , գանցանելն ընդ ծովն կարմիր , գմիջն , գփայլատակունս , գպատուն փողոյն , գահապին բարբառն լսելի լեալ ժողովրդեան 'ի լեռնէն Սինայ : Այլ գրոշմիկ Աստուած յերկուս քարեղէն տախտակս գկարևոր հրամանս աստուածպաշտութե և միաբանութեան մարդկան . անդ 'ի ձայն բարձր տայր Մովսէսի և գայլ պատուէրս :

Յանդուգն պահպանութիւն օրինացս պատուիրեաց Աստուած Մովսէսի կարգել աստեան աստղաձեծար ժողովոյ արանց հօթանասնից՝ զոր 'ի գէպ էր ծերակոյտ ժողովրդեան , Աստուծոյ անուանել , և յաւէժական առեան ազգին Հրէից : Նրեւեցաւ Աստուած յանդիման ամենեցուն , և ահեղ յայտնութեամբ փառաց իւրոց և զօրութեան ետ քարոզել զօրէնսն սինեցեոն անդէն կայր :

Մինչև յայնժամ էր Աստուծոյ աւանդեալ ինչ գրով յատաջնորդութիւն մարդկան : Ոչ իւր փառութիւն միայն ունէին Աքրահամեանք ,

և սովորութիւնս ինչ կէր նոցին՝ ինչպէսև ունէին զոր եդ Նաւուած ընդ ազգատոհմին ընտրելոց . և սովին այսու որոշէին յազգաց օտարաց՝ որք չհետ գնային աստուածոց սոցա : Նայց կային յուխտին հիշատակաւ յուսոյն աւ հարան եղելոց , և յայտնի էր ազգ նոցա , որպէս եթէ նոքա են որ պահեն զՆաւուածն Աբրահամու , Իսահակայ և Յակոբայ : Նոյն չափ տգիտութիւն էր մարդկան զՆաւուածոյ , որպէս զի կոչել զնա յանուն արանցն որ երկրի պագուք եղեն նմա , և որոց պաշտպանեաց աջ նորա :

Ել և կամեցաւ Նաւուած՝ ի միտս մարդկան միայն ապաստան առնել զխորհուրդս աստուածպաշտութեան և ուխտի իւրոյ : Նոյն էր ամրագոյն կանգնել պատուարս ընդդէմ յորձանաց կռամոլ պաշտամանն , որ ողողէր զազգ մարդկան , և շինուցանէր՝ ի սպառ զառ կայծեալ լոյն մտաց :

Յորմէ հետէ մեռաւ Աբրահամ , յանհնար բնաւ կալաւ զմարդիկ տգիտութիւն և կուրութիւն : Ի կենդանութեան նորա և խուճինչ վկնի զեռ նշոյլք աստուածգիտութիւն՝ ի Պաղեստին և յԱղեքսոս : Մելքիսեդեկ արքայ Շ ալիմայ "քահանայ էր Նաւուծոյ բարձրելոյ՝ որ արար զերկինս և զերկիր ,, [1] : Աբ-

[1] Ծննդ . ԺԴ . 18 , 19 :

մեկէք արքայ Վերարարացոց, և միւս այլ Ա՛քի մեկէք յաջորդ նորա, երկնէին Ա՛ստուծոյ, յանուն նորա երդնուին, և աբանչանային ընդ զօրութիւն նորա[1]։ Ա՛հիւ տագնապէր վտարաւան արքայ Ադիաբացոց ընդ ասաւնալս մեծին Ա՛ստուծոյ[2]. բայց առ Ա՛ովսեփ խոյնեալ հեռացեալէին՝ի նմանէ առնելոյն։

Օ՛չնաբիան Ա՛ստուած՝ Ադրայեցոց միայն իմանային տէր Ադիաբացիք, և ոչ հանուրց ազգաց[3]։ Օ՛զազանս անգամ և զկերունս՝ի պաշտօն առնուին[4]. ամենայն ինչ աստուած էր բաց Ա՛ստուծոյ։ Ա՛ևհեան իմիկուցոյթուէր աշխարհս, այն որ արարաւ Ա՛ստուծոյ՝ի յանդիմանութիւն զօրութեանէ իւրոյ։ Ա՛ւ ցայն վայր յիմարեալէին ազգ մարդկան, զի և ախտից իւրոց և չարախտաւալատ յանկուցեանց երկըրպագութիւն մատուցանէր։ Ա՛յլ դու մի ընդ այս զարմացիս բնաւ. քէք Հզօրագոյն և անվանելի Թագաւորութիւն որպէս՝ զախտից բրտնութիւն։ Ա՛սեալմարդոյ աստուածս համարել զՀզօրս զօրութեամբ, և տեսեալ զանձն ձգեալ և վարեալ ուժգին յախտից արբանեկութիւն, կարծեաց զբռնութիւնն զայն օտար՝ Թէ յինքենէ էցէ, և անդէն վաղվաղակի կոչեաց զնա աստուած։ Ա՛յսան որոյ և

1 Ծննդ. ԻԱ. 22. 23. ԻՋ. 28, 29։
2 Ծննդ. ԺԴ. 17. 18.
3 Եսք. Ե. 1. 2. 3. Թ. 1. և այլն։
4 Եսք. Ը. 26։

բիւրս ձօնեցին մարդիկ բազինս աղաեղն ա-
րոյ, և զխոհերս պղծութեանց յորոց առա-
կացեալ դողայ բնութիւնս՝ խառն ի ներքս
մատուցին ի զոհս պատարագաց[1]։

Վնդ ձեպեաց գործակից և անգթութիւն։
Ընդ ութիւնս վրիժապարտ զարհուրեալ վասն
յանցուածոց իւրոց, որպէս յոտիս ոմն հայէր
յաստուածութիւն.և անհնարին վարկուցեալ
հաշտ առնել զնա զոհիւք երկնից, պարտ հա
մարեցաւ հեղուլ և զարիւն մարդկան։ Վնդ
արհաւիրք շլացութեան շտապ տագնապի ի
վերայ հասուցանէր ծնողաց՝ պատարագել
զորդիս իւրեանց, և ձեռնձերել զնոսա ընդ
լանկոց առաջի աստուածոցն։ Յաձախեալ էր
յաւուրց անտի Մովսէսի այս գործ գառնու-
թեան, որ և ինքն էր յահագին չարեացն զորոց
վրէժխնդրութիւն պատուիրեաց Իսրա-
Իսրայէլացւոցն։

Վայլ ոչ Վմովրհացիք միայն անկրկնատանալ
ին յայսոսիկ. ամենայն ազգ որ ընդ արեգա-
կամբ՝ զոհս մատուցին զնմանիս իւրեանց[2].
և յամենայն տեղիս պաշտեցին զչարաշուք և
զգժնպակ աստուածս, որք թշնամի անհամ

1 Ղևտ. Ի. 2, 3։

2 Հերոդ. գիրք. ը. գլ. ճէ։ կես. յղ. պոփերպղմ. գողգ. գիրք ը. գլ. ժե։ Դիոդ. գիրք ա։ Պլին. գիրք Ը։ Ամեն. գիրք ժէ։ Պորփ. յղ. Ապոլ. գիրք ը։ Յորնանդ. Պոփմ. կէբ. գլ. խթ։

բոյր արձանացեալ մարդկութեան՝ զայնպիսիս
խնդրէին պատարագս ։

Իբրև այս թանձրամած տգիտութիւն պա-
տեալ պաշարէր, մտաբերեաց մարդ՝ պաշ-
տել և զձեռակերտս իւր ։ Ա՛յ յանհնարից ինչ
վարկաւ դնել՛ի քարեղէն պատկերս աստուա-
ծական ոգի. և մոռացեալ՛ի սպառ զարա-
րածն լինել իւր Ստուծոյ, կարօղ ևս վար-
կաւ զանձն արարչագործել աստուած ։ Ո՛հան
դուրժէր հաւատալ այսոցիկ՝ եթէ իրքն ոչ
յանդիման կային և ցուցանէին ակներև թէ
ոչ միայն հաստարակաց էր թանձր և անբանա-
գոյն մոլորութիւն, այլև Ճարակեալ յոյժ քան
զամենայն ազգս մոլորութեանց, և անցեալ
ըստ մարդկան հնարս բժշկութենն ։ Այլ խոս-
տովանեացուք ապա զանհնարին անմտութիւն
մարդկան. զի որ քան զամենայն վարդապե-
տութենս հաւատաւոր է, և հնչէն առ հասա-
րակ տիեզերք ողջոյն, և յամենայն մասունս
իւրեանց անջնջելի ցուցանեն, ծածկեալ հե-
ռացեալ էր յոյժ յոյժ՛ի գիտութենէ մարդ-
կան ։ Այս աւանդութենն անգամ որ զեռ՛ի
միտս լուսաւորի էր, և պարզէր յանդիման՝ ո-
րոց հայէին խնամով, մերձ էր յեղծումն մատ-
նել. զոր փոխանակէին աղձատանք առասպե-
լեաց լի ամբարշտութեամբ և այլանդակ յի-
մարութեամբ ։

Այնեալ հասանէր ժամն յորում առ պղեր-

զութեան մարդկան ոչ ևս ունէր կալ չքմար-
տութիւն անգիր : Եւ քանզի հաճեցաւ Ա-
տուած յայտնապոյն և ակն օրինադրութեամբ
հաստել յառաքինութիւն զժողովուրդ իւր,
ախորժեաց գրով աւանդել զնոսին :

Յայս գործ կոչեաց զՄովսէս : Եւ այրն
աքանչելի ժողովեաց հատընտիր զՀառս պատ-
մութեան զառաջին ժամանակաց, զՆոյին,
զՆոյէ, զԱբրահամեն, զԻսահակայ, զՅա-
կոբայ, զՅովսէփու . մանաւանդ թէ զԱ-
տուծոյ և զհրաշակերտութեանց նորա :

Եւ ոչ'ի հեռաւորաց ուստեք բռնադատեր
հաւաքել զնախնեաց իւրոց զաւանդութիւնս :
Եւ ծնաւնա , մինչ դեռ ևս անցեալ էին ամք
հարիւր յետ վախճանին Յակոբայ : Որ ծերքն
էին'ի ժամանակին , զամս բազում ընդ մե-
ծի նահապետին կեցեալ էին : Հնչեր դեռևս
անուն Յովսէփայ , և պատմէին աքանչելիքն
զորս արար Ա.տուած'ի ձեռն Հարտար հրա-
մանատարի արքայիցն Եգիպտոսի : Ինո'ի
վեր ժամանակօք ամաց երից կամ չորից մար-
դոց՝ հասեալ լինէր'ի Նոյ , որ ետես զորդիս
Ադամայ , և զոգեաց յարարչագործութիւն
անդր մատեաւ հուպ :

Ոմին երբ ոչ դժուարին ինչ էր ժողովել
զհին աւանդս որ վասն ազգի մարդկան , և
ազգատոհմին Աբրահամու . քան լինէր'ի մի-
ջի նոցա յաղագս այսոցիկ ամենայնի : Ա-

որոյ և ընդ այն օրէնն ոչ է զարմանալ, զի զանցս անցեալս որպէս զյայտնիս յառաջ առնել պատմէ Մովսէս՝ ի գիրս ծննդոց։ Վասն ցուցանելոյն զհաստատութիւն իրացն երևելի յիշատակարանք շրջակայ ազգաց և երկրին Քանանացւոց։

Աբրահամ, Իսահակ և Յակոբ՝ ի բնակել իւրեանց զկողմամբք աշխարհին, կոթողս կանգնեալ էին ամենայն ուրեք վասն անցելոցն որ անցին ընդ նոսա։ Արևելք էին դեռ և տեղիքն ուր հարին նոքա զվրան բնակութեան իւրեանց. ջրհորքն զոր փորեցին յանջրդի աշխարհին արբուցանել զոդիս իւրեանց և զնասլինս. լերինքն ուր պատարագս հանին Աստուծոյ, և երևեցաւ նոցա Աստուած. քարինքն զոր ամբարձին և կուտեցին կարկառ յիշատակ առ յապայ եկելոց. շիրիմքն յորս ամփոփեալ պահէին պատուական ոսկերք նոցա։ Ոչ միայն ընդ աշխարհն ընդ այն հնչէր անուն հոյակապ արանցն, այլ և ընդ արևելս ողջոյն, և բազում ազգք ականատեսքն ոչ անգիտացան թէ նոցա են տոհմ։

Այսպէս ամենայն ինչ՝ յորժամ մտին Աբրահամեանք յերկիրն խոստացեալ՝ զհարս նոցա քարոզէր, և քաղաքք և լերինք և քարինք ձայն տային վասն արանցն հրաշալեաց, և վասն սքանչելի տեսլեանց՝ որով պնդեաց զնոսա Աստուած՝ ինամեալ և՝ ի չնչին առանդան։

Ոչք սուղ ինչ խելամուտ լցեն հնախօսու-
թեանց, գիտեն զնայրդ հետամուտ էին ազգք
նախնեաց արձանս կանգնել և զգուշանալ նո-
ցա, և ոչպէս խնամով՝ի մոլ պահէին որդիք
նոցա վասն որոյ կանգնեցինն զնոսա հարք ի-
րեանց: Այս էր այս ազգ ինչ արձանագրու-
թեան վիպասանութեանց: Յետ ժամանա-
կաց յղկեցան յարդարեցան քարինքն, և փո-
խանակ անգեղեայ և հաստաքեստ կարկառաց
սիւնս կանգնեցին, զորս ապա անդրիք փոխա-
նակեցին:

Ա՛ զարձեալ հաւանեալ իրաւամբք՝ թէ՛ ի
ժողովուրդ յորում անխափան եկաց աստուած-
գիտութիւն, եկաց միաց անդ գրով և յիշա-
տակութիւն հնոցն գարուց. քանզի ոչ բնաւ
հեղգացան յայս մարդիկ: Այաստէ և
այն զի յօրինէին երգս, և ուսուցանէին հարք
որդւոց իւրեանց. և երգելով զայնոսիկ՝ի
տօնս և՛ի ժողով՝ անմահացուցանէին զյիշա-
տակ երևելի երևելի անցից նախկի ժամա-
նակացն:

Ա՛յժմ յայդմանէ ծնաւ քերթողութիւն,
որ բազմապատիկ փոփոխեցաւ ապա. նախնի
ազգ քերթելոյ երևի ցայսօր յերգս և՛ի
տաղս զոր նուագէին նախնիք, և նուագեն
ցարդ և ազգք առանց դպրութեան՛ի գովեստ
աստուածոյութեան, և՛ի ներբողումն հոյակապ
արանց:

Յանդուգն և անսուրբ տիպք երգոցս պատկանաւոր են յոյժ ի յանդիմանութիւն ներընչելոյ քնութեան, որով և աշխոյժ և բուռն թափով ոչ լինչ նուաճին ընդ օրինօք սուրբագան շաղկապութեան՝ որ կարևորն է ի շարագիրս. բայց չափեալ առնմին ի թիւս յանդից, որ առաւելու զուժգնութիւնն, զարթուցանէ զլսելիս, յափշտակէ զմիտս, ձգէ զսիրտն, և սերտէ ի միտս:

Ուսաւելեալ գտաւ ժողովուրդն Աստուծոյ յաստցեալ երգս քան զայլ ամենայն ազինս: Օգտագուման յայտցանէ յիշատակէ Մովսէսի[1], զսկիզբն ևեթ յիշատակեալ, զի յայտնի էր ժողովրդեան որ զհետն գայր: Այլ և ինքն յօրինեաց երկուս. յառաջնումն[2] ստորագրէ զյաղթական անցս ժողովրդեան Աստուծոյ ընդ ծովն կարմիր, և զանդնդաստոյգ սատակումն թշնամեացն, և զայհ և զերկիւղ զինացելոցն: Յերկրորդումն[3] կշտամբէ զապերախտութիւն ժողովրդեանն, յուշ արարեալ նոցա զբ խնամսն Աստուծոյ և զսքանչելիսն: Օ՜նորա գնացին զհետ և այլք ըստ նմանէ. զԱստուած և զհրաշակերտութիւնս նորա երգէին նոքա յերգսն. Աստուած ինքնին ազդէր ի նոսա. և ոչ պոյ ազգ բաց ի ժողովրդենէն

1 Թիւք. ԻԱ. 14, 17, 18, 27 ձն:
2 Ելք. ԻԵ:
3 Բ. Օրինք. ԼԲ:

Աստուծոյ որ աստուածազգեցիկ շարժեաց զլեզուն՝ի քերթուԹիւն։

Այսպէս խորհրդազգայլեալ խօսեցաւ Յակոբ զպատգամն որ վասն որդւոց իւրոց. զի իւրաքանչիւր՝ի ցեղից դիւրաւ կալցի՝ի մտի որ վասն իւր էին պատգամք, և գովեսցէ զնա որ աքանչելին է՝ի բանս իւր, և հաւատարիմ՝ի խոստմունս։

Ամփոփեաւ հասոյց Աստուած մինչև՝ի Մովսէս զյիշատակս անցից որ գործեցան յառաջին ժամանակս։

Ա՛ր այր մեծ՝ տեղեկացեալ այսոցիկ առնայի, և անդր ևս՝ի վեր ամբարձեալ՝ի Հոգւոյն, եկն՝ի գրել զգործս Աստուծոյ։ Նահապետութիւն բանից և պարզութիւն Աստուած անդր արդարև և ոչ՝ի նա ձգեն զհաւատս ընթերցանելեաց և զհետացումն։ Պատմագրեալ նորա զազգ և զծագումն ժողովրդեան Աստուծոյ և զաւանդութիւնս, յարէ արդէն և զբազմարուեստս սքանչելիսն զոր առներ Աստուած յայնժամ յազատութիւն ժողովրդեան։ Վասն որոյ և ոչ զուրաք բանս՝ի հաստատութիւն ածէ առաջելոցն։ Վայ կար զայ զանձինս նոցա. ապաքէն ոչ պատմէ զոր ինչ յանմատոյց վայրս գործեալ էին և յայրս խորինս. ոչ ընդ օդս հարկանէ. մանր ձառէ զաւետեանն ի լաստ միոջէ, և ոչ խիթայթէ տուտ յանդիմանեսցին բանք նորա։ Օ՛ երկնանոցա

և զհաստատակամութիւն խարսխի՛ն սքանչելին որոց ինքնին եղեն ականատես : Եւ սքանչելիք են յանկարծադէպ փոփոխութիւն բնութեանց յայլ և այլ դէպս՝ ի փրկել ըզնոսա և՝ ի պատուհասել զթշնամիս : Այսպիսի էր պատահել ծովուն, բերանանալ երկրի, հացն երկնատեղաց, ջուրքն առատահոս խոխոջեալք ընդ վէմս հարմամբ գաւազանի. սիւնն լուսեղէն ի՛ջեալ յերկինից յերևելի նշան ցուցոյ նոցա, և այլ սքանչելիք զորս տեսին յաման քառասուն :

Պատահելոյր ապաքէն իմաստութիւն ժողովրդեանն Իսրայէլի և կորուսանէսութիւն նորա քան զայլոցն, որ ընդ զգալիս պղտցեալ՝ չառնուին՝ ի միտ թէ զոյ Աստուած անտեսանելին բնութեամբ՝ ի մանալի գործէր զինքն անխափան հրաշագործ ծութեամբն, և հնչեցուցանէր Աւուրս յաւուրց նոցա զամենայն նշանս, և բախէր ուժգին զգործարանս մտացն, մինչև անապան ուրեմն զգաստ եղև ժողովուրդն երկրաքարշ հայե՛ի յստակ լոյս աստուածութեան, որ բանիւ առնէ զամենայն, և հոգի է ինքն և բան և իմաստութիւն :

Յետ մեռանելոյն Աբրահամու էբրև այսպէս ծածկէր կուսապաշտութիւն զամենայն

երեսս երկրի, անըմբռնելի եկաց ՚ի նմանէ զաւակն յակոբեան։ Այս վկայութիւն տային նմա և թշնամիք, և զայս գոչէին հնազանդեալք որք ոչ ՚ի սպառ շինջուցեալ էին զաւանդն նախնի[1]. «Ահ լեցի աշխատութիւն ՚ի Յակոբ, և մի վաստակ՚ի մէջ Իսրայէլի. տէր Աստուած նորա ընդ նմա... Ոչ ոչ գոն հմայք ՚ի Յակոբ, և ոչ ըղձութիւնք ՚ի մէջ Իսրայէլի»։

Այլ կամեցեալ Մովսէսի դրոշմել ՚ի միտս թէ մի՛ Աստուած, և զմիակ անվթար կամի ընդունել փառաբանութիւն, կրկնէ բազում անգամ[2] եթէ յերկիրն յոր մտանելոց էն՝ անուանեսցէ Աստուած տեղի, անդ միայն կատարել զաւրն, զզոհս և զամենայն պաշտամունս հաստատակաց։ Այլև ՚ի դեպերել ժողովրդեան յանապատն յուսով տեղեացեալ տեղւոյն, չինեաց Մովսէս զխորան վկայութեան՝ զտաճարն կրելի, յորում յանդիման առնէին Իսրայէլացիք զուխտս իւրեանց Աստուծոյ արարչին երկնի և երկրի, որ ոչ ծանր համարէր՝ եթէ այսպէս պարտ էր ասել՝ ձա նապարհ առնել ՚ի միասին ընդ նոսա և առաջնորդել նոցա։

Ի վերայ այսր խարսխի աստուածպաշտութեան և սրբոյ հնման կառուցման օրինաց տուրբ,

1 Թուք. ԻԳ. 21, 22, 23։
2 Բ. Օրինաց. ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ևն։

արդար, մարդասէր, պարկեշտ, խմաստուն, խոհական և պարզ, որ ընդ միմեանս զօդէ ըստ մարդկի՝ զօդելով զմարդ ընդ Աստուծոյ։

Յայսոսիկ արդար օրէնս յաւել և կարգաւորութիւնս շքեղս. սահմանեաց և ոճս՝ ի յիշատակ սքանչելեացն որով յազատութիւն եդան։ Այլ զոր ոչ ոք յօրէնսդրաց իշխէր խոստանալ, ուխտեաց սա հաստատութեամբ, թէ ցորչափ կացցեն յօրէնսն՝ յաջողեսցի նոցա ամենայն. իսկ եթէ անսաստեսցեն, ի վերայ կայ նոցա գառն և անձողոպրելի պատուհաս[1]։ Ասէ և թէ Աստուած հաւատարիմ առնէր ինա՝ զայսօրինակ ամրապնդել զօրէնսն. և արդարև ելք իրացն յայտնի արարին թէ Աստուած սէս ոչ յանձնէ ինչ խոսեցաւ։

Նոյնպիսի խորութիւնք օրինացն ուրոյ ծանրաբեռնեաց զնոսա, թէպէտև աւելորդս թուիցին մեզ այժմ, յայնժամ կարեւորք էին՝ անջրպետ ի մէջ արկանելոյ ընդ ժողովուրդն Աստուծոյ և ընդ այլ ազինս, և զդէմ ունել ամեհի ալեացն կռապաշտութեան, զի մի ընկղմեսցեն և զընտրեալ ազգն։

Ի զգուշութիւն պահպանութեան կրօնիցն և աւանդից ընտրէ Աստուած յերկոտասան ցեղից անտի զցեղն Ղեւեայ, որում հաւատայ զհոգաբարձութիւն սպասուցն սրբոյ, և բաժին տայ նմա զտասանորդս և զ-

1 Ն. Օրինք. ԻՆ, ԻԸ, և որ զինի։

պատարագս : Նա՛ի ժողովրդենէն սրբէ զ՚ի և զաւակք նորա՛ի տասանորդ Ա՛ստուծոյ : Ի ցեղէն զ՚Ահարոն լինել քահանայապետ, և ունի ժառանգութեամբ ազգատոհմ նորա զքահանայութիւնն :

Ա՛րդ աւանիկ սեղան և պաշտօնեայքն նորա. օրէնք և սպասաւորք նորա. ժողովուրդ Ա՛ստուծոյ, և քահանայապետք նորա անխափան յաւուրց անտի Ա՛հարոնի առաջնոյ քահանայապետի :

Ա՛յլ այն էր պանծագոյն քան զամենայն, զի Ձանապարհ հորդէր սա հրաշափառագոյն և օրինայ, որ քան զնա թեթեւաբեռն էր և բազմաբեղուն արգասեօք :

Յոր կամեցեալ Ա՛ովսէի զակնկալութիւն ժողովրդեանն՝ի նա հարսանել, վկայէ հաստատութեամբ գալատեան մեծի մարգարէին որ ծնանելոց էր յազգէն Ա՛բրահամու, Նահակայ և Յակոբայ. “ Ա՛րդարեւ, ասէ, յեղջ „ բարց քոց իբրև զիս յարուսցէ քեզ տէր „ Ա՛ստուած քո, նմա լուիջիք „ : Նա՛ և ար- դեօք մարգարէն այն էր հանգոյն Ա՛ովսէի, օրէնադիր իբրև զնա. եթէ ոչ նա ինքն Ա՛ն- սխայ, որ բանիւ իւրով առաջնորդեցէ և սրբ բերցէ զամենայն տիեզերս :

Ա՛րիաոսի էր անկ նախ առաջին զատու-

1 Բ. Օրէնք. ԺԸ. 15, 18 :

ցանել ժողովուրդ նոր, որում և ասացին, „Պատուիրանոց տամ ձեզ[1]“. և դարձեալ „Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեա „ջիք[2]“. և նա յայտնապէս. „Ուսցաւ ա„ռաջնոցն Թէ մի սպանաներ. բայց ես ասեմ „ձեզ[3]“ և այլն որ գիտեն նովին ոճով և նովին իշխանութեամբ։

Այն սա է ապա զոր մարգարէն նմանեաւ Մովսէսի, տուողն նորոյ օրինացս, և գնմանէ առաց մեզ Մովսէս՝ի գուշակել իւրում զգաստ լուսոյ նորա եթէ „Նմա լուիջիք[4]“. և ահա՝ի լրումն խոստմանս այսորիկ ինքն իսկ Մեստուածն որոտաց՝ի բարձանց զայս բարբառ աստուածային. „Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք[5]“։

Այն մարգարէն էր և նոյն Իրիսատոս զոր տպաւորեաց Մովսէս օձիւն պղնձեաւ զոր կանգնեաց յանապատին։ Չարիք էր մարդկայ ինս ազգի՝ի սոյն հայելով օձ, այսինքն է՝ի սա հաւատալով՝ որպէս ինքն իսկ մեկնաբանէ՝ բժշկել՝ի խայթուածոյ հնոյ օձին, որով Թուհաւրեալս մահանալոյ ամենեքեան։ Նա ընդէր է և ինձ զօձն միայն պղնձի ածել՝ի յիշատակ։ Այլեւայն օրէնք Մովսէսի, ամենայն

1 Յովհ. ժԲ. 34։
2 Պնդ. ժԴ. 15։
3 Մատթ. Ե. 25, և որ գինի։
4 Բ. Օրէնք. ժԸ. 15։
5 Մատթ. ժէ. 5։ Մրկ. Թ. 6։ Ղուկ. Թ. 35։ Բ. Պետր. Ա. 17։

զոհք նորա, քահանայն մեծ կալցի ետ՚ի նմանէ այնչափ խորհրդական արարողութեամբք, մուտ նորա՚ի սրբութիւնն, հաստատ ասել՝ աներևոյթ իսկ պաշտամունք հրէական օրինաց համօրէն՝ յորում աներևոյթ ինչ արեամբ սրբէր, և գառնն անգամ զենեալ՚ի մեծի տօնին որ զատիկն կոչէր՝՚ի յիշատակ ազատութեան ազգին, այս աներևոյթ ոչ այլ ինչ նշանակէր՝ բայց միայն զՆրիստոս որ արեամբն իւրով փրկագործեաց զժողովուրդն Աստուծոյ։

Ինչև ցգալուստ փրկչին հարկ էր զԱրովսէս ընթեռնուլ՚ի ժողովուրդս իբրև զմիայն օրէնսդիրն. ամին իրի տեսանեմք իսկ զՀրեայսն ցայնժամ՚ի Աւետս ընթացեալ ցանգ և յամենայն՚ի տարակուսանս։

Որ օրինակ յարգէր Հռոմ զօրէնս Հռոմուլոսի, զՆումայի, և զերկոտասան տախտակացն, և որպէս խրախուսէին Ազենացիք յօրէնս Սողոնի, և Լակեդեմոն ակնածէր՝ և զգուշանայր օրինաց Լիկուրգոսի, սապէս և ժողովուրդն Հրէից հարցանէր հանապազ ըզ Աւետեայ օրէնսն։

Բայց օրէնսդիրն նոցա զեղեցիկ կարգեաց եղ զամենայն, և ոչ քնաւ հարկ եղև Հրէայքն ինչ՚ի նմա։ Այլ յայս իսկ՝ օրինադրութիւնք Հրէայեցւոց ոչ ժողովեցան յայլ և յայլ օրինաց կարգելոց ըստ ժամուց և ըստ իրացն պա

տահէց . քանզի Աստուածս կրեալ ՚ի հոգւոյն սրբոյ , զծեաց զամենայն նախնմաց իմաստու-
թեամբ : Այլ որոյ և ոչ ուրեք տեսանել կ
զհրամանսն Դաւթի և Սողոմոնի և Նզե-
կիայ , թէպէտ և ամենեքեան նախանձաւորք
արդարութեան : Բայց միայն հոգւոցան աս-
տուածասէր թագաւորքն՝ զի օրինաց Աստուած
սի պատկառ կացցէ ժողովուրդն , և շատ հա-
մարեցան զգուշացուցանել պահպանութեան
նոցա զյաջորդս իւրեանց [1] : Նանզի և յաւե-
լուած առնել կամ հատանել ինչ ի յայնցա-
նէ [2] յանցաւորութիւն մեծ էր , ընդ որ սաս-
կացեալ զողայր ժողովուրդն :

Պարտ էր զօր ամենայն հայել յօրէնս , նո-
քօք կարգաւորել զտօնս , զզոհս , զարարողու-
թիւնս , այլ և զամենայն ՚ի հասարակաց և
զառանձին գործս , զդատաստանս , զյետկար
դաշանց , զամուսնութիւնս , զժառանգութիւնս ,
զյուղարկաւորութիւնս մեռելոց , և զձև հան-
դերձից անգամ , և զամենայն որ ինչ ՚ի բարս
պատկանէին : Այլ գոյր նոցա այլ մատեան ու-
սանել անտի զգեղեցիկ հրահանգս վարուց .
պարտ էր յայն միայն պարապել , ՚ի նոյն խո-
հել զցայգ և զցերեկ , անտի ժողովել բանս ,
և ունել հանապազ առաջի աչաց . անդ ու-
սանէին մանկունք զարուեստ գպրութեան :

1 Գ . Թագ . Բ : 2 Բ . Օրինք . Դ . 2 . ԺԲ . 32 . եև :

Ո՛չայս պատուէր եւեթ ընկալեալ էին Հարք՝ ի դաստիարակութիւն որդւոց իւրեանց, ուսուցանել նոցա, յիշեցուցանել և զգուշացուցանել զնոսա օրինացն սրբոց, որ միայն կարող էր իմաստուն առնել զնոսա՝ ի տղայական տիոց։ Ա՛յսպէս՝ ի ձեռս ամենեցուն յաձէր մատեան օրինաց։

Ա՛յլ թող զի պարտ էր ամենայն ումեք անդրադարձ պարտապէս լինել հրոցս, օրէնք էին և զանն եօթնեւորդ՝ զքաւութեան և զհանգստեան, մատուցանել զայն լինելոցումն առաջի ամենեցուն, որպէս նորոգ փողելով զնոսա յականջս միահամուռն ժողովելոցդեան՝ ի ծոնի տաղաւարահարաց զաւուրս ութ[1]։

Հրամայեաց Ա՛ռնել՝ի կողմանէ տապանակին զբնագիր օրինացն[2]։ Ա՛յլ զի մի յապա ժամանակս առ ամբարշտութեան կամ ծուլութեան մարդկան խանգարեսցի մատեանդրս, քայ՝ի պատձենիցն՝ որ յաձէր՝ի ձեռս ամենեցուն, յարմարէին և այլ ատոյգ օրինակըս, զոր զգուշութեամբ քննէին և պահպանէին քահանայք և Ղեւտացիք. որ և զբնագիրն ունէին զհարազատութիւն։ Ա՛յս քանզի դիմէր Ա՛ռնէս՝ եթէ խնդրեսցէ թագաւոր ժողովուրդն որպէս զայլ ազգս[3], եղ պատուէր

1 Բ. օրէնք. ԼԱ. 10։ Եզր. Ը. 17. 18։
2 Բ. օրէնք. ԼԱ. 26։
3 Ընդ ժէ. 18։

բանս վասն Թագաւորաց յերկրորդ գիրս օրինաց՝ առնուլ՝ի ձեռաց քահանայից զմի՝ի պատձենից գրելոց զգուշեաւ, և արարեալ ըստ հաւատոյն՝ ընթեռնուլ զայն զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Իբրև այսպէս ընդօրինակէր մատեանս քննութեամբ հաւատարիմ, շուք մեծ գնէր այնմ ժողովուրդն, և համարէր զայն որպէս թէ նորին Աստուծոյ գծեալ ոգեբովանդակ՝ ըստ որում աւանդեցաւ նմա յաստուածդուան։ Ո՛ր Թագաւորութեամբն Յովսիայ գտաւ մատեան մի հին՝ի տան տեառն՝ի քննելոց անտի խնամս երկիւղածութեամբ, Թերևս ինքն խոկ գնագիրն էր, զոր հրամայեաց Աստուած գնել առ տապանակաւն և զիրք լինէր մշտից բարեպաշտ արքային, ուրոյն և յատկաշխարութիւն ածէր զժողովուրդն։

Ո՞յր անթիւ են որ՝ի հատարակաց ընթերցուածոյ գրոցս գործ գործեցան։ Պարզաբար ասել, մատեան էր սա կատարեալ, զոր քանզի ընդ մի շարայարեաց Աստուած ընդ Հաւս պատմութեան ժողովրդեան Աստուծոյ, ուստեքնէր նման զազգ նորա, զաստուածպաշտութիւն կրօնից, զքաղաքավարութիւն, զհրահանգս բարոյից, զիմաստասիրութիւն, և որ ինչ միանգամ օրինեն արդութեան վարուց, և ուզղեն և յարդարեն զքաղաքաժողով ընկերու-

1 Գ. Թագ. ԻԲ. 8. եւն։ Բ. Մնացորդք. ԼԴ. 14. եւն։

Թիւն մարդկան, 'ի մէջ առեալ զլաւացն և զվատացն օրինակ, զնոցայն վարձս վաստակոց, և զմեզանաց սոցա զարդար պատուհաս։

Յորժամ որ 'ի սարկաւագենէ 'ի վեր առեալ եղիւ, և ընկեցաւ զամս քառասուն ընդ անապատ, կրթեալ և յարդարեալ զեղեցիկ հրահանգօքս օրինացդ, ժամանակ յերկիրն գոր ժառանգելոց էր։ Զգաստորդէ Յովսէս մինչև առ գուրս, և զգաստ եղեալ մօտալուտ մահուն՝ յանձն առնէ Յեսուայ զառաջարկու-Թիւն գործոյն[1]։ Նայց մինչև վախճանեալ, առնու գրել զՕրէնս և զհրաշալի զօրհնութիւնն՝ ակնդէն արարեալ բանիցն այսպէս[2]. «Նայեցա ,,գուք երկինք, և խօսեցայց, և լսեցէ երկիր ,,զբանս բերանոյ իմոյ»։ Եւ յընդհանուր լսութեան արարածոց՝ յեռանդն աչխոյժ կրթէ զառաջինն զբանն 'ի ժողովուրդն, զոր-պէս գուշակեալ զգժբանն՝ ցուցանէ նոցա զանհնարին եղեռն։ Ուստ ապա յանկարծակի՝ անբաւական իմն տեսեալ զլեզու մարդկեղէնն առ մեծապատում Հառս, արշաւէ արտաքոյ բան սահման մարմնոյն, և թափ անցանէ 'ի բանս պատկանաւորս աստուածեղէնն բերանոյ. այնպէս ընդ ահաւորագոյնս և զխանդաղատանիանն հնչեցուցեալ, զի անհնար է 'ի վերայ կալ համօրէն, թէ արդեօք երկինքն լսեցին պարտ եցե

1 Թ. Օրէնք. ԼՂ։ 2 Ռդ. Լ.Ը։

մեզ և զոլալ ընդ բանան, եթէ խրախուսել և քաջալերել։

Ասաւ ամենայն ժողովուրդն՝ ի հրամանատ Ղատուծոյ և Մովսէսի զատուածելին զայս երգ՝։ Յետ այսորիկ ննջեաց Մովսէս զուարթութեամբ, զի չարար զկնի ապախտ յանմտուց յիշատակութիւն յազգի իւրում բա բերարութեանցն Ղատուծոյ և հրամանատ։ Նթող զորդիս իւր ընդ որդիս ժողովրդեան իւրոյ, ոչ ինչ հոգացեալ հաստուցանել զնոսա բարձի կամ աւազութեան։ Աբանչացաւ ընդ նա ամենայն զաւակն յակոբեան, հիացան ամենայն ազգք աշխարհի, և նմանն նմա ոչ ոք յօրէնադրաց անուն մեծ ժառանգեաց՝ ի մէջ ազգաց։

Ա՛ստղարիէք ամենեքեան որ կարգ ըստ կար գէ՝ ի հանդէս անցին՝ ի հին օրէնսն, և կամ աստուածաշունչ գրոց կացին մատենագիրք, փառս անձանց գրեցին՝ սորա լինել աշակերտք։ Ո՛չ անգղն արդարև իսկ զվարդապետի ունի զոհ անձին միայն սեպհական, թէ միտ ոք դնիցէ, և այնպիսի լինի բնիկ ասացուած՝ զոր չէք այլ ուր տեսանել. ընդ անպատճոյ պարզութեն խառն է և վսեմութիւն վեհապանծ անհամեմատ լաւութեամբ. և եթէ այլք՝ ի մարգարէից Թուին բարբառել որպէս մարդք առ

՝ Բ. Օրէնք. ԼԱ. 19, 22։

տուածարեալք, այլ՝ի բարբառ և՝ի գրուածս Աովսէսի, եթէ օրէն էր ասել, ինքն իսկ Աստուած պատգամաւորի։

Ի դէպ է կարծել թէ և զգիրս Յովհաննէս ինքն մատենագրեաց. զի և վսեմութիւն իմաստից, և շքեղութիւն կարգի բանիցն՝ ձահ պատահեն նմա։ Իբրու այն թէ՝ զի մի յամբարտաւանութիւն կրթեսցին Հրեայքն՝ անձանց գրելով զընտրհս Աստուծոյ, պարտ էր խեղամուտ առնել զնոսա թէ Աստուած ունի իւր ծառայս և՝ի տոհմին Նահաւայ։ Օ՛ինչ այլ ուսուցին կարևոր, և զո՛ր օգտակար իրատս հնար էր աւանդել Աովսէսի ժողովըրդեան վճռացելոյ յանապատի անդ իբրու ըզհանդէս նահատակութեանցն Յովհաննէսի, որ թողեալ էր՝ի ձեռս սատանայի փորձիլ յաւետեան ազգս տանջանաց. և թէպէտ մերկ և սոսկ յընչից, որդեկորոյս և անմասն յաւետեան մխիթարութեանց, և՝ի վերայ այսոցիկ հարուածեալ չարաչար՝ի մարմնի և փորձեալ հայհոյութեամբ և յուսահատութեամբ՝ի միտս, սակայն արձանացեալ կայ անյողդողդ, յայտ արարեալ՝ թէ այր հաւատարիմ՝ օժանդակեալ յաստուածուստ՝ գիտէ և յաստպաղնիզ անդ ահաւորագոյն մրցանաց և՝ի կարի դժնդակ վիշտս գրգռեալս՝ի հնարից բանսարկուին, անպարտեալն կալ, և ոտնփոխ եղեալ ընդ աղէտս իբր ընդ աշխարհս, համբառնալ

զինքն՝ ի բարձրագունից նկատմունս, և՝ ի միտ առնուլ՝ ի չարչարանս անդ զապիկար ըզ նուիրեան մարդկան, զամենամեծ զօրութիւն Աստուծոյ, և զանսահման իմաստութիւն նո՛ր ս։ Ահա զայս ամենայն խրատս բովանդակեն գիրք Յովելայ[1]։ Ար՝ ի պէտս ժամանակին զաստեացս Հոխութիւն պատկ կապեցին նմա հաւատք նորա. բայց տակաւ՝ ի միտ առնու ժողովուրդն ո՛ր այն լոյեն Հգանք առաքինութեանց, և մատչի հուպ Հաշակել զընորհս՝ որ անանձրպետ լինելոց էր՝ ի խաչէն։

Ո՞ր և յանձին ստուգեաց Պօվսէս, լաւ համարեալ զչարչարանս և զանարգանս ընդ ժողովրդեան իւրում, քան զպերգանս և զմեծութիւն արքունեացն Եգիպտացւոց[2]։ Ընդ դուստրեմն Ջամբէր նմա Աստուած զՀաշակ նախատանացն Եզրիասոսի[3], զոր արք յորդա գոյն ևս՝ ի խուՀապելն փախստեամբ յերեսաց Փարաւոնի, և՝ ի դեգերել՝ ի վտարանդութեան զամս քառասուն։ Ընդ քառասուն ցայտակ զբաժակն Եզրիասոսի, յորժամ ազատիչ ժողովրդեանն կարգեալ՝ տարաւ անհամար վըտարանդութեանցն, և յոգիս լինէր ապաստան։ Ընդ ևս յայնժամ զնոյն դժուարաբնութեան լոյե փրկութիւն որդւոցն Աստուծոյ, և նկատեաց՝ ի հեռաստանէ որպիսի լինչ կերպ, ի

1 Յովէ. ԺԳ. 15։ ԺԴ. 14։ ԺԶ. 21։ ԺԹ. 25, ԿԸ։
2 Եբր. Բ. 10, 11, 15։
3 Եզր. ԺԱ. 24, 25, 26։

վերայ կային Փրկչին՝ յազատութիւն գերա-
հրաշ հանուրց մարդկութեանս։

Ա՛ա այր սքանչելի չէհաս գոնեայ միխի-
թարութեանն մտանել յերկիրն խոստացեալ։ Ա՛
զկնոյ լերինն հայեցեալ եառես, և ոչ ամօթ
համարեցաւ զրոշմել զրով[2] զտարապիրն լի-
նել անտի վասն թերահաւատութեանն. որ
թէպէտ թեթև ինչ էր՝ խոստովն ընկալաւ
պատուհաս՝ ինամ որ գերագունին վիճակեալ
էր ընդհաց։ Ա՛րձան եկաց Ա՛ովսէս աստուա-
ծային արդար նախանձուն և ահագին դա-
տաստանացն՝ որ՝ ի վերայ կայ այնոցիկ, յորոց
երկնաձիր պարգևք զանվթարն պահանջեն
հաւատարմութիւն։

Ա՛սկայն բարձրագոյն միտս տայ մեզ չմտա-
նել նորա յերկիրն. քանզի յորժամ հայե-
ցեալ տեսանիցեմք, զի հանձարել օրէնսդիրն
՝ի ձեռն բազմապատիկ նշանաց առաջնորդէ
միայն մերձ յերկիրն խոստացեալ որդւոց Ա՛ս-
տուծոյ, ՝ի միտ առցուք թէ օրէնքն նորա լինք-
նին ՝ի կատարումն ոչ ածեն[3], և ոչ ունին
լրումն տալ խոստմանցն եղելոց, այլ ակնարկէ
և՛եթ ցուցանեն ՝ի հեռաստանէ[4], կամ թէ
առ սեամն միայն ժառանգութեան մերոյ տա-
րեալ մերձ կացուցանեն զմեզ։ Ա՛յլ մուծա-
նել յաշխարհն՝ այն սահմանեալ պահէր Յե-

1 Թիւք ԺԴ. 10։
2 Ա՛գ. Ի. 12։
3 Եբր. Է. 19։
4 Ա՛գ. ԺԱ. 13։

սուսյ, այս ինքն է Յիսուսի, քանզի և այս իսկ է անուն նորա. որ և անուանակոչութեամբն և սպասաւորութեամբ օրինակ էր Փրկչին աշխարհի։ Ասհմանեալ պահէր Յեսուսյ, որ փոքր էր յամենայնի քան զՆաւեէս, այլ անուամբն միայն մեծ քան զնա։

Ընդ ի ձեռն յաղթութեանց մեծի առնն՝ որոյ առաջի յետս ընդ կրունկն դառնայ Յորդանան, հոսեն պարիսպքն Երիքովի, և կասէ արեգակն ի մէջ երկնից, տարեալ բնաւկեցուցանէ Ընտուած զորդիս իւր յերկիրն Քանանու, ուստի մերժեաց նա զժողովուրդս գարշութեան։ Ընտելութեամբն որով վառէր զծառայս իւր ընդդէմ նոցա, խրատէր հեռադոյն դնել զանձինս իւրեանց յամբարշտութենէ նոցա, և պատժովքն զոր ածէր զնոքօք սպասաւորութեամբ նոցա, տագնապէր ահիւն արդարութեան զնոսին զպաշտօնեայս դատաստանաց իւրոց։ Յազգացն վաթելոց յերեսաց Յեսուայ երթեալ բնակեցան ամանք յաշխարհն Ընդրիկեցւոց. ուր և յետ հարուստ ժամանակաց գտաւ ի հին արձանն յիշատակ փախստեան նոցա և յաղթութեանցն Յեսուայ[1]։

Կալեալ Իսրայէլացւոց հրաշալի յաղթութեամբք զընդարձակ կողմանս աշխարհին որ

1 Պրոկոպ. յշ. Պատերազմ. Վնդ. գիրք Ե։

խոստացեալ էր հարց նոցա, Յեսու և Նդիա զար քահանայ, և իշխանք երկոտասան ցեղից բաժանեցին միաբան ըստ օրինացն Մովսէսի, զպատուականագոյնն և զհարուստ վիճակ տուեալ ցեղին Յուդայ[2]: Յաւուրց անտի Մովսէսի ամենեցուն երկոտասանից վեհագոյն Ճանաչէր Յուդա արութեամբ, իշխանութեամբ և յոգնաթիւ ժողովրդեամբ[3]:

Ա. ախՃանեցաւ Յեսու. այլ անխափան զՀետ էր ժողովուրդն ժառանգել զաշխարհն: Հրամայեաց Պատուաճ ցեղին Յուդայ կարգել առաջնորդ գործոյ պատերազմին, զի՛ է Ճեռս նորա մատնեալ էր զերկիրն[4]: Նէ նա, խորտակեաց զԲանանացիս, և առ զՆրուսա-

ղէմ[5] որ հանդերձեալ էր շինել քաղաք սուրբ, և մայր քաղաքաց ժողովրդեանն Պատուճոյ: Նախնի Մաղին էր սա, յորում Թագաւորէր Մելքիսեդեկ յաւուրս Պբրահամու, Մելքի սեղեկն այն Թագաւոր արդարութեան, քանզի այսպէս Թարգմանի անուն նորա, և Թագաւոր խաղաղութեան, զի Մաղիմ խաղաղութիւն լսի[6] զոր մեծ՛ի քահանայապետս դաւանեաց Պբրահամ, որպէս այն Թէ անդատին՛ի ժամանակաց անտի ընտրեալ էր Նրուսա-

1 Յեսու. ԺԴ. ԺԴ. և որ՛ի կարգին: Թիւք. ԻԶ. 53: ԼԴ. 17:
2 Յեսու. ԺԴ. ԺԵ:
3 Թիւք Բ. 3, 9: Է. 12: ԺԳ. 14: Ա. Մնաց. Ե. 2:
4 Դատ. Ա. 1, 2:
5 Աստ. 4, 8:
6 Եբր. է. 9:

ղէմ՝ի քաղաք սուրբ և՝ի տեղի փառաց առաւածպաշտութեան։ Նոյնն զառաջինն ըզքաղաքս որդւոց Ենենիամինի, որ զի տիարք էին և սակաւաւորք, չեղեն բաւական վանել զՅեբուսացիս՝ զհին բնակիչս գաւառին, և բնակեցան՝ի միջի նոցա[1]։

Յաւուրս գատաւորացն ոչ միշտ՝ի նմին խաղաղութեան եկաց ժողովուրդն, այլ ըստ արդարութեանցն կամ ըստ անօրէնութեանց զոր գործէրն՝ յեղափոխեալ։

Վանգի յետ մեռանելոյ Ծերունեացն՝ որոց տեսեալ էր զմեծամեծ նշանսն, երթայր տակաւ և չինջանէր յիշատակ սքանչելեացն. և բերումն հանուրց մարդկութեան ձգէր և զոսոնց՝ի պաշտօն կռոց։ Յորժամ մոլորէին նոքա զհին կռոց, վաղվաղակի հասանէին՝ի վերայ պատիժք պատուհասից. իսկ իբրև՝ի միտս եկեալ ապաշաւէին՝ի չարեացն, հանդիպէին ազատութեան։ Որով գամ քան զգամ սերտէին երկիւղածքն՝ի հաւատս խնամակալութեան, և՝ի ստուգութիւն խոստմանց և սպառնալեացն Աստուծոյ։ Այլ Գատաւած մեծ ևս տարացոյցս՝ի ներքս մատուցանէր։ Ասէր ժողովուրդն Թագաւոր, և եթ նոցա ըզԱաւուղ՝ որ վաղ անարգեցաւ ամբարշտութեամբն։ Յայնժամ հաձեցաւ Գատաւած՝ի

[1] Դատ. Ա. 21։

ցեղէն Յուդայ յարուցանել զարմ արքայական, յորմէ ծնանիցի Քրիստոս։ Ընդ՝ի վեր երևէր Նաւիթ՝ պատանեակ հովիւ՝ի ցեղէն Յուդայ, կրտսեր յորդիսն Յեսսեայ, զորոյ զպատուականութիւն ոչ գիտաց հայր նորա, և ոչ ծանեաւ ազգ նորա, այլ եգիտ զնա Աստուած այր ըստ սրտի իւրում, և օծաւ նա՝ի Սամուէլէ՝ի Բեթղեհէմ՝ի քաղաքի հարց իւրոց[1]։

1 Ա· թագ· ԺԶ։

ԴԱՒԻԹ ԶՈՐԱՒՈՐ

Դաւիթ, Սողոմոն, Թագաւորք և Մարգարէք։

Պետք է ասել որ ի տեսանել յայսմ հետէ զժողովուրդն Աստուծոյ։ Հաստատի թագաւորութիւնն ի տան Դաւթի. թագաւորեն ի նմա զաւակքինն Դաւիթ և Սողոմոն, այլ ետքերովք, այլ երկոքին ևս արք հրաշակերտք։ Դաւիթ զի էր գոռ պատերազմող և յաղթող, նուաձէ զթշնամիս ժողովրդեան Աստուծոյ, որ զահ և գերկիւղ զինուց նորա արկանէ առ հասարակ զամենեքումբք։ Սողոմոն գերազանցէ համբաւեաւքն իմաստութեամբ առ ընտանիսն և առ օտարս, երանաւետ զազգ իւր ի խաղաղութիւն անվրդով։

Սակայն առ անվթար ունել զկարգ բանիցս որ վասն յաջորդութեան աստուածպաշտութեան կրօնից, արժան է հայել սակաւուք ի գնացս գործոց երկոցունց հոյակապ թագաւորացն։

Աւաջինն ի վերայ Յուդայ որ հզօրն էր և յաղթող Թագաւորեաց Դաւթի, և հպատակեր նմա զինն ամենայն Իսրայէլ։ Ետ

Յեբուսացւոց զդղեակն Սիոն՝ զմիջնաբերդն Երուսաղէմի. եւբրև տիրէր քաղաքին, անդ արկանէր ՚ի հրամանաց Աստուծոյ զաթոռ թագաւորութեանն և զաստուածպաշտութեան: Յարկ բնակութեանն նորա եղև Սիոն, զոր չինեալ շուրջանակի, քաղաք Դաւթի անուանեաց[1]: Իսկ զչինուած Երուսաղէմի կատարեաց Յովաք քեռորդի նորա՝ զոգջեանոյ կառուցեալ զնա: Ի ջին բնակութեամբ որդիքն Յուդայ զկողմանս աշխարհին, և Ներեմիան սակաւաւորն՝ բնակեցաւ ՚ի միջի նոցա:

Տապանակն ուխտի զոր չինեաց Մովսէս, յորում հանգչէր Աստուած ՚ի վերայ քրովբէից, և յորում կայր տախտակք կտակարանացն, չև ևս ունէր տեղի բնակութեան: Նաճ զնա Դաւթի յաղթանակաւ ՚ի Սիոն[3] ՚ի քաղաքն, զոր էառ հզօր օգնականութեամբ ձեռին տեառն, զի թագաւորեսցէ Աստուած ՚ի Սիոն, և զնա պիտասցեն պահապան Դաւթի և Երուսաղէմի և ամենայն թագաւորութեանն:

Դայց խորհուրդն վկայութեան՝ յորում պաշտեաց ժողովուրդն զտէր յանապատի, դեռ ՚ի Դաբաւոն կայր[4] և անդ զոհէր ժողովուրդն ՚ի վերայ սեղանոյն զոր կանգնեաց Մովսէս, մինչև ՚ի շինել տաճարին, և դնել սեղանոյ

1 Բ· թագ· Ե· 6=9:
Ա· Մնաց· ԺԱ· 6, 7, 8:
2 Անգ· Բ· 16:
3 Բ· թագ· Զ· 18:
4 Ա· Մնաց· ԻԶ· 39:
ԻԱ· 29:

և տապանակին, և կատարել անդ զամենայն պաշտամունս։

Ետրտակեալ Դաւթի զամենայն թշնամիս, և ընդարձակեալ զսահմանս ժողովրդեանն Ա.ա տուծոյ մինչև ի գետն Եփրատ [1], լսելով անդորրանայր զկնի յաղթութեանցն, յայն միայն խորհէր այնուհետև՝ զի զպաշտամունս աստուածպաշտութեան յարդարիցէ [2]։ Եւ ահա ի վերայ լերինն յորում երբեմն արգելոյր Ա.բրահամու հրեշտակն [3] զոհել զմիամօրն, անդ ի հրամանաց տեառն պատրաստէ Դաւիթ զտեղի տաճարին, կազմէ զօրինակին, ժողովէ նիւթս պատուականս և մեծագինս, յաւելեալ ի նոյն և զկապուտ կողպատուտ ազգացն և ըզթագաւորաց պարտեզոց։

Ա.յլ զտաճարն զոր հանդերձէր տիեզերակալն յաղթող, կանգնելոց էր այրն խաղաղութեան։ Եւ շինէր զնա Սողոմոն հանդոյն խոստանեն վկայութեան։ Օ սեղանն ողջակիզաց, զսեղանն խնկոց, զաշտանակն ոսկի, զսեղան հացին զառաջաւորութեան, և զայլ ամենայն կահս տաճարին կարգեաց եդ ըստ օրինակին զոր արար Ա.ովսէս յանապատի [4], բայց չքնաղ մեծագործութեամբ և պայծառութեամբ։

1 Բ. թագ. Ը։ Ա. Մնաց. ԺՀ։
2 Բ. թագ. ԻԳ. 25։ Ա. Մնաց. ԻԱ. ԻԲ. ևն։
3 Յովսեփ. Հնախօս գիրք. Ե. գլ. 10։
4 Գ. թագ. Զ, Է, Ը։ Բ. Մնաց. Գ, Դ, Ե, Զ, Է։

Յակ զառապանակն զոր յօրինեալ էր առնն Ա֊ստուծոյ, եդ՝ ի սրբութիւն սրբոց, ի վայրն անմատոյց, յայտ ինն արարեալ թէ անմատոյցք են առ՝ ի մինչ փառքն Ա֊ստուծոյ, և փակեալ են երկինք յապէ մարդկան՝ մինչև բացցէ Քրիստոս զմատնորա արեամբ նորա։

Յաւուր նաւակատեաց տաճարին երևեցաւ Ա֊ստուած փառօք նորոգ։ ընտրեաց ըզտեղին՝ անուանեալ անդ զանուն նր, և պաշտել ի մարդկանէ։ Ա֊ղբել կարճեաց պատարագ մատուցանել այլոց, զիութիւն աստուածութեանն ցուցեալ և ի միութենէ տաճարին։ Ա֊ղև Ա֊րտաշէսի քաղաք աւուրբ յօրինակ նմանութեան եկեղեցւոյ յորում հանդերձեալ էր բնակել Ա֊ստուած որպէս ի տաճար նր աւուրբ, և յօրինակ նմանութեան երկնից, ուր յայտնութեամբ փառացն երանելոց առաքելոց զմեզ յանվախճան յաւիտեանս։

Յանկ հանեալ Ա֊ղոմոնն զշինուած տաճարին, շինեաց և զարքունի ապարանս՝, արժանաւոր արուարն այնպիսւոյ ալքայի Հարտարապետել։ Վեղեցիկ և հոյակապ յօրինեաց և զաւուն զբօսանաց նրոց՝ որ անուանն կոչեր Լերանանու. և պալատ զշխոյին մի՝ ի հրաշակերտից էր Ա֊րտաշէսի։ Յոյակապ էին ամենայն կերտուածքն նորա. արահզն,

՝ Գ. Թագ. Ի, ժ։

պաւիթքն, պահլևքն, Ձեմելիք, պահն արքայական, և պատասանարանն։ Ոմեռնայն ուրեք ոսկւոյ և ականց նշոյլք հատանէին, և եղևնափայտ միայն փոխան փայտից՝ ի գործ անդր մատեաւ։ Աքանչանային ամենեքեան եկք և բնիկք ընդ վայելչութիւնս թագաւորացն Խոսրէվեայ։ Ոստ այսոցիկ էր տեսանել և զայլն ամենայն, զքաղաքս, զգինարանան, զերիվարս, զկառս և զպահակս արքունի՝։ Ասէ զինչ է ասել զվաճառականութենէ, զընդ նաւարկութենէ և զկարգաց ուղղութեան, որ լծորդեալ ընդ անվթար խաղաղութեան, բազմահարուստ դնեն զնդրուսաղէմ քնաւից քաղաքացն արևելեայց։ Ոյլ և թագաւորութիւնն ոզջոյն ցնծայր յանդորրութեան և՝ի թաթաղուն լուծեան, և ամենայն ինչ զերկնային անդէն նկարէր զնիստս։ Ոարտք պատերազմացն Ոռաւթի նկարէին զտքնութիւնս՝ որովք հասանել էին երկնաւոր Հօրութեանց, և զքաղցրութիւն վայելից նոցա կերպարանէին աւուրք արքայութեան Ոզոմոնի։

Ոյլ փառաւորութիւն և երկուց հոյակապ թագաւորացս և տանուցա աստուածական ինն ընտրութեան գործ էր առանձին. և Ոռաւթի ինքնին հուշակ հարկանէ զքանչելին յառեալն, "Ընտրեաց Տէր Ոյսուած յամենայն ազգաց

1 Գ· թագ· ժԲ։ Ր· Մնաց· Ը· Թ։

„ զՆպրայել . և յաւելցին Իպրայելէ ընտ-
„ րեաց զՅուդաս կանգնել զԹագաւորութիւն
„ իւր յաւիտենական . և ի տանէն Յուդայ
„ ընտրեաց զտուն հօր իմոյ , և յորդւոց հօր
„ իմոյ կամեցաւ զիս լինել Թագաւոր ի վերայ
„ ամենայն Իպրայէլի . և յամենայն որդւոց
„ իմոց՝ վասն զի որդիս բազումս ետ ինձ Տէր,
„ ընտրեաց զՍողոմոն որդի իմ նստուցանել
„ յաթոռ Թագաւորութեանն տեառն ի վե-
„ րայ Իպրայէլի „[1] :

Ասատուածայինս ընտրութիւն յայլ ինչ զե-րազոյն քան զոր Թուին ի վերին երեսս հայե-ցուցանէ զիւրս : Յաձախ խոստացեալն անդ ուրեմն մեսիայն էրբև որդի Աբրահամու, հանդերձեալ էր լինել և որդի Դաւթի և Թագաւորացն Յուդայ : Խոստումն Աստուծոյ առ Դաւիթ՝ եթէ աթոռ նորա յաւիտեան կացցէ , ի մեսիայն ունէր զկատարումն և յան-վախճան Թագաւորութիւն նորա : Սողոմոն որ ընտրեցաւ պայազատել գնա՝ օրինակէր ըզ-մեսիայն , վասն որոյ և առաց Աստուած ըզ-նամանէ , “ Ես եղէց նմա ի հայր , և նա եղիցի „ ինձ յորդի „[2] : Եւ յայտ է՝ զի ոչ ուրեք խօ-սեցաւ Աստուած այսպէս զուարթէ ի Թա-գաւորաց կամ ի մարդկանէ :

Այսպէս ի վեր քան զամենայն ժամանակս

1 Ա . Մնաց . ԻԸ . 4 , 5 :
2 Բ . Թագ . Է . 14 : Ա . Մնաց . ԻԲ . 10 :

աա Աւաւթիւ և աա որդւովք նորա յայտնի լինել խորհուրդ գալստեան մեսիային հրաշալի մարգարէութեամբք որ քան զարեգակն պայծառ և լուսաւոր էին ։

Յաւաջագոյն եաես զնա Աւաւթ , և երգեաց զնա գեղապանծ և անհամեմատ օրհնակաւ ։ Նազուամանգամ միտ եդեալ զխառս որդւոց իւրոյ Աղամայնի հռչակել , ահա անգին արանայրն հոգւոյն , և՛ ի հիացման եղեալ տեսանէր զանն գերագոյն փառօք և իմաստութեամբ քան զԱղամայն ։ Տեսանէր զմեսիան այն բազմեալ յաթոռ հաստատութեան առաւել քան զարև և զլուսին ։ Տեսանէր խոնարհեալ աա ոտիւք նորա զամենայն ազգս , և զամենեսեան օրհնեալ զաա խոստմանն եղել աա Աբրահամ ։ Եւ՛ ի վեր ևս կորովութեամբ հրեալ զմիտան , տեսանէր զնա՛ ի վայելչութեան արդոյ յաւազ քան զարտուսեակ ծնանելով յաւխտենից՛ ի ծոցոյ հօր իւրոյ՝ քահանայապետ միանձնաւոր , որում ոչ այլ ոք յաջորդէ , և ոչ ինքն ումեք յաջորդեալ անցեալ նաեւ քահանայապետ ոչ ըստ կարգին Ահարոնի , այլ ըստ կարգին Մելքիսեդեկի , կարգ նորահրաշ՝ անծանօթ յօրինաց անտի ։ Տեսանէր զնա նստեալ ընդ աջմէ Աստուծոյ , հայելով՛ ի բարձանց երկնից՝ արկեալ առ ոտս

1 Մատթ . Ջ . 29 : ԺՐ . 49 : 2 Սաղմ . ՀԱ . 5 , 17 :

տուանդանօք ասէին զԵհնաամիս իւր։ Հետ-
ցեալ Դաւթի ընդ էքնատ սեռասրանն, այլ
յայլմէ լինի՝ ի փառաց որդւոյն, և տէր իւր
կոչէ զնա[1]։

Ցեռանէ զի Նաւուած է, և զի օճ գնա Նա-
ւուած թագաւորել՝ ի վերայ ամենայն երկրի
վասն Հնմարտութեան, Հեզութեան և արդա-
րութեան[2]։ Մասչի Հոգւոյն խորհրդազգած
լինել խորոյն Նաւուածոյ, և լսէ՝ ի բերանոյ
անտի յաւխտենական Հօրն ըզբանս՝ որ վասն
որդւոյ իւրոյ միածնի, թէ "Որդի այսօր ծնայ
զքեզ,,[3] որում և յաւելու խոստանալ Նա-
ւուած իշխանութիւն յաւէժական՝ ի վերայ
ամենայն Հեթանոսաց մինչև՝ ի ծագս երկրի։
Ի զուր խռովին Հեթանոսք, վայրապար գու-
մարին՝ ի միասին թագաւորք և իշխանք[4]։
Ընկծաղն Ցէր՝ ի բարձանց երկնից զանմիտ
խորհրդովք նոցա. և կանգնէ Հակառակ կա-
մաց նոցա զթագաւորութիւն օծելոյ իւրոյ։
Որ աւանիկ կանգնէ զնա թագաւոր՝ ի վերայ
նոցա, և զոր խնդրէին՝ թօթափել զլուծ
նորա՝ զնոսա նախ ածէ՝ ի Հնազանդութիւն
նմա։

Ընկալեալ և յոլովակի փառաւորագոյն օրի-
նակօք նախատապատմեցաւ՝ ի տուրբ գիրս Թա-
գաւորութիւն Մեսիային, ոչ ծածկեաց Նա-

1 Սաղմ. ճԹ։ 3 Սդպ. Բ. 7, 8։
2 Սդպ. Խդ. 3—8։ 4 Սդպ. Բ. 7։ Ի. 9։

տուած ՚ի Դաւթայ և զանարգանս պղծոյ ո-
րովայնի նորա օրհնելոյ . զի և այսոցիկ ուսու-
մըն կարեւոր էր ժողովրդեանն Աստուծոյ :
Վասնզի Թէպէտ և խօթամիտ էր զեռևս ժո-
ղովուրդն, և երկրաւորացս խոտամամբք հարկ
էր ձգել զնոսա , սակայն ոչ էր օրէն Թոյլ
տալ նոցա ՚ի մեծութենան յառել իբր յա-
պերխատ երանութենն իւրեանց և ՚ի վարձ :
Յաղագս որոյ զմեսխայն զայն՝ զխոստացեալն
բազում անգամ, զկաթոդիկն տեղեացեալն,
զտարացոյցն առաքինութեան, և զառիթն
ցնծութեան ցուցանէ Աստուած Դաւթի անդ
ուրեմն ՚ի վիշտս Թաղեալ : Ո՛չ խաչն նկատէր
աստղ զահ նորոյ արքայիկն . տեսանէ ծակեալ
զձեռս և զոտս նորա , Թուեալ զամենայն ոս-
կերս նորա ընդ մորթն [1] առ ծանրութեան
մարմնոյն անողորմ կախելոյ, զհանդերձս նորա
բաժանեալ, վիճակս արկեալ ՚ի վերայ պատ-
մուճանին , զտասը ծարաւոյն զոլացուցեալ ՚ի
լեղի և ՚ի քացախ, զձիւնամիս նորա կատաղեալ
զնովաւ և յապերեալ արեամբ նորա [2] : Այլ առ
նովաւ յանդիմանին նմա զեղապանծ արքա-
սիք անարգանաց նորա . ամենայն տոհմք ա-
զանց յիշեն զաստուած, զոր մուսացեալ էին
՚ի բազում գարուց հեաէ . ընթանան նախ
աղքատք ՚ի սեղան մեսխային , և զհետ նոցա

1 Սաղմ. ԽԱ. 17 , 18 , 19 :
2 Սիդ. ԿԸ. 22 : ԽԱ. 8, 13, 14 , 17 , 21, 22 :

ՄԵԾԱՏՈՒՆՔ և հզօրք, երկրպագեն նմա ամենեքին և օրհնեն զնա. իսկ նա՝ ի մեծի անդ և յոքնապատմար եկեղեցւոջ՝ ի բազմահոյլ ժողով ազգաց հաւատացելոց անցեալ նախահայրս, պատմէ եղբարց իւրոց զանուն Աստուծոյ՝, և զչքնաղութիւնս նորա՝ ի յաւիտենից։

Դառիլը զայսոսիկ տեսեալ, ծանեաւ թէ թագաւորութիւն որդւոյ իւրոյ չէ յայսմ աշխարհի։ Եւ ոչ ինչ զարմացաւ. քանզի գիտէր իսկ եթէ անկայուն է աշխարհս. թագաւորք իսկ՝ ի գահոյն՝ ոչ ինչ արժանաւոր սահմանն ակնկալութեանցն համարէր զգահոյս։

Ոչ ինչ ընդհատ՝ ի նմանէ տեսին և այլք՝ ի մարգարէից զխորհուրդն մեծիայն։ Աբան չելապատում էին և չքնաղ ամենայն բանք նոցա վասն թագաւորութեան նորա։ Ամն տեսանէր զԱեթղեհէմ զսակաւաւորն՝ ի քաղաքս Յուդայ՝ պայծառացեալ գեղեցկապէս ծննդեամբ նորա. և անդր՝ ի վեր ևս համբարձեալ հոգւովն, տեսանէր այլ ծնունդ, որով յաւիտենից ենէք նորա՝ ի ծոցոյ Հօր[2]։ Այլոմն տեսանէր զկուսութիւն մօրն զԱմմանուէլին՝ զԱստուած ընդ մեզ՝ երևեալ՝ ի կուսական արգանդէ, մանուկ սքանչելի, և Աստուած անուն նորա[3]։ Այլ ոմն տեսանէր

1 Սաղմ. ԻԱ. 26, 27 և որ՝ ի կարգին։

2 Միք. Ե. 2։
3 Եսայ. է. 14։ Թ. 6։

զնա մտեալ՝ի տաճար նը՝, և այլ ոմն փա-
ռաւորեալ՝ի հրովմ, յորում պարտեցաւ մահ՝։
Պէաել քարոզել զհրաշապատումն նորա, ոչ
լռեցին առ նմին և զարհամարհանս։ Ցեսին
զնա վաճառեալ. չինաց զանխուլ՝ի նոցանէ և
թիւ և գինք երեսուն արծաթոյն որով վա-
ճառեցաւն [3]։ Ի նմին ժամանակի՝ յորում
հայեցեալ տեսին զնա բարձրեալ և ահաւոր,
տեսին զնա՝ի նախատինս և անծանօթ՝ի մէջ
մարդկան. տեսին զնա հիացումն աշխարհի՝
եթէ առ նուաստութեանն և եթէ առ մե-
ծութեան, յետին՝ի մարդկանէ, այր մի՝ի
հարուածս՝ վերացուցեալ զմեզս ամենեցուն
յուս իւր. բարերար առ ամենեսին, և ան-
զոսնեալ յամենեցունց. անչքացեալ առ վիրաց
իւրոց, և վէրք նորա բուժիչք խոցուածոց մե-
րոց. համարեալ մահապարտ, վարեալ՝ի տան
Ջանս ընդ անօրէնս, որպէս գառն անմռունչ
՝ի սպանդ մատնելոյ զանձն, և ծնանել նմա
զաւակս երկայնակեացս, և զվրէժ առնուլ
յանհաւատ ժողովրդենէ իւրմէ [4]։ Նա զի մի
ինչ առանց գուշակութեան ճեասցէ, նշանա-
գրեցին և զթիւ համարոյ ամաց գալստեան
նորա [5]. մինչ զի հարկ է զի շլացութեամբ
հարեալ իցեն՝ որք անծանօթ լինին՝ի նմանէ։

1 Մաղ. գ. 1։
2 Եսայ. ԺԱ. 10։ Ծգ. 9։
3 Զաքար. ԺԱ. 12, 13։
4 Եսայ. ԾԲ. 13։ Ծգ։
5 Դան. թ։

Ել միայն գուշակէին մարգարէքը Ա՛րիստոս, այլ և ինքեանք օրինակք եղեն նորա, տպաւորեալ յանձինս զգաղտնի խորհուրդն, և առաւել զնոսայն։ Զոգեաս աւետեաքին նոքա հաստատեցան վասն արդարութե՛ն, և՛ չարչարանս անդ յայտ արարին զպատճառս հալածանացն տեառն մերոյ՝ զանաւղութիւնն և զձշմարտութի՛ն։ Ա՛ստպառնալեաց մահու տատաներ նղնա և նղնսէ։ յայսն կատականաց Թողաւնասայի ժողովրդեան և Թագաւորաց, զոր և ապաառ յապուրդ կատաղութեան իւրեանց կալեալ սղոցեցին, ըստ որում զրոյց հաւաստի տան զայսցանէ աւանդութիւնք Ա՛րկէից։ Զարկոծեցաւ Յակոբոս Յովիդայեայ։ յերաշխեպս վշտաց դներ նզնկնէլ։ անպատուեմ էին և անհատ աղէտք նյրեմիայի։ երկեցս՝ի մէջ առիւծուց ընկեցաւ Դանիէլ։ Ա՛նեաքին սոքա տարան Թշնամանաց և տանջանաց, և ցուցին աւետեաքին յանձինս իւրեանց, Թէ Թէպէտ առ հաստատութի՛ն նախնոյ խօԹամիտ ժողովրդեան հարկ էին ժամանակիս բարութիւնք, սակայն քաջքն Ա՛սրայէլ և գերածայրեալքն յանարատութեան վարս՝ անանէին և անդ ուրեմն՝ի հաց նեղութեան, և ըմպէին կանխաւ՝ի սրբութիւն անձանց յանապակէ անտի խաւնելոյ Աղուոյն Ա՛ստուծոյ. և զառնութիւն անապակին այնչափ էր, որչափ Ա՛րիստոս վեհապոյն էր ա-

ՌՆԵԵՑՈՒՆ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ ։

Բայց զօրհնութիւնն, որ պատրաստեալ էր հեթանոսաց՝ յայտնագոյն և տեսին մարգարէք, և տողեցին սքանչելապէս ։ Յուցաւ Նայեայ արմատն Յեսսեայ և Դաւթի՝ ի նշան ազգայ և ժողովրդոց, զի՝ ի նա յուսասցին ամենեքին[1] ։ Այն այն՝ ի հարուածս՝ որոյ վիրօքն բժշկեալ էաք, կարգեալ էր Աւետարանն ի ստուծոյ՝ ի լուսանալ հեթանոսս* ցօղովն սրբութեան, այսինքն է արեամբն իւրով և մկրտութեամբ ։ Որանան Թագաւորք յահեղ փառացն նորա, և կարկեն զբերան իւրեանց[2] ։ Զգիք որ ոչ լուան վնմանէ՝ տեսանեն զնա, և որ ոչն Ճանաչէին՝ հրաւիրին հայել՝ ի նա ։ Ահա է վէր կայութիւն հեթանոսացդ, նա իշխան և հրամանատար ազգացդ ։ Յաւուրս նորա յարեսցին՝ ի ժողովուրդ տեառն ազգ մի անծանօթ, և ընթացցին առ նա հեթանոսք յամենայն ծագս երկրի[3] ։ Ահա է արդարութիւն Աւետեաց որ բարձրացաւ իբրև զլոյս, և փրկութիւն Աւետեաց որ որպէս զջահ վառեսցի ։ Տեսցեն հեթանոսք զարդարն, և ամենայն Թագաւորք

1 Եսայ. ԺԱ. 10։

* Զբանն Եսայեայ "Ա յնպէս զարմացին ազգք բազումք "՝ի վերայ քո,,, ընթեռնու Լսաւին "Լուացէք զազգս բա-

"զումս" . ԾԲ. 15 ։

2 Եսայ. ԾԲ. 13, 14, 15 ։ ԾԳ ։

3 Անգ. ԾԵ. 4, 5 ։

ծանիցեն զայրն որ սքանչելին է . ՚ի մարգա-
րէութիւնս Եհովիա՝ ։

Նայց աւանիկ տիրապէս ևս յանդիմանի
տիպ կերպարանին ։ Զայր մի սքանչելի հեղու-
թեամբ, զեղապանձ օրինակաւ ընտրեալ Յա՛ս
տուծոյ և հաձոյ նորա, պատմէ հեթանոսաց
զդատաստանս. ակն ունին օրինաց նորա կղզիք.
(այսպէս անուանէին Հրեայքզ աշխարհակ և զաշ-
խարհս հեռաւորս ։) Ա՛ր աղաղակեսցէ, և մի՛
ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա. զի այնչափ
հեզ լինիցի և քաղցր ։ Ո՛չ էղէգն ջախջախեալ
մի՛ փշրեսցէ , և զպատրոյկն առկայծեալ մի՛
շիջուսցէ . զանանկն և զմեղաւորն նա ոչ
հարստահարեսցէ , այլ յառաջ կացեալ կո-
չեսցէ զնոսա գորովական ձայնիւ , և նեցուկ
ամրութեան լիցի նոցա աջ նորա բարերար ։
Նացցէ զաչս կուրացելոց , և հանցէ ՚ի բանտէ
զգերեալս [2] ։ Ա՛ստ բարութեանն նոյնպէս լիցի
և զօրութիւն նորա , քանզի և կնիք պատկերի
է նորա զքաղցրութիւն ընդ զօրութեան լը-
ծորդել. յաղագս որոյ և ձայն նորա թէպէտ
դաշն և քաղցր՝ ծագաց ՚ի ծագս ժամանեսցէ
՚ի սուղ ժամանակի , և առանց աղմուկս յու-
զելոյ զդղրդեսցէ զամենայն երկիր ։ Ա՛յլ մեր-
ժեսցէ , և ոչ սաստեսցէ , և զոր ոչ Հանապէին
մինչ դեռ՚ի Հրեաստան էր՝ եղիցի հաստատու-

1 Եսայ. կբ. 1 , 2 ։
2 Աքտ. խբ. 1 , 2 , 3 , 4 , 5 , 6 ։

թիւն ուխտի ժողովրդեան իւրոյ, և լոյս ա-
մենայն հեթանոսաց [1]: Յաւուրս հրաշափառ
թագաւորութեան նորա մի ժողովուրդ կազ-
մեցեն տեառն և Ա.յորեստանեայն և Ա.դիպ-
տացին և Ա.սորայելացին [2]. Ա.սորայել խառ-
նեացին ամենեքեան, ամենեքեան սրբեացին:
Ել և ես լցեալ Ա.ստուածով քաղաք առանձին.
նկարագիր է նա նորոյ միաբանութեան՝ ուր
ժողովեսցին յամենայն ազգաց Ա.ետարանիչք
կանգնեացին Ա.ւրօպայ, Ա.մերիկեայ և Ա.սիոյ,
և դիցէ Ա.տուած զինշան իւր յաւետարա-
նիչսն յայտնել հեթանոսաց զփառս իւր: Ել
և ես կոչեացին ընտրեալքն յանուն Ա.սորայելի.
այլ անուն տացի նոցա, և յայտնի լինի լոյսն
աւետեացն, և յարագուարճ խնդութիւն ե-
ղիցի անդ: Ա.սպանեացի քահանայութիւն
յազգէ Ա.հարոնի, և Ա'ի միջոյ հեթանոսաց յա-
րիցեն քահանայք և ղեւտացիք [3]: Ա.ոխանակ
առաջինն զոհիցն և պատարագաց նորա մատուսցի
պատարագ սուրբ և հաճոյական [4], և ծանիր-
ցեն ամենեքեան վասն որոյ երգեցաւն Ա'ի
Ա.աւետ քահանայապետ ումն ըստ նորոյ օրի-
նաց: Ա.յգի արդարն յերկինից որպէս ցօղ յեր-
կիր, և բղխեսցէ երկիր զբողբոջ նորա, և եղիցի
փրկիչ, և ծնցի ընդ նմա արդարութիւն:

1 Եսայ. խթ. 6: 2, 3=11: կե. 1, 15, 16: կշ. 19=21:
2 Անգ. ժթ. 24, 25: 4 Մալաք. Ա. 10, 11:
3 Անգ. կ. 1=11: կԱ. 1,

Աբիմելք և երկիր միաբանեցին ՚ի ծնունդ նորա, և զոգեաս միանգամայն երկնեցին զնա՝ զերկնաւորն՝ միանգամայն և զերկրաւոր։ Զոր հանդէս առաքինութեան փայլեցեալ յաշխարհի ՚ի գնացս նորա և ՚ի բանս. և շնորհք նորա ծաւալեալ՝ դրոշմեցեալ զկրօնս նորա ՚ի սիրտս մարդկան։ Վոխակ զամենայն գալըստեամբ նորա, և երկնաւոր Աստուած յանձն նորա, զի նմա կրկնեցցի ամենայն ծունր, և խոստովան լինի ամենայն լեզու զմեծ նորա զնշխարհութիւն[1]։

Զանկ փոքր ՚ի շատէ յառաջ բերեալ զհրաշապատումն զոր յայտնեաց Աստուած մարգարէից յաւուրս Թագաւորաց որպէս ՚Ներեմ, զոր որում յայտնեալ էր և ՚Ներեմ նախ քան զամենեսեան։ Նախատես վիպասքեցին ամենեքին զոգա զՀառաս պատմութեան Աստուծոյ, որ հանդերձեալ էր լինել և որպէս Աբրահամու և ՚Ներեմ։ Զոր պէս ՚ի գլուխ եղանէ ամենայն ինչ զոր յաւաջագոյն գիտութեան կամացն Աստուծոյ։ Զոր որ ցուցանէ կանուխ որպէս Աբրահամու, ցուցաւ վկայեալ և որպէս ՚Ներեմ. և խոստացաւ նմա Թագաւորութիւն անվախճան։ Զծառայութիւն աստուածգիտութեան ընդ ամենայն երկիր արդարեալ և նշան եղ հաւատոյ գալըս-

1 Սաղմ. ճԹ. 4։ Եսայ. Խե. 8, 23, 24։

տեան նորա։ Ը. որդեգրութիւն հաւատոյ հեթանոսաց և զօրհնութիւն ամենայն ազգաց աշխարհի՝ զիստուածգեաղն Աբրահամու Իսահակայ և Յակոբայ հաստատեաց վերըստին, և՝ ի նոյն ակնկալեալ ինայ ժողովուրդն։

Յայնմ հետէ և առ յապա առաջնորդէ նա զայս Աստուած հրաշալի և օրինակաւ։ Նոր ուխտ դնէ ընդ Իսրաէլ, և պարտս լինի բառանձնէ թևաւորիկել նմա և որդւոց նոցա՝ եթէ կացցեն՝ի պատուիրանին որ առանդեցաւ նոցա՝ի ձեռն Մովսեսի. ապա թէ ոչ՝ ապառնոյ խիստ պատուհաս՝ի առնդամանեքն այնոցիկ՝։ Իսրաէլ նախ զջալ առնու զպատուհասիցն, որ առ սակաւ մի ժամանակ մոռացաւ զպիեալն՝։ Նայց քանզի ապաշխարութեամբն քաւէ զանցանսն, ընդ զնա բարութեամբք, նախապիծ օրինակ եդեալ զնա Թագաւորաց։

Ուղղի Թագաւորութիւն՝ի տան նորա։ Նրանեալ էր Սողոմոն ցորչափ հայրենականացն պատ հետևողաւաքինութեանց, այլ զեղծաւ՝ի ծերութեան իւրում։ Ինայէ նմա Աստուած վասն Իսրաէլ ծառայի իւրոյ. բայց և յայտառնէ թէ պատժեսցէ զնա՝ի զաւակէն նորա [3]։

Խելամուտ լինի առնէ զծնողս, զի ըստ ան-

1 Ր. Թագ. Է. 8, եան։ 2 Ր. Թագ. Թ. 12. եան։ Գ. Թագ. Թ. 4. եան։ Ր. Մնաց. է. 17. եան։ 3 Գ. Թագ. ԺԱ։

քնին դատաստանաց իւրոց զվարձ վաստակոց նոցա և զմեղացն պատուհաս ձգէ և յետ մեռանելոյ նոցա, և հնազանդէ զնոսա օրինաց իւրոց կարևոր սիրելեօքն, իմա սիրով ազգատոհմին նոցա։

Ի կատարումն աստուածային բանից անսայ Ովբովամ ըստ յանդուգն բարոյից իւրոց անմիտ խոհրդոյն, և կորուսանէ զիշխանութենի՛ւ վերայ տասն ցեղից՝։ Այլ՛ի նշկահել նոցա և յորոշել զանձինս Աստուծոյ իւրեանց և՛ի թագաւորէ, կացին միաբան յուխտին և՛ի հաւատոն Աբրահամու որդիքն Յուդայ հաւատարիմք Աստուծոյ, և Ռաւթէ ընտրելոյ նորա։ Ի նոսա յարեցան և որդիքն Լեւեայ և Ենիամինի, և եկաց թագաւորութիւն ժողովրդեան տեառն յանուն թագաւորութեան Յուդայ, և պաշտեցին խնամով աստուածութեան զօրէնսն Մովսեսի։

Ի վերայ այնչափ դիցամոլութեանց և ամբարշտութեանց տասն ցեղից ոչ մոռանայ Աստուած զուխտ իւր որ ընդ Աբրահամու, ընդ Ոսահակայ և ընդ Յակոբու։ Ակ՛ի սպառանհետացան՛ի նոցանէ օրէնք Աստուծոյ՝ որ ատեպ յապաշխարութիւն կոչէր զնոսա բազմարուեստ նշանօք և ազգի ազգի քարոզութեամբք մարգարէից։ Այլ տեսեալ զնոսա

1 Գ. Թագ. ժԲ։

սալացեալս՝ի չարիս իւրեանց, ոչ ևս երկայնաման։ Ա՝ տարէ զնոսա՝ի խոստացեալ երկիրն, սպառնացեալ նոցա անդարձ վտարանդութիւն[1]։

Ընդ երեսս Յովհիթայ որ հանդիսի յառաջին ամի գերութեան Իսրայէլացւոց, ցուցանէ զքաղաքավարութիւն ընտրելոյն յապըստամբ ցեղս անդ։ Ա՝ այր սքանչելի՝ որ բնակէր՝ի միջի նոցա, և յառաջ քան զգերութիւնն զօրացաւ անարատ պահել զանձն՝ի դիցամոլութենէ եղբարց իւրոց, և ստէպ կալ օրինաց, և ելանել պաշտել զՅաստուած Հայրսուսաղէմ՝ի տաճարն, ոչ յետս ընկրկեալ՝ի բարւոքն առաջարկութենէ՝ի վատթար օրինակաց կամ յերկիւղէ սպառնալեաց[2]։ Ա՝յլ և՝ի գերութիւն վարեալ, զնոյն առաքինացաւ բարեպաշտութիւն՝ի հալածանս անդ հանդերձ տամբ իւրով։ Պատկեաց Յաստուած առատին սքանչելապէս զհաւատս նորա և զորդւոցն, յայտ արարեալ թէ կարող է և՝ի գերութեան և՝ի հալածանս մանաւանդ զծառայս իւր օրհնութեան օրինացն՝ի վեր՝ի բարձրագունից մտածութիւն ամբառնալով զնոսա՝ի չարակրութեանցն։

Հանդէս վարուց Յովհիթայ և վարդապետութիւն նորա՝ի խրատ էին Իսրայէլացւոց,

1 Գ. Թագ. ԺԴ. 6, 7, եև։
2 Տովբ. Ա. 3, 6, 7։ Բ. 12, 21, 22։

զի գոնեայ ինեըքոյ գաւազանին ի միտ առ-
ցեն եթէ ձեռն ամենակալին է՝ որ հարկանէ
զնոսա. այլ գոգցես ամենեքեան ի խաստաըը-
տութեան իւրեանց կացին։ Ոգա նմանող
գտան և Յուդայեանքն, փոխանակ զի պարտ
էր զգուշանալ նոցա՝ հայհոյեալ ի պատուհաս
այլոցն։ Զուարճացաւ Ներսէս ազգ առնել
նոցա ի ձեռն մարգարէից իւրոց, զորս առա-
քեր հետզհետէ կանխեալ ի գիշերին և ի վա
ղըրդայն՝ որպէս և ինքն ասէ, զի յայտ արասցէ
զհայրական խնամն իւր։ Այլ ապերախտու-
թեամբն նոցա սրտմտեալ սպառնայ գնալ և
ընդ նոսա որպէս ընդ ապստամբ եղբարս նոցա։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳՈՒԵՐՈՐԴ

Վաղք և պաշտօն մարգարէից, և գառաստանք Աստուծոյ յայտնաբանեալք ի մարգարէութենն։

Վ ԵՑ ի ինձ քան զամենայն ի Չառս պատմութեան ժողովրդեանն Աստուծոյ ապաստահարկութիւն մարգարէից։ Վրք մեկնեալք ի ժողովրդենէ, մենաւորք և այլասարագք հանդերձիւ՝, խումբ արարեալ բնակէին միաբան ընդ աստուածատուր առաջնորդաւ։ Նպատոյ և ձգնազգեցիկ կեանք նոցա տպաւորէր զմեռելութիւն վարուց որ Երիստոսիւն աւետարանելոց էր։ Երաշելի օրինակաւ յայտնէր նոցա Աստուած զանձն իւր, զոր և ամենայն ժողովուրդն առնոյր ի միտ։ Այլ ի վեր քան զամենայն նուագս յորդեաց զեղաւ մարգարէութեանն ընդդէմ յաման ամբարշտութիւնէ ժողովրդեանն, ի ժամանակի՝ յորում թուէր իմն թէ դիցն պաշտօն խափանեացէ ի տպատ զան

1 Ա. թագ. ԻԸ. 14։ Գ. թագ. ԺԹ. 19։ Դ. թագ. Ա. 8։ Եսայ. Ի. 2։ Զաք. ԺԳ. 5։ Ա. թագ. Ժ. 10։ ԺԹ. 19, 26։ Գ. թագ. ԺԸ։ Դ. թագ. Բ. 3, 25։ Դ. 10, 38։ Զ. 1, 2։

տուածային օրէնսն։ Յայնպիսւոմ թշուառութեան ժամանակի յառաջ կացեալմարգարէից՝ հնչեցուցանէին առաջնայն ուստեք ՚ի ձայն և ՚ի գիր զսպառնալիս Աստուծոյ, և վկայէին զչմարտութեան նորա։ Յաճէին ՚ի ձեռս աւանեցուն գիրք մատենից նոցա և պահէին զգուշութեամբ յաւելուածական յիշատակ ազգաց յազգս[1]։ Որք հաւատարիմք էին Աստուծոյ, զհետ գնային նոցա. զի և յԱրտաքսերքսէս անդ յորս թագաւորէր կռապաշտութիւն՝ ընտիրքն ՚ի նոսա պահէին միաբան ընդ մարգարէս զշաբաթս և զտօնս մովսիսական գիրս[2]։ Նոքա խրախուսէին զերկիւղածս հաստատուն կալ յուխտին. յորոց և բազումք տարան տանջանաց մահու. ուր և ըստ օրինակի նոցա ՚ի վաստիարեալ ժամանակին, յաւուրս աւեր թագաւորութեան Անտիոքայ[3] անթիւ բազմութիւն հաւատացելոց հեղին զարիւնս իւրեանց ՚ի վերայ Աշխարհութեան. որպէս զի յառաջին ժամանակի վերկայեցաւ Աշխարհութիւն։

Այս օրինակ յաւերժանայր ակուամբ Աստուծոյ. Հանապազ կացին մարգարէք ՚ի միջի նոցա, և բազմութիւն հաւա

1 Եբ. ԺԷ. 14։ Եսայ. Լ. 8։ ԼԴ. 16։ Երեմ. ԻՌ. 30։ ԻԶ. 2, 11։ Ռ. Մնայ. ԼԶ. 22։ Ռ. Եզր. Ա. 1։ Դան. Թ. 2։

2 Գ. Թագ. Դ. 23։

3 Գ. Թագ. ԻԱ. 16։

ատացեալոց նահատակէր յաստուածային օրէնս միաբան ընդ նոսա, և ընդ քահանայն զոհա մատոյցս որ կային ՚ի պահպանութիւնս օրի- նացն որպէս աւանդեալ էր նոցա յՀարոնէ հետէ յաւրէնայն նախորդացն իւրեանց։ Ո՛ր կարի էակ ամբարիշտ թագաւորօք անգամ, որպիսի ոք Ո՛քազն էր և Մանասէ, չբողոքէ նմասյն և կամ այլ ոք ՚ի մարգարէից՝ եթէ երբէք դադարեալ էցէ օրէնն Թլփատութեանն՝ որ կնիք էր ուխտին, որով և կնքեալ էր ըստ սրբոյն Պօղոսի բովանդակ պահպանութիւն օրինացն։ Ո՛յլ և ոչ զշաբաթոյց և զայլոց տօնից է տեսանել երբէք զլուծուածն. զի թէ- պէտ և փակեաց Ո՛քազ առ ժամանակ մի զը- դուռն տաճարին [1], և սուղ ինչ դադար տուաւ զոհից մատուցման, սակայն բռնադատու- թեան էր գործն, և չզօրէր խնուլ զբերանս որոց գովէին և խոստովան լինէին յայտ յան- դիմանութեամբ զանունն Ո՛ստուծոյ. քան- զի և ոչ եթող Ո՛ստուած զի լռեացեն երբէք ձայնքս ՚ի միջոյ ժողովրդեան իւրոյ. և յորժամ ձեռն էարկ Համան կործանել զժառանգու- թիւն տեառն, և փոխել զխոստմունս նորա, և դադարեցուցանել զօրհնութիւնս՝ նորա [2], յայտ էակ է եթէ զիարդ արգել խափանեաց զնա Ո՛ստուած՝ ՚ի գործոյ անտի։ Ոչ ինչ նուազ

[1] Եսթ. ԺԴ. 9։ [2] Բ. Մնաց. ԻԸ. 24։

հանդիսացաւ հզօր զօրութիւն նորա՝ի կամել անդ Նաւուքոսի բառնալ զկրօնս Աստուածպաշտութեան։ Ոչխարի ինչ խօսեցան մարգարէքն առ Քրիստ և առ Աւետարան՝ի հատուցումն չհմարտութեան կրօնիցն և անաւրէնութիւն աստուածապաշտ կարգացն։ Յայտնի իսկ յիշատակէ գիր զբանս տեառնողացն, որ խօսէին առ նոսա յանուն Աստուծոյ Իսրայէլի, որ գրեալ էին աւանիկ՝ի գիրս բանից աւուրց Թագաւորացս։ Նմին Աւետարան անդամ զղջացեալ ապաշաւեաց, և առաւել անդրկմտելի էցե, զի յոլովք՝ի հաւատացելոց կացին ճեացին հաւատարիմք՝ի հպատակել օրինաց. և այնչափ էր պնդութիւն իշխանութեան ընտիր կողմանն, զի՝ի դատել անդ զԹագաւորս՝ի մահուան նոցա, համարձակութեամբ վճռէին, եթէ անարժանք են Թագաւորքն այն ամբարիշտք գերեզմանացն Իսաւելի և բարեպարիշտ յաջորդաց նոցա։ Ոչ՝ի թէպէտ և գրեալ է, եթէ Աքազ՝ի քաղաքին Իսաւելի Թագեցաւ, սակայն և այս նշանակի անդէն յայտ յանդիման, եթէ ոչ եգաւնա՝ի գերեզման Թագաւորացն Իսրայէլի։ Նա ոչ Աննասէ զերծ գտաւ՝ի դատաւկնքոյ աստի, Թէպէտ և ապաշխարեալ էր, զի արձան կացչէ անմոռաց ահագին եղեռանն որով գարշա-

ցաւ ՚ի կեանս իւրում։ Եւ զի մի՛ կարծեսցէ ոք եթէ բազմութիւն նոցա որ հաւատարեմ կացին ՚ի պաշտել զ՚ստուած յայտնապէս և միաբան ընդ մարգարէից՝ թերացեալ էին բնաւ յօրինաւոր յաջորդութենէ հովուացն իւրոց, յայտնաբարբառ յիշատակութեամբ խօսի Եզեկիէլ յերկուս տեղիս զըմհամատուցիչն և զորդւոց Ադովնիայ, որ ՚ի մոլորութեան ժամանակին՝ «պահեցին զպահպանութիւն Թիւնս սրբութեանց»։

Ապա՛ի թէպէտ և մարգարէք և հաւատացեալք քահանայք, և ժողովուրդն ընդ նոսա հակէին օրինաց, այլ որ կործանեացն զ՚սրայէլ ՚ի կռամոլութի՝ բազում անգամ մոլորեցուցանէր և զիշխանս և զառաջինն Յուդայ։ Եւ թէ և մոռանային զ՚ստուած հարց իւրեանց թագաւորքն Յուդայ, այլ նա համբերէր նոցա երկայնմտութեամբ վասն Դաւթի ծառայի իւրոյ։ Յանապատ յուշ աճէր նոցա զԴաւիթ. և յորժամ որդիքն զհօրն բերէին զնմանութիւն՝ աքանչելագործէր նոցա մեծապէս։ Դակ երբեմն օտարացան ՚ի հայրենի առաքինութենէն, ծանեան զջերութիւն անխոնարհելի ձեռին տեառն, որ ծանրացաւ ՚ի ՚ի վերայ նոցա, որում և գաւազան սրտմտութեան եղեն թագաւորքն Ասորեստանեայց և Բաբելոնի։ Դակ ՚ի յաշխարհել և ևս

